Ա Զ Դ Ա Գ Ի Ր

ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՀՀ, ք. Երևան 0010, Նալբանդյան 48, հեռ.՝ (+374 10) 59-20-20, ֆաքս՝ (+374 10) 59 20 64, էլ. փոստ՝ info@armbusinessbank.am, կայք՝ www.armbusinessbank.am

Թողարկողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական տեսակը

ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՀՀ, ք. Երևան 0010, Նալբանդյան 48, հեռ.՝ (+374 10) 59-20-20, ֆաքս՝ (+374 10) 59 20 64, էլ. փոստ՝ info@armbusinessbank.am, կայք՝ www.armbusinessbank.am

Տեղաբաշխողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական տեսակը

Իններորդ տրանշ

Արժեթղթերի տեսակը	անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը	50,000 հատ
Արժեթղթերի անվանական արժեքը	100 ԱՄՆ դոլար
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը	5,000,000.00 ԱՄՆ դոլար
Արժեկտրոնը	5.8%
Շրջանառության ժամկետը	42 ամիս
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը	եռամսյակային

Տասներորդ տրանշ

Արժեթղթերի տեսակը	անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը	25,000 հատ
Արժեթղթերի անվանական արժեքը	10,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը	250,000,000.00 ՀՀ դրամ
Արժեկտրոնը	10.5%
Շրջանառության ժամկետը	42 ամիս
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը	եռամսյակային

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 10

Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ 10

Բանկի անվանումը և կապի միջոցները 10

Թողարկողի համառոտ պատմությունը 11

Բանկի ռազմավարությունը 12

Բանկի կանոնադրական կապիտալը 13

Բանկի բիզնեսի համառոտ նկարագիրը 14

Բանկի կազմակերպական կառուցվածքը 17

Բանկի ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը 19

Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիր 19

Բանկի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ 22

Բանկի աուդիտ իրականացնող անձի մասին համառոտ տեղեկատվություն 23

Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն 24

Բանկի պարտատոմսերի հիմնական տվյալները 26

Պարտատոմսերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը 27

Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները 28

Բաժին 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 30

Ռիսկային գործոններ 30

Հիմնական տեղեկատվություն 32

Տեղեկատվություն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ անվանական պարտատոմսերի վերաբերյալ 32

Արժեթղթերի տեսակը և դասը 32

Երկիրը, որի օրենդրության համաձայն թողարկվում են արժեթղթերը 33

Արժեթղթերի ձևը 33

Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը....33
Թողարկման արժույթը....33
Արժեթղթերից բխող իրավունքների նկարագրությունը....33
Առաջարկվող արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն....35
Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները.... 38
Իրավասու մարմնի որոշման համառոտ բովանդակությունը թողարկման մասին....42
Շրջանառության սահմանափակումներ....42
Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկումը....43
Առաջարկի ժամկետները և պայմանները....45
Բանկի կողմից թողարկվող անվանական պարտատոմսերի ընդհանուր ծավալը....45
Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը....45
Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացի նկարագրությունը....46
Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը....47
Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը....48
Ձեռք բերման հայտի նվազագույն և առավելագույն գումարները....48
Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները....48
Առաջարկի արդյունքների հրապարակման ձևը և ժամկետների ամբողջական նկարագրությունը....49
Նախապատվության իրավունքից օգտվելու գործընթացի նկարագրությունը....49
Պարտատոմսերի տեղաբաշխման պլանը.... 50
Առաջարկի գինը.... 50
Տեղաբաշխումը....52
Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը....53
Առևտրին թույլտվությունը....53
Առևտրի շուկաները....54
Շուկա ստեղծողները....54
Լրացուցիչ տեղեկատվություն....54

Բաժին 3. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....55
Անկախ աուդիտորները.....55
Ռիսկային գործոններ.....55
Տեղեկատվություն Բանկի մասին.....61
Բանկի ֆիրմային անվանումը.....61
Բանկի գրանցման վայրը և պետական գրանցման համարը.....61
Բանկի ստեղծման ամսաթիվը.....61
Բանկի գտնվելու վայրը.....61
Կապի միջոցները.....62
Բանկի հիմնադրման երկիրը, մասնաճյուղային ցանցը.....62
Բանկի տնտեսական նորմատիվները.....65
Բիզնեսի նկարագիրը.....66
Հիմնական գործունեությունը.....66
Հիմնական շուկաներ.....69
Բանկի կառուցվածքը.....74
Զարգացման վերջին միտումները.....74
Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները.....75
Բանկի կանոնադրությամբ Բանկի կառավարման մարմիններին վերապահված իրավասությունները.....76
Տեղեկություններ Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ.....82
Հսկող անձինք.....87
Տեղեկատվություն Բանկի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին.....87
Պատմական ֆինանսական տեղեկատվություն.....87
Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները.....88
Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն.....88
Էական պայմանագրերը.....90

Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը 90
Այլ տեղեկատվություն 90
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 92
Հավելված 1. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կազմակերպական կառուցվածքը.....92
Հավելված 2. Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևեր..... 93
Հավելված 3. Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /իրավաբանական անձ/..94
Հավելված 4. Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր/ 96
Հավելված 5. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվություններ.....98

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Արսեն Միքայելյան (անուն, ազգանուն)	**Խորհրդի նախագահ** (պաշտոնը)	(ստորագրություն)	03.12.2019 (ամսաթիվ)
Արզուման Հարությունյան (անուն, ազգանուն)	**Խորհրդի անդամ** (պաշտոնը)	(ստորագրություն)	03.12.2019 (ամսաթիվ)
Վիտալի Գրիգորյանց (անուն, ազգանուն)	**Խորհրդի անդամ** (պաշտոնը)	(ստորագրություն)	03.12.2019 (ամսաթիվ)
Սերգեյ Արզումանյան (անուն, ազգանուն)	**Խորհրդի անդամ** (պաշտոնը)	(ստորագրություն)	03.12.2019 (ամսաթիվ)
Ալիկ Չիրկինյան (անուն, ազգանուն)	**Խորհրդի անդամ** (պաշտոնը)	(ստորագրություն)	03.12.2019 (ամսաթիվ)
Սևակ Պետրոսյան (անուն, ազգանուն)	**Խորհրդի անդամ** (պաշտոնը)	(ստորագրություն)	03.12.2019 (ամսաթիվ)
Արտավազդ Սարգսյան (անուն, ազգանուն)	**Վարչության նախագահ** (պաշտոնը)	(ստորագրություն)	03.12.2019 (ամսաթիվ)
Մանվել Սահակյան (անուն, ազգանուն)	**Վարչության նախագահի տեղակալ-Ֆինանսական դեպարտամենտի տնօրեն, Վարչության անդամ** (պաշտոնը)	(ստորագրություն)	03.12.2019 (ամսաթիվ)

Նշան Գրիգորյան	**Վարչության նախագահի տեղակալ, (Կորպորատիվ բիզնեսի կառավարման դեպարտամենտի աշխատանքների կորդինացնող) Վարչության անդամ**		03.12.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոնը)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Մովսես Էլոյան	**Վարչության նախագահի տեղակալ (Գանձապետական դեպարտամենտի և Միջազգային գործառնությունների դեպարտամենտի կորդինացնող), Վարչության անդամ**		03.12.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոնը)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ալյոնա Ստրատան	**Վարչության նախագահի տեղակալ (Մանրածախ բիզնեսի զարգացման դեպարտամենտի, Տարածքային զարգացման դեպարտամենտի, ՄԲ և ՓԲ վարկային գործարքների անդերրայթինգի վարչության և Հաճախորդների բիզնես պրոցեսների կառավարման բաժնի կորդինացնող), Վարչության անդամ**		03.12.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոնը)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Նարինե Սարգսյան	**Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ**		03.12.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոնը)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Անի Ղամբարյան	**Ռիսկերի կառավարման և հսկողության դեպարտամենտի տնօրեն, Վարչության անդամ**		03.12.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոնը)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Արտավազդ Սարգսյան	**Վարչության նախագահ**		03.12.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոնը)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Բաժին 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես Ազդագրի ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը փաստաթղթային տարբերակով Բանկի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային էջում www.armbusinessbank.am:

1. Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ

1.1. Բանկի անվանումը և կապի միջոցները

1.1.1. Բանկի լրիվ ֆիրմային անվանումը

հայերեն՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն

ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество “АРМБИЗНЕСБАНК”

անգլերեն՝ “ARMBUSINESSBANK” Closed Joint Stock Company

1.1.2. Բանկի կրճատ ֆիրմային անվանումը

հայերեն՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ

ռուսերեն՝ ЗАО “АРМБИЗНЕСБАНК”

անգլերեն՝ “ARMBUSINESSBANK” CJSC

1.1.3. Բանկի գրանցման վայրը

Բանկի գրանցման վայրն է՝ ՀՀ, 0010, ք.Երևան, Նալբանդյան 48, գրանցման համարը՝ 40, տրված 10.12.1991թ.: Բանկի գտնվելու վայրն է ՀՀ, 0010, ք.Երևան, Նալբանդյան 48:

1.1.4. Կապի միջոցները

Հեռախոսահամար՝ (+374 10) 59-20-20, (+374 60) 37-25-00

Ֆաքս՝ (+374 10) 59 20 64

Էլեկտրոնային փոստ՝ info@armbusinessbank.am

Ինտերնետային կայք-էջ՝ www.armbusinessbank.am

Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Թողարկողին և պարտատոմսերին առնչվող հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ աշխատակից Արուսյակ Ռուբենյանի հետ կապի հետևյալ միջոցներով՝ հեռախոս՝ +374 10 592031, էլ. փոստ՝ arusyak.rubenyan@armbusinessbank.am:

1.2. Թողարկողի համառոտ պատմությունը

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն իր գործունեությունն սկսել է 1991 թվականի դեկտեմբերից և այդ ժամանակվանից ի վեր անցել է Հայաստանի տնտեսությանը բնորոշ բոլոր անցումային փուլերը:

1991 թվականի դեկտեմբերի 10-ին Բանկը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկում՝ ստանալով բանկային գործունեության թիվ 40 լիցենզիան:

Բանկը մինչև 2006 թվականը գործում էր՝ որպես «ՀԱՅԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ, որը հիմնադրվել էր Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ համաձայն 1994թ-ի դեկտեմբերի 14-ին կնքված հիմնադիր պայմանագրի, որով հանդես էր գալիս՝ որպես «ԱՐՄԻՆՎԵՍՏ» փայատիրական բանկի իրավահաջորդը, որը հիմնադրվել էր 1991թ. սեպտեմբերի 10-ին:

2006 թվականին «Ուկրպրոմբանկը» և «Ալֆա-Գարանտ» ապահովագրական ընկերությունը ձեռք բերեցին Բանկի՝ յուրաքանչյուրը 35%-անոց փաթեթները, իսկ 30% բաժնետոմսերի սեփականատեր դարձավ «Քրիսթի Մենեջմենթ» ընկերությունը:

2006 թվականի օգոստոսի 10-ին «ՀԱՅԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ վերոնշյալ բաժնետերերի արտահերթ ժողովում միաձայն որոշվեց Բանկը վերանվանել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ:

2009 թվականի մայիսին «Քրիսթի Մենեջմենթ» ընկերությունը գնեց «Ալֆա-Գարանտ» ապահովագրական ընկերության բաժնեմասը և «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ համալրեց Բանկի կանոնադրական կապիտալը 3,050 մլն դրամով: Այնուհետև, «Քրիսթի Մենեջմենթ» ընկերությունը, կանոնադրական կապիտալը համալրելով ևս 5,400 մլն դրամով, դարձավ Բանկի 86.99% բաժնեմասի սեփականատեր:

2011 թվականին «Քրիսթի Մենեջմենթ» ընկերությունը, «Ուկրպրոմբանկ»-ից ձեռք բերելով վերջինիս բաժնեմասը, դարձավ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ միակ բաժնետերը և կանոնադրական կապիտալը համալրեց ևս 4,050 մլն դրամով: Այնուհետև, 2014 թվականին Բանկի կանոնադրական կապիտալը համալրվեց 5,407.5 մլն դրամով՝ կազմելով 22,907.5 մլն դրամ (35,000 բաժնետոմս), իսկ 2016 թվականին՝ 8,467.0 մլն դրամով՝ կազմելով 31,374.5 մլն դրամ (41,120 բաժնետոմս):

2019 թվականին Բանկի կանոնադրական կապիտալը համալրվեց մոտ 8,636 մլն դրամով, որից մոտ 7,569 մլն դրամը լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու, իսկ 1,067 մլն դրամը՝ բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով (արդյունքում Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է մոտ 40,010 մլն դրամ՝ 51,040 բաժնետոմս):

1.3. Բանկի ռազմավարությունը

Բանկի առաքելությունն է բարձրացնել հաճախորդների, բաժնետերերի, աշխատակիցների և, ընդհանրապես, հասարակության բարեկեցության մակարդակը՝

պրոֆեսիոնալ ձևով մատուցելով բարձրակարգ բանկային ծառայություններ: Իր առաքելությունն իրագործելու նպատակով՝ Բանկը քայլելու է ժամանակին համահունչ, ինչը ենթադրում է նոր տեխնոլոգիաների ներդնում՝ աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու և գործառնական ռիսկը զսպելու նպատակով, աշխատակիցների անընդհատ վերապատրաստում, ժամանակակից, բարձրակարգ և որակյալ բանկային ծառայությունների մատուցում, ապահով և հուսալի ձևով հաճախորդների միջոցների կառավարում՝ հաստատելով նրանց հետ երկարաժամկետ կայուն հարաբերություններ:

Բանկի ռազմավարական նպատակներն են՝

- հիմնական ֆինանսական ցուցանիշների այնպիսի մակարդակի ապահովում, որը կնպաստի բանկային համակարգում առաջատար հնգյակի շարքում մեր դիրքի պահպանմանը և դրա բարելավմանը,
- ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում՝ դիմակայելու սպասվող արտաքին տնտեսական ճնշումներին և անորոշությանը,
- տեղեկատվական նոր անվտանգ տեխնոլոգիաների ներդնում, որը հնարավորություն կընձեռի ներգրավել նոր հաճախորդներ՝ պահպանելով մրցակցային գերակայություն,
- մասնաճյուղային ցանցի ընդլայնում,
- արդյունավետ գործող արհեստավարժ թիմի անընդհատ կատարելագործում:

1.4.Բանկի կանոնադրական կապիտալը

Բանկի կանոնադրական կապիտալը 30.09.19թ. դրությամբ կազմել է 40,010,409,120 ՀՀ դրամ, որը կազմված է 51,040 սովորական բաժնետոմսից, յուրաքանչյուրի անվանական արժեքը՝ 783,903 ՀՀ դրամ: 31.12.2018թ. դրությամբ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ 100% բաժնետոմսերի սեփականատերն է եղել Վիտալի Սարգսի Գրիգորյանցը: 19.02.2019թ. բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշման համաձայն՝ Վիտալի Գրիգորյանցը դարձել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ 95%

բաժնետոմսերի բաժնետեր, իսկ Արսեն Միքայելյանը՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ 5% բաժնետոմսերի բաժնետեր: 2019 թվականի կանոնադրական կապիտալի համալրումից հետո Վիտալի Գրիգորյանցի և Արսեն Միքայելյանի 95% և 5% բաժնեմասնակցությունը պահպանվել է:

1.5.Բանկի բիզնեսի համառոտ նկարագիրը

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն, գործունեությունը ծավալելով ՀՀ-ում ու ԱՀ-ում, առաջարկում է հետևյալ բանկային ծառայությունները.

- վճարահաշվարկային գործառնություններ,
- ավանդների ներգրավում,
- դրամական փոխանցումներ,
- հաճախորդների հաշիվների սպասարկում,
- վարկերի տրամադրում,
- արտարժույթի առք ու վաճառք,
- կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների ընդունում,
- ֆինանսական վարձակալություն (լիզինգ),
- առևտրային գործարքների (պարտքի) ֆինանսավորում (ֆակտորինգ),
- պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում,
- աշխատավարձային նախագծերի իրականացում,
- գործառնություններ պետական և կորպորատիվ արժեթղթերի շուկայում,
- ֆինանսական գործառնություններ միջբանկային շուկայում,
- բանկային երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրում,
- միջազգային ինկասո գործառնություններ,
- ինտերնետ-բանկինգ,
- մոբայլ-բանկինգ,
- «Բանկ-հաճախորդ» համակարգ,
- ապահովագրության ոլորտում գործակալական ծառայություններ,

- անհատական բանկային պահատեղերի տրամադրում,
- պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների սպասարկում,
- պետական նպաստների, կենսաթոշակների և սոցյալական ծրագրերի շրջանակներում հաճախորդների սպասարկում,
- ոսկու ձուլակտորների վաճառք,
- առարկայազուրկ մետաղական հաշիվների բացում և այլն:

Արդյունավետ համագործակցության և հետևողական աշխատանքի շնորհիվ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԻ գործունեությունը մշտապես առանձնանում է դրական արդյունքներով:

Բանկը իրականացնում է վարկավորում սեփական ռեսուրսներով, տարբեր կառույցների հետ կնքված համագործակցության պայմանագրերով և համաձայնագրերով նախատեսված ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում: Բանկը մշակել է այնպիսի վարկային պրոդուկտներ, որոնք հնարավորություն են տալիս բավարարելու թե՛ ֆիզիկական անձանց, թե՛ տնտեսության տարբեր ոլորտներ սպասարկող տնտեսվարող սուբյեկտներին:

Ճկուն ավանդային քաղաքականության շնորհիվ Բանկն անընդհատ ավելացնում է ժամկետային ավանդների բազան: 30.09.2019թ. դրությամբ ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների գծով Բանկը զբաղեցնում է առաջին տեղը ՀՀ բանկային համակարգում:

Ազատ դրամական միջոցները հիմնականում տեղաբաշխվում են բարձր իրացվելի ակտիվներում:

Բանկն իրականացնում է ֆինանսական գործառնություններ միջբանկային շուկայում, բանկային երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրում, ինչպես նաև միջազգային ինկասո գործառնություններ:

Բանկն իրականացնում է ինտերնետ-բանկինգ, մոբայլ-բանկինգ, «Բանկ հաճախորդ» համակարգերի սպասարկում, ինչպես նաև ապահովագրության ոլորտում գործակալական ծառայություններ:

Միջազգային հարաբերությունների ոլորտում Բանկն ակտիվ բանակցություններ է վարում արտասահմանյան թղթակցային, ներդրումային բանկերի և հիմնադրամների հետ՝ հարաբերությունների հաստատման, զարգացման և միջոցների ներգրավման ուղղությամբ:

Բանկը հանդիսանում է SWIFT s.c.r.l Համաշխարհային Միջբանկային ֆինանսական Հեռահաղորդակցության Միության (Society for Worldwide Interbank Financial Telecommunication) անդամ 2006 թվականից, իսկ 2012 թվականից գործարքների ծավալների ավելացման հետևանքով՝ նաև բաժնետեր: 2018թ. ընթացքում Բանկը բացել է թղթակցային հաշիվներ АО Телекоммерц Банк, Москва, Россия (նոստրո), АО RAIFFEISENBANK, Москва, Россия (նոստրո), ТРАНСКАПИТАЛБАНК ПАО, Москва, Россия (լորո) բանկերում: 30.09.2019թ. դրությամբ Բանկը թղթակցային հարաբերություններ ունի 30 բանկերի հետ, որից 20-ը ոչ ռեզիդենտ բանկեր են: Բանկը նոստրո թղթակցային հաշիվներ ունի 10 ռեզիդենտ և 19 ոչ ռեզիդենտ բանկերում, իսկ Բանկում լորո թղթակցային հաշիվներ ունեն 5 ռեզիդենտ և 4 ոչ ռեզիդենտ բանկեր:

Բանկը Money Gram, Unistream, Ria, Converse Transfer, և Intelexpress ֆիզիկական անձանց արագ դրամական փոխանցման համակարգերի միջոցով իրականացնում է ՌԴ ռուբլով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով փոխանցումներ: Բանկը հաճախորդների համար իրականացնում է միջազգային երաշխիքների, ինկասոների, ակրեդիտիվների սպասարկում: Հանդիսանում է «ԱրՔա» տեղական, MasterCard և ViSA INTERNATIONAL միջազգային վճարային համակարգերի անդամ:

Բանկը, հանդիսանալով «ԱրՔա», MasterCard Worldwide և VISA International վճարային համակարգերի լիիրավ անդամ, իրականացնում է պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում:

30.09.19թ.-ի դրությամբ Բանկը սպասարկում է 549 POS-տերմինալ, 95 ԱԳՄ, 38 ԱԳՓՄ և 14 ԱՓՍ:

Սեփական պրոցեսինգային կենտրոնի ներդնումը Բանկին հնարավորություն տվեց կրճատել քարտային գործառնությունների հետ կապված ծախսերը, ինչի շնորհիվ Բանկը կարողացավ առավել գրավիչ առաջարկություններով հանդես գալ շուկայում և ընդլայնել քարտապան հաճախորդների բազան: Քարտային բիզնեսի զարգացմանը մեծապես նպաստեց նաև կորպորատիվ և մանրածախ բիզնեսի ոլորտում Բանկի ակտիվությունը: Ինչպես նախորդ տարիներին, ներկայումս ևս ներդրվում են նոր և տարաբնույթ քարտային ծառայություններ, զեղչային նոր համակարգեր, խրախուսման և արագ սպասարկման նոր գործիքներ, ինչպես նաև ավելացվում են քարտերի սպասարկման կետերը Երևանում և ՀՀ մարզերում:

Ծառայությունների մատուցումն իրականացվում է Բանկի գլխավոր գրասենյակի, մասնաճյուղային ցանցի, բանկոմատների և POS-տերմինալների միջոցով:

1.6.Բանկի կազմակերպական կառուցվածքը


Բանկի կազմակերպական կառուցվածքը հետևյալն է:

ABB
ARMBUSINESSBANK

ABB
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
խորհրդի որոշմամբ
2019թ.



1.7. Բանկի ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը

հազ. ՀՀ դրամ

	30/09/19	31/12/18	31/12/17
Ակտիվներ, այդ թվում՝	**782,969,783**	**611,824,023**	**547,530,373**
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	***570,968,885***	***458,043,744***	***447,862,371***
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	484,024,526	403,129,889	347,407,380
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	20,512,412	10,932,244	6,961,010
Բանկի թղթակցային հաշիվներ	23,999,077	7,438,345	1,440,373
Պահանջներ ՀՀ ԿԲ նկատմամբ			50,016,638
Ռեպո համաձայնագրեր	36,627,609	23,556,863	24,972,103
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	5,315,017	12,556,447	16,401,079
Այլ եկամտաբեր ակտիվներ	490,244	429,956	663,788
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	**72,9%**	**74,9%**	**81.8%**

2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիր

Ռիսկերի ճիշտ կանխատեսումը, գնահատումն ու կառավարումը ցանկացած ձեռնարկատիրական գործունեության հաջողության գրավականն է:

Բանկին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրությանը ներդրողը կարող է ծանոթանալ սույն ազդագրի Բաժին 3-ի երկրորդ կետում:

Բանկի գործունեության ընթացքում հատկապես կարևորվում է հետևյալ ռիսկերի կառավարումը.

Վարկային ռիսկն այն ներկա կամ ապագա հավանականությունն է, որ բանկի վարկառուն կամ այլ պարտապանը կխախտի բանկի հետ կնքած պայմանագրի պայմանները կամ չի գործի այդ պայմանագրի պայմաններին համապատասխան, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և/կամ կապիտալի վրա: Վարկային ռիսկը ծագում է

բոլոր այն գործարքներից, որոնց արդյունքում առաջանում են փաստացի, պայմանական կամ պոտենցիալ պահանջներ բանկի պարտապանների նկատմամբ:

Իրացվելիության ռիսկը Բանկի կողմից պարտատերերի օրինական պահանջները ժամանակին չկատարելու հետ կապված հնարավոր կորուստների հավանականությունն է:

Գործառնական ռիսկն այն կորստի հավանականությունն է, որը կարող է առաջանալ անբավարար կամ ձախողված ներքին գործարար-գործընթացների, համակարգերի, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների արդյունքում: Գործառնական ռիսկը ներառում է նաև իրավական, տեղեկատվական տեխնոլոգիաների և հեղինակության ռիսկերը:

Շուկայական ռիսկն առաջանում է փոխարժեքների, շուկայական տոկոսադրույքների և գների ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում:

Մրցակցային ռիսկն առաջանում է բանկային համակարգում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում և այն կարող է իր ազդեցությունը թողնել Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա:

Պարտատոմսերին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրությանը ներդրողը կարող է ծանոթանալ սույն ազդագրի Բաժին 2-ի առաջին կետում:

Ինչպես ցանկացած ներդրում, այնպես էլ պարտատոմսերում իրականացվող ներդրումն իր մեջ պարունակում է որոշակի ռիսկային գործոններ: Ներդրողը, հաշվի առնելով ազդագրում ներկայացված ռիսկերի վերաբերյալ տեղեկատվությունը և ծանոթանալով այլ տեղեկատվություններին, պետք է որոշում կայացնի՝ կատարել ներդրում, թե՝ ոչ:

Իրացվելիության ռիսկ. ի տարբերություն պետական պարտատոմսերի, որոնց համար առկա է համեմատաբար իրացվելի շուկա, կորպորատիվ պարտատոմսերի պարագայում, միշտ առկա է ռիսկ, որ ներդրողն ի վիճակի չի լինի վաճառել իր կորպորատիվ պարտատոմսերը հնարավորինս արագ և շահավետ գնով, քանի որ

ելնելով տնտեսության վիճակից, շուկան կարող է լինել փոքր՝ կազմված միայն մի քանի վաճառողներից և գնորդներից:

Արտարժութային ռիսկ. երբ թողարկվող պարտատոմսերն արտարժութային են, ներդրողը կարող է կորուստներ կրել կապված փոխարժեքների տատանումների հետ: Արտարժութային ռիսկը կարող է նաև առաջանալ, երբ ներդրողը փոխանակում է արտարժույթը ՀՀ դրամով ներդրում անելու համար:

Տոկոսադրույքի ռիսկ. շուկայական տնտեսության պայմաններում համարվում է, որ տոկոսադրույքները և պարտատոմսերի գներն իրար հետ ունեն հակադարձ կախվածություն, այն է՝ երբ շուկայում տոկոսադրույքները նվազում են, պարտատոմսերի գները շուկայում աճման միտում ունեն, և հակառակը՝ երբ տոկոսադրույքներն աճում են, պարտատոմսերի գները նվազման միտում ունեն: Տոկոսադրույքի ռիսկը տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր կորուստների ռիսկն է:

Վերաներդրման ռիսկ. մեկ այլ ռիսկ, որին կարող են բախվել ներդրողները վերաներդրման ռիսկն է. կա հավանականություն, որ թողարկողի պարտատոմսերում կատարված սկզբնական ներդրումից ստացվող եկամուտներն այլևս հնարավոր չի լինի առնվազն նույն եկամտաբերությամբ ներդնել:

Ինֆլյացիոն ռիսկ. երբ ներդրողը գնում է պարտատոմս, ի սկզբանե ակնկալում է եկամուտների ստացում որոշակի դրույքաչափով մինչև պարտատոմսի մարման ժամկետը կամ մինչև պարտատոմսի օտարելը, որը կարող է լինել ֆիքսված կամ փոփոխուն: Սակայն գնողունակության անկման կամ էական գնաճի դեպքում, երբ վերջիններիս դրույքը կլինի ավելի բարձր, քան ներդրումներից ստացվող եկամտի դրույքը, ներդրողների մոտ առկա կլինի եկամտաբերության բացասական դրույք:

Սոցիալ քաղաքական իրավական ռիսկ. պարտատոմս թողարկող ընկերության պետականացումը, պետական մարմինների կողմից անբարենպաստ քաղաքականության իրականացման արդյունքում սոցիալ-քաղաքական պայմանների վատթարացումը, որոնք

կհանգեցնեն պարտատոմսի արժեքի նվազմանը, կոչվում են քաղաքական ռիսկեր: ՀՀ կառավարությունը կարող է փոփոխել պարտատոմսերի ոլորտը կարգավորող օրենսրությունը և իրավական ակտերը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի և դրանց եկամտաբերության վրա, այսպիսով առաջացնելով օրենսդրական ռիսկ:

3. Բանկի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ

Բանկի գործունեությունը մշտապես գտնվում է Բանկի խորհրդի, Գործադիր մարմնի ուշադրության ներքո և իրականացվում է համաձայն Բանկի խորհրդի կողմից հաստատված «Հեռանկարային զարգացման ծրագրի», ինչը հնարավորություն է տալիս օպերատիվ կերպով արձագանքել շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Բանկի գործունեությունը շուկայի պահանջներին, ինչպես նաև նվազագույնի հասցնել մի շարք ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը:

Ներգրավված միջոցների ծավալի ավելացման արդյունքում ավելացել են նաև Բանկի ակտիվները՝ սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմելով 782,970 մլն ՀՀ դրամ: 2019թ-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկի պարտավորությունները կազմել են 731,233 մլն ՀՀ դրամ: Պարտավորությունների ամենախոշոր տարրը ներգրավված ժամկետային ավանդներն են՝ 47.2%: Վերջիններս տարեվերջի համեմատ աճել են 9.7%-ով և կազմել 345,345 մլն դրամ: Ցպահանջ միջոցները կազմել են ընդհանուր պարտավորությունների 32.9%-ը՝ կազմելով 240,891 մլն դրամ: Տարեվերջի համեմատ ցուցանիշն աճել է 42.4%-ով:

30.09.2019թ. դրությամբ Բանկի շահույթը կազմել է 3,445 մլն ՀՀ դրամ: Տոկոսային եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 8.1 %-ով և կազմել 33,610 մլն դրամ, տոկոսային ծախսերը նվազել են 1.5%-ով՝ կազմելով 25,014 մլն դրամ: Ոչ տոկոսային եկամուտները նախորդ տարվա նույն

ժամանակահատվածի համեմատ աճել են 43.4%-ով՝ կազմելով 10,663 մլն դրամ, իսկ ոչ տոկոսային ծախսերն ավելացել են 34.8%-ով՝ կազմելով 8,646 մլն դրամ:

Ընդհանուր ակտիվների 66.8%-ը կամ 523,140 մլն դրամ կազմել են Բանկի՝ հաճախորդներին տրվող ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկային ներդրումները և այլ փոխառությունները: Վարկային պորտֆելի կառուցվածքում հատկապես մեծ տեղ են գտել վարկավորման հետևյալ ոլորտները՝ առևտուր, սպառողական վարկեր, շինարարություն և մշակող արդյունաբերություն՝ համապատասխանաբար 27.4%, 12.8%, 11.1% և 7.3% կշիռներով:

2019թ-ի ընթացքում՝ մինչև ազդագրի գրանցման ներկայացման օրը, Բանկի հիմնական ֆինանսական ցուցանիշների և գործունեության էական փոփոխություն տեղի չի ունեցել, և Բանկը միտված է պահպանել ակտիվների և մնացած հիմնական ցուցանիշների շարունակական աճը:

Գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, Բանկի կազմակերպաիրավական փոփոխություն չի սպասվում: Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամիսների ընթացքում Բանկը ներգրավված է եղել դատական վարույթներում, որոնք Բանկի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա կարող են ունենալ կամ ունեցել են էական ազդեցություն: Նշված դատական գործերի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացված է ազդագրի Բաժին 3-ում:

4. Բանկի աուդիտ իրականացնող անձի մասին համառոտ տեղեկատվություն

Բանկի 2011թ. անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, 2012թ.՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն, 2013թ., 2014թ., 2015թ., 2016թ., 2017թ. և 2018թ.՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է ՝

ՀՀ, ք. Երևան, 0012, Վաղարշյան 8/1, հեռ. (+ 374 10) 260 964, ֆաքս՝ (374 10) 260 961, www.grantthornton.am

Տնօրեն՝ Գագիկ Գյուլբուդաղյան

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է՝

ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության 22, հեռ. (+ 374 10) 58 24 78, (+ 374 10) 54 43 01, ֆաքս՝ +374 10 56 24 04, www.bakertilly.am

Տնօրեն՝ Փառանձեմ Գևորգյան

5. Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը /այսուհետ՝ Ժողով/,
- Բանկի խորհուրդը /այսուհետ՝ Խորհուրդ/,
- Բանկի գործադիր մարմինները՝ Բանկի վարչության նախագահը (այսուհետ՝ Վարչության նախագահ) և Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

Բանկի խորհուրդը կազմված է վեց անդամներից՝

	Անուն, ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1	Արսեն Միքայելյան	Խորհրդի նախագահ	19 տարի
2	Արզուման Հարությունյան	Խորհրդի անդամ	40 տարի
3	Վիտալի Գրիգորյանց	Խորհրդի անդամ	37 տարի
4	Սերգեյ Արզումանյան	Խորհրդի անդամ	34 տարի
5	Ալիկ Չիրկինյան	Խորհրդի անդամ	38 տարի
6	Սևակ Պետրոսյան	Խորհրդի անդամ	26 տարի

Բանկի վարչությունը կազմված է յոթ անդամներից՝

	Անուն, ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1	Արտավազդ Սարգսյան	Վարչության նախագահ	21 տարի
2	Մանվել Սահակյան	Վարչության նախագահի տեղակալ-Ֆինանսական դեպարտամենտի տնօրեն, Վարչության անդամ	31 տարի
3	Նշան Գրիգորյան	Վարչության նախագահի տեղակալ, (Կորպորատիվ բիզնեսի կառավարման դեպարտամենտի աշխատանքների կորդինացնող) Վարչության անդամ	20 տարի
4	Մովսես Էլոյան	Վարչության նախագահի տեղակալ (Գանձապետական դեպարտամենտի և Միջազգային գործառնությունների դեպարտամենտի կորդինացնող), Վարչության անդամ	30 տարի
5	Ալյոնա Ստրատան	Վարչության նախագահի տեղակալ (Մանրածախ բիզնեսի զարգացման դեպարտամենտի, Տարածքային զարգացման դեպարտամենտի, ՄԲ և ՓԲ վարկային գործարքների անդերրայթինգի վարչության և Հաճախորդների բիզնես պրոցեսների կառավարման բաժնի կորդինացնող), Վարչության անդամ	22 տարի
6	Նարինե Սարգսյան	Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ	31 տարի
7	Անի Ղամբարյան	Ռիսկերի կառավարման և հսկողության դեպարտամենտի տնօրեն, Վարչության անդամ	20 տարի

Բանկի աշխատակիցների թիվը 30.09.2019թ. դրությամբ կազմում է 1,152 աշխատակից: Բանկի խոշոր բաժնետերերը ներկայացված են Ամփոփաթերթի 1-ին կետի 1.4. ենթակետում:

6. Բանկի պարտատոմսերի հիմնական տվյալները

Բանկն այս պահին շրջանառության մեջ ունի պարտատոմսերի 2 թողարկում՝ 17.2մլն ԱՄՆ դոլար և 5.1մլն ԱՄՆ դոլար անվանական ծավալներով: Երկու թողարկումն էլ ցուցակված են Հայաստանի Ֆոնդային Բորսայում:

Սույն ազդագրով առաջարկվելու են անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային արտարժութային և դրամային պարտատոմսեր:

Արտարժութային պարտատոմսերը տեղաբաշխվելու և մարվելու են ԱՄՆ դոլարով, իսկ դրանց դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվելու են ՀՀ դրամով: Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմելու է 5,000,000.00 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար: Մեկ պարտատոմսի անվանական արժեքն է 100 ԱՄՆ դոլար, թողարկվող պարտատոմսերի քանակը՝ 50,000 հատ: Պարտատոմսերի արժեկտրոնային եկամտաբերությունը սահմանվել է տարեկան 5.8%, պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝ 42 ամիս: Արժեկտրոնները վճարվելու են եռամսյակային պարբերականությամբ՝ տեղաբաշխումը սկսելու օրվան հաջորդող 3-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 21-րդ, 24-րդ, 27-րդ, 30-րդ, 33-րդ, 36-րդ, 39-րդ և 42-րդ ամիսների համապատասխան օրերը: Եթե վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Դրամային պարտատոմսերը տեղաբաշխվելու և մարվելու են ՀՀ դրամով և դրանց դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվելու են ՀՀ դրամով: Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմելու է 250,000,000.00 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ: Մեկ պարտատոմսի անվանական արժեքն է 10,000 ՀՀ դրամ, թողարկվող պարտատոմսերի քանակը՝ 25,000 հատ: Պարտատոմսերի արժեկտրոնային

եկամտաբերությունը սահմանվել է տարեկան 10.5%, պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝ 42 ամիս: Արժեկտրոնները վճարվելու են եռամսյակային պարբերականությամբ՝ տեղաբաշխումը սկսելու օրվան հաջորդող 3-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 21-րդ, 24-րդ, 27-րդ, 30-րդ, 33-րդ, 36-րդ, 39-րդ և 42-րդ ամիսների համապատասխան օրերը: Եթե վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակ է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսվելու է սույն ազդագիրը ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո՝ յոթ աշխատանքային օր հետո: Տեղաբաշխումը նախատեսվում է իրականացնել 01/12/2019թ-ից մինչև 29/02/2020թ ընկած ժամանակահատվածում: Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն համապատասխան պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, պատշաճ կերպով ներկայացնեն Բանկ և կատարեն համապատասխան վճարում, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելը:

7. Պարտատոմսերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը

Բանկի անվանական պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն համապատասխան պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը,

պատշաճ կերպով ներկայացնեն Բանկ և կատարեն համապատասխան վճարում, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելը:

Յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտից հետո Բանկը նախատեսում է ցուցակել պարտատոմսերը Հայաստանի Ֆոնդային Բորսայում և պարտատոմսերի իրացվելիության բարձրացման նպատակով պարտատոմսերի շուկայի մասնակիցներից մեկի հետ կնքել շուկա ստեղծողի պայմանագիր:

8. Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 2-ում:

հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	30.09.2019[1]	2018	2017
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	3,444,737	852,520	1,280,194
Սեփական կապիտալի միջին մեծություն	44,657,102	41,228,139	37,936,590
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)%	**7.71%**	**2.07%**	**3.37%**
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	3,444,737	852,520	1,280,194
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	709,063,808	573,319,460	435,243,690
Ակտիվների շահութաբերություն (ROA)%	**0.49%**	**0.15%**	**0.29%**
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	3,444,737	852,520	1,280,194
Գործառնական եկամուտ	18,625,749	17,519,113	10,711,145
Զուտ շահույթի մարժա (NPM) %	**18,49%**	**4.87%**	**11.95%**
Գործառնական եկամուտ	18,625,749	17,519,113	10,711,145
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	709,063,808	573,319,460	435,243,690
Ակտիվների օգտագործման գործակից % (AU)	**2.63%**	**3.06%**	**2.46%**
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	709,063,808	573,319,460	435,243,690
Սեփական կապիտալի միջին մեծություն	44,657,102	41,228,139	37,936,590
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	**15.88**	**13.91**	**11.47**
Զուտ տոկոսային եկամուտ	8,596,610	8,587,757	6,887,952
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	554,772,790	426,561,971	402,159,665
Զուտ տոկոսային մարժա %(NIM)	**1.55%**	**2.01%**	**1.71%**
Տոկոսային եկամուտ	33,610,391	41,563,495	35,262,768
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	554,772,790	426,561,971	402,159,665
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	**6.06%**	**9.74%**	**8.77%**
Տոկոսային ծախսեր	25,013,781	32,975,738	28,374,816
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	671,186,961	509,022,966	475,933,055

[1] 30.09.2019թ. ֆինանսական ցուցանիշները հաստատված չեն անկախ աուդիտ իրականացնող անձի կողմից: 2017 և 2018թթ. ֆինանսական ցուցանիշները հաստատված են անկախ աուդիտ իրականացնող անձի կողմից՝ բացառությամբ ընդհանուր ակտիվների և սեփական կապիտալի միջին մեծությունների, եկամտաբեր ակտիվների միջին մեծության և պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր մեծության:

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են ծախսեր, %	**3.73%**	**6.48%**	**5.96%**
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	3,444,737	852,520	1,280,194
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (հատ)	51,040	41,120	41,120
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	**67.49**	**20.73**	**31.13**
ՍՊՐԵԴ, %	**2.33%**	**3.27%**	**2.81%**

Բաժին 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Ռիսկային գործոններ

Ներդրողը պետք է գիտակցի, որ որոշակի ռիսկային գործոններ, որոնք բացասական ազդեցություն կունենան Բանկի ֆինանսական ցուցանիշների, համբավի, մրցակցային դիրքի վրա, կարող են ուղղակիորեն անդրադառնալ նաև պարտատոմսերի գրավչության, գնի և իրացվելիության վրա՝ արդյունքում ներդրողը ստիպված կլինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան վճարել էր դրանք ձեռք բերելիս: Ներդրողը ներդրումային որոշում կատարելիս պետք է մանրակրկիտ ուսումնասիրի և վերլուծի դրա հետ կապված և սույն փաստաթղթում ներկայացված ռիսկային բոլոր գործոնները և այլ տեղեկատվությունը: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ սույն փաստաթղթում ներկայացված ռիսկային գործոնների ցանկը սպառիչ չէ, և հնարավոր է անկանխատեսելի բնույթի ռիսկերի ի հայտ գալը:

Իրացվելիության ռիսկ. ի տարբերություն պետական պարտատոմսերի, որոնց համար առկա է համեմատաբար իրացվելի շուկա, կորպորատիվ պարտատոմսերի պարագայում, միշտ առկա է ռիսկ, որ ներդրողն ի վիճակի չի լինի վաճառել իր կորպորատիվ պարտատոմսերը հնարավորինս արագ և շահավետ գնով, քանի որ ելնելով տնտեսության վիճակից՝ շուկան կարող է լինել փոքր՝ կազմված միայն մի քանի վաճառողներից և գնորդներից: Թեև Բանկը իր պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար դրանց տալիս է որոշակի մրցակցային և ներդրումային որակներ,

սակայն, վերջինս, կախված տնտեսության ընդհանուր վիճակից և տատանումներից՝ ներդրողներին չի կարող երաշխավորել, որ դրանք կլինեն խիստ իրացվելի:

Արտարժութային ռիսկ. երբ թողարկվող պարտատոմսերն արտարժութային են, ներդրողը կարող է կորուստներ կրել կապված փոխարժեքների տատանումների հետ: Սույն ռիսկը հատկապես առնչվում է այն ներդրողներին, որոնք պարտատոմսերի ձեռք բերման և մարման դիմաց ստացված գումարները փոխարկելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի: Արտարժութային ռիսկ կարող է առաջանալ արժեկտրոնների վճարման առնչությամբ, երբ արժեկտրոնները հաշվարկվում է արժեկտրոնների հաշվարկման օրվա նախորդ օրը ՀՀ ԿԲ հրապարակած փոխարժեքի հիման վրա, իսկ վճարումը տեղի է ունենում տվյալ օրը:

Տոկոսադրույքի ռիսկ. շուկայական տնտեսության պայմաններում համարվում է, որ տոկոսադրույքները և պարտատոմսերի գները իրար հետ ունեն հակադարձ կախվածություն, այն է՝ երբ շուկայում տոկոսադրույքները նվազում են, պարտատոմսերի գները շուկայում աճման միտում ունեն, և հակառակը՝ երբ տոկոսադրույքներն աճում են, պարտատոմսերի գները նվազման միտում ունեն: Այդ իսկ պատճառով տոկոսադրույքների փոփոխությունները կարող են հանգեցնել թե՛ թողարկողների, թե՛ ներդրողների կողմից պարտատոմսերի համապատասխանաբար թողարկման և ներդրումների իրականացման մասով քաղաքականության վերանայման և փոփոխման:

Վերաներդրման ռիսկ. մեկ այլ ռիսկ, որին կարող են բախվել ներդրողները վերաներդրման ռիսկն է, այն է՝ հավանականությունը, որ թողարկողի պարտատոմսերում կատարված սկզբնական ներդրումից ստացվող եկամուտներն այլևս հնարավոր չի լինի առնվազն նույն եկամտաբերությամբ ներդնել: Նշյալ վերաներդրման ռիսկը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ ներդրողների երկարաժամկետ ներդրումների վրա, սակայն էական գործոն չի կարող հանդիսանալ կարճաժամկետ ներդրումների համար:

Ինֆլյացիոն ռիսկ. երբ ներդրողը գնում է պարտատոմս, ի սկզբանե ակնկալում է եկամուտների ստացում որոշակի դրույքաչափով մինչև պարտատոմսի մարման ժամկետը կամ մինչև պարտատոմսի օտարելը, որը կարող է լինել ֆիքսված կամ փոփոխուն: Սակայն գնողունակության անկման կամ էական գնաճի դեպքում, երբ վերջիններիս դրույքը կլինի ավելի բարձր, քան ներդրումներից ստացվող եկամտի դրույքը, ներդրողների մոտ առկա կլինի եկամտաբերության բացասական դրույք:

Սոցիալ քաղաքական իրավական ռիսկ. պարտատոմս թողարկող ընկերության պետականացումը, պետական մարմինների կողմից անբարենպաստ քաղաքականության իրականացման արդյունքում սոցիալ-քաղաքական պայմանների վատթարացումը, որոնք կհանգեցնեն պարտատոմսի արժեքի նվազմանը, կոչվում են քաղաքական ռիսկեր: ՀՀ կառավարությունը կարող է ցանկացած պահի փոփոխել պարտատոմսերի ոլորտը կարգավորող օրենսդրությունը և իրավական ակտերը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի և դրանց եկամտաբերության վրա, այսպիսով առաջացնելով օրենսդրական ռիսկ:

2. Հիմնական տեղեկատվություն

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակ է հանդիսանում ՀՀ արժեթղթերի շուկայում միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

3. Տեղեկատվություն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ անվանական պարտատոմսերի վերաբերյալ

3.1. Արժեթղթերի տեսակը և դասը

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կողմից թողարկվող պարտատոմսերն անվանական, արժեկտրոնային, առանց հետգնման հնարավորության, ոչ փաստաթղթային և ոչ

փոխարկելի պարտատոմսեր են: Արտարժութային պարտատոմսերի տարբերակիչ ծածկագիրն է AMARBBB29ER9, իսկ դրամային պարտատոմսերի տարբերակիչ ծածկագիրը՝ AMARBBB2AER9:

3.2. Երկիրը, որի օրենդրության համաձայն թողարկվում են արժեթղթերը

Թողարկումն իրականացվում է ՀՀ օրենսդրության համաձայն, և դրա շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.3. Արժեթղթերի ձևը

Թողարկվող պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի ռեեստրը վարվելու է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից՝ ըստ համապատասխան կանոնների և ընթացակարգերի:

3.4. Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը

Թողարկվող արտարժութային պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 5,000,000.00 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար: Մեկ պարտատոմսի անվանական արժեքն է 100 ԱՄՆ դոլար, իսկ քանակը՝ 50,000 հատ: Թողարկվող դրամային պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 250,000,000.00 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ: Մեկ պարտատոմսի անվանական արժեքն է 10,000 ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 25,000 հատ:

3.5. Թողարկման արժույթը

Պարտատոմսերը թողարկվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով՝ համաձայն սույն ազդագրով սահմանված ծավալների:

3.6. Արժեթղթերից բխող իրավունքների նկարագրությունը

Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվել են պարտատոմսերից բխող հետևյալ իրավունքները.

- ստանալ վճարվող արժեկտրոնները՝ համաձայն սույն ազդագրի 2-րդ բաժնի 3-րդ կետի 3.8 ենթակետով սահմանված ժամանակացույցի և մարման գումարը՝ ըստ ազդագրով սահմանված կարգի: Արժեկտրոնային եկամտի ստացման և շրջանառության ժամկետի վերջում պարտատոմսերի մարման գումարի ստացման իրավունքի իրականացման համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում և արժեկտրոնային եկամուտը/պարտատոմսի մարման գումարը փոխանցվում է ներդրողի բանկային հաշվին Թողարկողի կողմից,
- Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետում վճարելն ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ,
- գրավադրել պարտատոմսերն օրենքով սահմանված կարգով, իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով, ընդ որում՝ ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր. բացառություն են կազմում ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները: Դրանք ՀՀ ԿԲ և ֆինանսական շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներն են և թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները:

Համաձայն սույն ազդագրի 2-րդ բաժնի 3-րդ կետի 3.9 ենթակետի՝ Բանկի թողարկած պարտատոմսերի սեփականատերերին պարտատոմսերում կատարված ներդրումները մարվելու են պարտատոմսի անվանական արժեքով անկանխիկ ձևով՝

պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

3.7. Առաջարկվող արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն

Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ բանկի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ.

- **առաջին՝** ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ ՀՀ ԿԲ-ի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում,
- **երկրորդ՝** այն պարտատերերի պահանջները, որոնք բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և ՀՀ ԿԲ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի,
- **երրորդ՝** ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 10 միլիոն դրամի չափով, իսկ արտարժութային ավանդների (հաշիվների) դեպքում՝ մինչև 5 միլիոն դրամին համարժեք չափով, ընդ որում՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 10 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում տվյալ անձի՝ մինչև 10 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափով)

պահանջը բավարարվում է երրորդ հերթով, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ չորրորդ հերթով,

- **չորրորդ՝** բանկի այլ պարտավորությունները, ներառյալ՝ «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ»-ի կողմից հատուցման կազմակերպման հետ կապված ծախսերը, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների,
- **հինգերորդ՝** պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները,
- **վեցերորդ՝** ստորադաս փոխառություններից բխող պահանջները,
- **յոթերորդ՝** բանկի մասնակիցների պահանջները:

Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

Բանկի սնանկ ճանաչվելու դեպքում պարտատերերին վճարումները կատարվում են «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, որի համաձայն բանկի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են 4-րդ հերթին, բացառությամբ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի իմաստով ավանդ հանդիսացող ներդրումներից, որոնք հատուցվում են 3-րդ հերթին: Ընդ որում, յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: Պարտատոմսերի սեփականատերերը կարող են օգտվել օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքի և նույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով բանկի թողարկած անվանական արժեթղթերով, տվյալ դեպքում՝ պարտատոմսերով, ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից) ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, որոնց հատուցումը երաշխավորված է նույն օրենքով սահմանված կարգով և պայմաններով, հետևյալ չափերով.

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասը միլիոն հայկական դրամ է,

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է,

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը հինգ միլիոն հայկական դրամից ավել է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասը միլիոն հայկական դրամով,

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է հինգ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը:

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռք բերումը ՀԿԴ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում կամ ՀԿԴ հաշվի օպերատորներից որևէ մեկի մոտ ունենալ

սեփականատիրոջ (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ, ինչպես նաև կատարել պարտատոմսերի ձեռք բերման կամ օտարման հետ կապված պարտադիր վճարները՝ կապված սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման հետ:

Բանկի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումը և հաշվառումն իրականացնում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ը՝ հաշվի օպերատորի միջոցով:

3.8. Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները

Արտարժութային պարտատոմսերի արժեկտրոնի տոկոսադրույքն է տարեկան 5.8%: Արժեկտրոնը վճարվելու է եռամսյակային պարբերականությամբ: Արժեկտրոնի հաշվարկման առաջին օր է հանդիսանում տեղաբաշխման առաջին օրը: Արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու օրվան հաջորդող 3-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 21-րդ, 24-րդ, 27-րդ, 30-րդ, 33-րդ, 36-րդ, 39-րդ և 42-րդ ամիսների համապատասխան օրը: Եթե վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում հաշվարկվելու է ԱՄՆ դոլարով, սակայն ներդրողներին վճարվելու է ՀՀ դրամով՝ հաշվարկված վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքով:

Դրամային պարտատոմսերի արժեկտրոնի տոկոսադրույքն է տարեկան 10.5%: Արժեկտրոնը վճարվելու է եռամսյակային պարբերականությամբ: Արժեկտրոնի հաշվարկման առաջին օր է հանդիսանում տեղաբաշխման առաջին օրը: Արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու օրվան հաջորդող 3-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 21-րդ, 24-րդ, 27-րդ, 30-րդ, 33-րդ, 36-րդ, 39-րդ և 42-րդ ամիսների համապատասխան օրը: Եթե վճարման օրը ոչ

աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Դրամային պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու ՀՀ դրամով:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամտի գումարը վճարվելու է հաշվարկման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձանց (սեփականատերեր կամ անվանատերեր)՝ վերջիններիս հաշվեհամարներին համապատասխան վճարումների մուտքագրման միջոցով: Վճարվելիք արժեկտրոնները հաշվարկվելու են տասնորդական ճշտությամբ՝ կլորացված ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ՝ ըստ կլորացման թվաբանական կանոնների: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում գումարը կմուտքագրվի Բանկի համապատասխան տարանցիկ հաշվեհամարին՝ մինչև հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականների ստացումը:

Պարտատոմսերի ոչ ռեզիդենտ սեփականատերերի առկայության դեպքում, Բանկն արժեկտրոնի վճարումը ՀՀ տարածքում գործող բանկերում կիրականացնի այնպես, ինչպես ռեզիդենտ սեփականատերերին, իսկ ՀՀ տարածքից դուրս գործող բանկերում՝ սեփականատիրոջ հանձնարարագրով և Բանկի կողմից մատուցվող լրացուցիչ ծառայությունների համար Բանկում գործող սակագներով կփոխանցի սեփականատերերի կողմից նշված համապատասխան հաշվեհամարներին:

Տեղաբաշխման ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում Բանկի ինտերնետային կայքում՝ www.armbusinessbank.am, կհրապարակվի նաև տեղաբաշխված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման, ինչպես նաև պարտատոմսերի մարման ժամանակացույցը՝ հստակ ամսաթվերով:

Յուրաքանչյուր պարտատոմսի գծով արժեկտրոնային եկամտի հաշվարկը կկատարվի հետևյալ բանաձևով՝

ԱԳ = (FV * C)/k

որտեղ՝

ԱԳ - արժեկտրոնի գումարն է,

FV - մեկ պարտատոմսի անվանական արժեքը,

C - տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k - մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է:

Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

AI = FV * C/k * DCS/DCC

որտեղ՝

AI - կուտակված արժեկտրոնային եկամուտն է,

FV - մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C - տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k - մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է (հաճախականությունը),

DCS – հաշվարկին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև հաշվարկի կատարման օրն օրերի քանակն է՝ համապատասխան օրերի հաշվարկման պայմանականության դեպքում,

DCC - հաշվարկին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև հաշվարկին հաջորդող արժեկտրոնի վճարման օրն ընկած օրերի քանակն է՝ համապատասխան օրերի հաշվարկման պայմանականության դեպքում:

Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/ Actual-ը:

Պարտատոմսի տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$ПՏԵ = (1 + S/Հ)^{Հ} - 1$$

որտեղ՝

ՊՏԵ - տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունն է,

S - տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքն է,

Հ - մեկ տարվա ընթացքում արժեկտրոնների վճարման հաճախականությունն է:

3.9. Պարտատոմսերի մարման ժամկետը և արժեքը

Արտարժութային պարտատոմսերի մարումը կկատարվի անվանական արժեքով՝ տեղաբաշխման օրվան հաջորդող 42-րդ ամսվա համապատասխան օրը:

Դրամային պարտատոմսերի մարումը կկատարվի անվանական արժեքով՝ տեղաբաշխման օրվան հաջորդող 42-րդ ամսվա համապատասխան օրը:

Պարտատոմսերի մարման և վճարման ամսաթվերը նույնն են: Եթե արժեկտրոնի մարման և պարտատոմսերի մարման օրերը ոչ աշխատանքային են, ապա վճարումը կկատարվի տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պարտատոմսերի մարման գումարների վճարումները կատարվում է մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձանց՝ վերջիններիս բանկային հաշիվներին համապատասխան վճարումների մուտքագրման միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում գումարը կմուտքագրվի Բանկի համապատասխան տարանցիկ հաշվեհամարին՝ մինչև հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականների ստացումը:

Թողարկողի կողմից պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

3.10. Իրավասու մարմնի որոշման համառոտ բովանդակությունը թողարկման մասին

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ պարտատոմսերը թողարկվում են համաձայն Բանկի Խորհրդի 2019թ. հոկտեմբերի 22-ի թիվ 1258-Ա և 2019թ. նոյեմբերի 12-ի թիվ 1348-Ա որոշումների: Որոշումներով սահմանվել են պարտատոմսերի թողարկման պայմանները: Միաժամանակ, սահմանվել է, որ Բանկի անվանական պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու: Սահմանվել է նաև, որ մինչև տեղաբաշխման ավարտը պարտատոմսերի ընդհանուր քանակը լրանալու դեպքում, Բանկը դադարեցնում է տեղաբաշխման գործընթացը:

3.11. Շրջանառության սահմանափակումներ

ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման մասին Բանկի Խորհրդի որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ չեն սահմանվում:

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված սահմանափակումներ չկան՝ բացառությամբ օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի:

Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, և, համաձայն ՀՀ գործող օրենսդրության, պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:

Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով, ընդ որում՝ ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր, բացառություն են կազմում.

- ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները, դրանք ՀՀ ԿԲ և ֆինանսական շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներն են,
- թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները:

3.12. Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկումը

Բանկի պարտատոմսերից ստացվող եկամուտները ենթակա են հարկման ըստ հետևյալ հարկատեսակների՝

- շահութահարկ,
- եկամտային հարկ:

Շահութահարկ

Շահութահարկ վճարողներ են համարվում՝

- ռեզիդենտ կազմակերպությունները,
- Հայաստանի Հանրապետությունում հաշվառված՝

  ա. անհատ ձեռնարկատերերը,

  բ. նոտարները,
- Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած պայմանագրային ներդրումային ֆոնդերը (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի),
- ոչ ռեզիդենտ կազմակերպությունները, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ

շահութահարկ վճարողի (մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի մասով) հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով, բացառությամբ ՀՀ Հարկային օրենսգրքի 125-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դեպքերի:

Բանկը որպես հարկային գործակալ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված տոկոսների մասով շահութահարկը հաշվարկում և պահում է 10 տոկոս դրույքաչափով, եթե՝

- եկամուտները վճարում են առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին,
- եկամուտները վճարվում են մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին, սակայն այդ եկամուտները չեն վերագրվում մշտական հաստատությանը:

Եկամտային հարկ

Եկամտային հարկ վճարողներ են համարվում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ որպես ֆիզիկական անձինք եկամտային հարկ վճարողներ են համարվում միայն անձնական եկամուտների մասով:

Եկամտային հարկով հարկման օբյեկտ է համարվում՝

- ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների ձեռնարկատիրական եկամուտների,

- ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ՝ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեությունից ստացվող եկամուտների:

Բանկը որպես հարկային գործակալ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց վճարված տոկոսների մասով եկամտային հարկը հաշվարկում և պահում է 10 տոկոս դրույքաչափով:

4. Առաջարկի ժամկետները և պայմանները

4.1. Բանկի կողմից թողարկվող անվանական պարտատոմսերի ընդհանուր ծավալը

Սույն ազդագրով առաջարկվող արտարժութային պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալը կազմում է 5,000,000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար: Տեղաբաշխվող արտարժութային պարտատոմսերի քանակն է 50,000 հատ, մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 ԱՄՆ դոլար, շրջանառության ժամկետը՝ 42 ամիս:

Սույն ազդագրով առաջարկվող դրամային պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալը կազմում է 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ: Տեղաբաշխվող դրամային պարտատոմսերի քանակն է 25,000 հատ, մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 10,000 ՀՀ դրամ, շրջանառության ժամկետը՝ 42 ամիս:

4.2. Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսվելու է սույն Ազդագիրը ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո՝ յոթ աշխատանքային օր հետո: Տեղաբաշխումը

նախատեսվում է իրականացնել 01/12/2019թ-ից մինչև 29/02/2020թ ընկած ժամանակահատվածում:

Կենտրոնական բանկն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն Կենտրոնական բանկի համաձայնությամբ՝ առավելագույնը 10 աշխատանքային օրով: Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա տեղաբաշխողը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացի նկարագրությունը

Պարտատոմսերի ձեռք բերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Բանկ ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական/ները, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:

Թողարկման նպատակով Բանկում բացված համապատասխան հաշվեհամարներին դրամական միջոցների ստացումից անմիջապես հետո Բանկը Դեպոզիտարիային ներկայացնում է պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարագիր Թողարկողի թողարկման հաշվից համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման և ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին հաշվեգրման համար:

Դեպոզիտարիայից ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ դեպո հաշվին պարտատոմսերի փոխանցման վերաբերյալ համապատասխան հաստատում ստանալուց անմիջապես հետո Բանկը թողարկման նպատակով բացված համապատասխան

տարանցիկ հաշեհամարներից իր օգտագործման համար մատչելի է դարձնում համապատասխան հայտ-հանձնարարականում նշված դրամական միջոցները:

Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո թողարկման նպատակով բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարներին ստացված գումարները ենթակա են հետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Բանկի կողմից ստացման ժամկետից:

Իրավաբանական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է ազդագրի Հավելված 3-ում: Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է ազդագրի Հավելված 4-ում:

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

4.4. Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը

Տեղաբաշխման ընթացքում Բանկը չի նախատեսում պարտատոմսերի առաջարկի, ինչպես նաև տեղաբաշխման ծավալների փոփոխության կամ չեղյալ հայտարարելու հնարավորություն:

Տեղաբաշխման ընթացքում հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի մերժում կամ հայտ-հանձնարարականների մասնակի բավարարում, եթե հայտում նշված ծավալը գերազանցում է հայտ-հանձնարարականի ներկայացման պահին չտեղաբաշխված ծավալը: Այս դեպքում հայտ-հանձնարարականը բավարարվում է չտեղաբաշխված ծավալի չափով: Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման կամ մերժման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն

իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

4.5. Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը

Հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները պարտատոմսերի հայտ-հանձնարարականները պատշաճ կերպով առաքելուց, Բանկի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող հետ կանչել:

4.6. Ձեռք բերման հայտի նվազագույն և առավելագույն գումարները

Պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն և առավելագույն մեծությունների վերաբերյալ սահմանափակումներ չկան, որի հետևանքով Գնման հայտ-հանձնարարականներում նշվող գումարների վերաբերյալ նվազագույն կամ առավելագույն մեծությունների սահմանափակումներ չեն սահմանվում:

4.7. Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները

Հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Բանկ ներկայացումից հետո պարտատոմս ձեռք բերել ցանկացող իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք պետք է թողարկման նպատակով Բանկում բացված 11500236924369 (ԱՄՆ դոլարային պարտատոմսերի դեպքում) տարանցիկ հաշվեհամարին կամ 11500579062790 (ՀՀ դրամային պարտատոմսերի դեպքում) տարանցիկ հաշվեհամարին կատարեն վճարում՝ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար միջոցները հաշվեհամարներին են փոխանցվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները ստացված են

համարվում այդ օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտը մինչև տվյալ օրվա ժամը 16:30-ը ներկայացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է՝ պարտատոմսի ձեռքբերման տվյալ օրվա համար սահմանված գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով: Պարտատոմսերի ձեռքբերման հայտը տվյալ օրվա ժամը 16:30-ից հետո ներկայացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է՝ պարտատոմսի ձեռքբերման հաջորդ աշխատանքային օրվա համար սահմանված գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով:

Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված Թողարկողի կողմից բացված և սույն ազդագրում նշված համապատասխան տարանցիկ հաշվեհամարին դրամական միջոցների մուտքագրման պահից: Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

4.8. Առաջարկի արդյունքների հրապարակման ձևը և ժամկետների ամբողջական նկարագրությունը

Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման արդյունքները հրապարակվում են Բանկի ինտերնետային՝ www.armbusinessbank.am կայքում տեղաբաշխման ավարտի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

4.9. Նախապատվության իրավունքից օգտվելու գործընթացի նկարագրությունը

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն՝ առաջնահերթություն ունի այն ներդրողը, ում հայտ-հանձնարարականի համաձայն վճարումը թողարկման նպատակով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

4.10. Պարտատոմսերի տեղաբաշխման պլանը

4.10.1.Ներդրողների թիրախային խմբերը

Պարտատոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց:

4.10.2. Հայտի բավարարման մասին ծանուցման եղանակները

Ներդրողները Թողարկողի կողմից տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Բանկ է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը/ները: Բանկի որևէ մասնաճյուղ ներկայացած և մասնաճյուղերի աշխատակիցների միջոցով համապատասխան հայտ-հանձնարարականը լրացրած ներդրողը իր հայտ-հանձնարարականի բավարարման մասին տեղեկանալու համար պարտավոր է ներկայանալ Բանկ և իր հայտ-հանձնարարականը լրացրած աշխատակցի միջոցով տեղեկանալ իր հայտ-հանձնարարականի բավարարման մասին:

4.11. Առաջարկի գինը

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$DP = \frac{C}{f} \sum_{i=1}^{N} \left(\frac{1}{(1+\frac{y}{100*f})^{i-1+t}} \right) + \left(\frac{100}{(1+\frac{y}{100*f})^{N-1+t}} \right)$$

$$t = \frac{DSN}{DCC}$$

DP – պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա մեջ եղած օրերի քանակն է՝ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC – գործարքին կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է՝ համապատասխան պայմանականության դեպքում,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=4 եռամսյակային վճարումների դեպքում),

N - գործարքի կատարման օրվանից հետո արժեկտրոնների մնացած վճարումների քանակն է,

Y – մինչև մարում եկամտաբերությունն է,

C – տարեկան արժեկտրոնն է 100 միավոր անվանական արժեքի դիմաց:

Մինչև տեղաբաշխման սկիզբը տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի, պարտատոմսերի վաճառքի գինը կհրապարակվի Բանկի ինտերնետային կայքում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռք բերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Ներդրողները պարտավոր են նաև Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական դեպո հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

4.11.1. Այլ ծախսեր

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման գծով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կողմից մատուցվող ծառայությունների կամ խորհրդատվության դիմաց ներդրողը որևիցե ծախս չի կատարում:

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները գանձվում են համաձայն հաշվի օպերատորի կողմից հաստատված սակագների, որոնց հետ ներդրողը կարող է ծանոթանալ համապատասխան հաշվի օպերատորի ինտերնետային կայք էջի միջոցով:

4.12. Տեղաբաշխումը

Երաշխավորված տեղաբաշխում. երաշխավորված տեղաբաշխում իրականացնողներ առկա չեն:

Երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխողների հետ կնքված պայմանագրերի էական պայմանները. Թողարկողը և տեղաբաշխողը նույն իրավաբանական անձն են՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ: Թողարկող/տեղաբաշխողն այլ տեղաբաշխողների և/կամ խմբի հետ համատեղաբաշխման պայմանագիր չի կնքել:

Երաշխավորված պայմանագրի կնքում. երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

Վճարումներն ընդունող բանկերի ցանկը. պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում (գլխամասային գրասենյակի՝ ք. Երևան, Նալբանդյան 48 հասցեում, և մասնաճյուղերում, որոնց անվանումները և հասցեները բերված են սույն ազդագրի 3-րդ բաժնի, 3-րդ կետի 3.6. ենթակետում) թողարկման նպատակով բացված 11500236924369 (ԱՄՆ դոլարային պարտատոմսերի դեպքում) և 11500579062790 (ՀՀ դրամային պարտատոմսերի դեպքում) տարանցիկ հաշվեհամարներին: Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է

Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես Գլխավոր պահառու՝ համաձայն ՀՀ օրենսդրության և կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոնների: Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (դեպոզիտարիայի ենթապահառու)՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով: Դեպոզիտարիայի հասցեն է՝ ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ (հեռ՝ +374 60 61 55 55 լրաց. 111 կամ 126): Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատոր հանդիսանում է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն: Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման դեպո հաշիվ:

5. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

5.1. Առևտրին թույլտվությունը

Սույն ազդագիրը ՀՀ ԿԲ-ում գրանցելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերը ցուցակելու և առևտրին թույլատրելու նպատակով Բանկը դիմելու է «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ: Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ, իսկ վերադարձման ենթակա գումարները տեղաբաշխումը չեղյալ համարելու որոշումն ընդունելու օրվանից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողի կողմից ենթակա են վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ: Տեղաբաշխումը չեղյալ համարելու որոշման կայացման դեպքում տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և տեղաբաշխումը չեղյալ համարելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակահատվածի համար:

5.2. Առևտրի շուկաները

Այս պահին Թողարկողի կողմից սույն ազդագրով գրանցվող պարտատոմսերը թույլատրված չեն հրապարակային առևտրի որևէ շուկայում:

Բանկի կողմից նախկինում տեղաբաշխված պարտատոմսերը թույլատրվել են առևտրի «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ կարգավորվող շուկայի կորպորատիվ պարտատոմսերի հարթակում:

5.3. Շուկա ստեղծողները

Բանկը պարտատոմսերի տեղաբաշխումն ավարտելուց հետո կնքելու է շուկա ստեղծողի պայմանագիր երկրորդային շուկայում վաճառքի ակտիվացման գործառույթներ իրականացնողի հետ (շուկա ստեղծող)՝ Բանկի պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով: Շուկա ստեղծողը «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ում իրականացնում է պարտատոմսերի առքի և վաճառքի գնանշումներ: Շուկա ստեղծողի պարտավորությունների հիմնական պայմանները սահմանվելու են վերջինիս և Թողարկողի միջև կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրով և «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ի «Շուկա ստեղծողի կանոններ»-ով:

6. Լրացուցիչ տեղեկատվություն

Ներգրավված խորհրդատուներ. սույն ազդագրի պատրաստման ընթացքում Բանկը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից:

Աուդիտորական եզրակացություն. բացի սույն ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից:

Երրորդ անձանցից ստացված տեղեկատվություն. որպես սույն բաժնում ներկայացված տեղեկատվության ստացման աղբյուր, երրորդ անձինք ներգրավված չեն:

Շնորհված վարկանիշներ. թողարկվող պարտատոմսերին վարկանիշ չի շնորհվել:

Բաժին 3. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Անկախ աուդիտորները

Բանկի 2011թ. անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, 2012թ.՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն, 2013թ., 2014թ., 2015թ., 2016թ., 2017թ. և 2018թ.՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է ՝

ՀՀ, ք. Երևան, 0012, Վաղարշյան 8/1, հեռ. + 374 10 260 964, ֆաքս՝ 374 10 260 961, www.grantthornton.am

Տնօրեն՝ Գագիկ Գյուլբուդաղյան

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է՝

ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության 22, հեռ. + 374 10 58 24 78, + 374 10 54 43 01, ֆաքս՝ +374 10 56 24 04, www.bakertilly.am

Տնօրեն՝ Փառանձեմ Գևորգյան

2. Ռիսկային գործոններ

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Բանկի առաքելությանը, ռազմավարական ու միջանկյալ նպատակներին համահունչ և ուղղված է Բանկի ֆինանսական կայունության ապահովմանն ու հեղինակության ամրապնդմանը:

Բանկը հատկապես կարևորում է ներքոնշյալ ռիսկերի կառավարումը, սակայն ներդրողը պետք է գիտակցի, որ նշված ռիսկերից բացի հնարավոր են նաև այլ ոչ բարենպաստ դեպքերի զարգացումներ, որոնք հետագայում կարող են անցանկանալի հետևանք ունենալ Բանկի ֆինանսական վիճակի, արդյունքների, հեղինակության վրա, ինչպես նաև պարտատոմսերի ներդրումային որակների վրա:

Վարկային ռիսկն այն ներկա կամ ապագա հավանականությունն է, որ բանկի վարկառուն կամ այլ պարտապանը կխախտի բանկի հետ կնքած պայմանագրի պայմանները կամ չի գործի այդ պայմանագրի պայմաններին համապատասխան, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և/կամ կապիտալի վրա: Վարկային ռիսկը ծագում է բոլոր այն գործարքներից, որոնց արդյունքում առաջանում են փաստացի, պայմանական կամ պոտենցիալ պահանջներ բանկի պարտապանների նկատմամբ: Վարկային ռիսկը Բանկում տարանջատվում է երկու խմբի՝ վարկառուի ռիսկ, պորտֆելային ռիսկ: Վարկային ռիսկերի կառավարման գլխավոր խնդիրը բանկի համար հանդիսանում է վարկային ռիսկերի ժամանակին բացահայտումը, գնահատումը և դրանց նվազեցման ուղղությամբ համապատասխան քայլերի իրականացումը: Բանկի կողմից մշակված համապատասխան մեթոդաբանության համաձայն՝ նախքան վարկի տրամադրումը, գնահատվում է պոտենցիալ վարկառուի վարկունակությունը: Վարկային ռիսկի կանխարգելման տեսանկյունից վարկավորման ժամանակ էապես կարևորվում է այնպիսի սկզբունքների պահպանումը, ինչպիսիք են վարկի ապահովվածությունն ու նպատակայնությունը: Վարկի տրամադրումից հետո, վարկային պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում, Բանկի կողմից իրականացվում է վարկի մոնիթորինգ՝ վարկառուի վճարունակությունը և վարկի ապահովվածությունը պարբերաբար գնահատելու և հնարավոր վարկային ռիսկի զսպման ուղղությամբ համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով:

Պարբերաբար վերլուծության է ենթարկվում նաև Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը՝ ըստ տնտեսության ճյուղերի, հաճախորդների և վարկատեսակների, պորտֆելի դիվերսիֆիկացիան և որակն ապահովելու նպատակով: Բանկի Խորհրդի կողմից հաստատված համապատասխան ներքին իրավական ակտով սահմանված են վարկային ռիսկը զսպող ներբանկային նորմատիվներ (տնտեսության մեկ ճյուղի գծով ռիսկի առավելագույն չափի, վարկային ընդհանուր ռիսկի առավելագույն չափի, վարկային պորտֆելի որակի ռիսկի առավելագույն չափի, վարկային պորտֆելի որակի

ռիսկի առավելագույն չափի՝ ըստ առանձին վարկատեսակների, մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի, խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի, Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի, Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի և այլն):

Ստորև ներկայացված է 30.09.2019թ. դրությամբ Բանկի կողմից տրամադրված վարկերի և փոխատվությունների պորտֆելի որակն՝ ըստ առանձին վարկավորման ոլորտների:

հազ. ՀՀ դրամ

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ	Չաշխատող ակտիվներ
Վարկեր և փոխատվություններ այդ թվում՝	510,999,032	12,140,843
1. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	10,185,534	234,117
2. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	20,296,135	77,041
3. Մշակող արդյունաբերություն	37,552,424	684,890
4. Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	19,031,238	243,460
5. Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	9,437	1,115
6. Շինարարություն	57,153,426	726,136
7. Առևտուր	139,117,630	4,295,643
8. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	14,123,092	91,192
9. Կեցության և հանրային		

սննդի կազմակերպում	35,936,928	1,298,473
10. Տեղեկատվություն և կապ	9,368,210	239
11.Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	37,054	2,131
12. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	19,715,803	197,253
13.Կրթություն	5,660,613	919
14. Առողջապահություն	895,669	
15.Մշակույթ, զվարճություն, հանգիստ	357,086	
16. Տնտեսության այլ ճյուղեր	66,336,236	9,631
17. Հիպոթեքային վարկեր	12,310,848	376,034
18. Սպառողական և այլ վարկեր	62,911,669	3,866,529

Իրացվելիության ռիսկը բանկի կողմից պարտատերերի օրինական պահանջները ժամանակին չկատարելու հետ կապված հնարավոր կորուստների հավանականությունն է: Բանկում իրացվելիության կառավարման նպատակն է՝ ստեղծել այնպիսի ֆինանսական կարողությունների ամբողջություն, որը հնարավորություն կտա առանց լուրջ հիմնախնդիրների բավարարելու բոլոր տեսակի կրեդիտորների, ավանդատուների և այլ հաճախորդների օրինական դրամական պահանջները, որոնք կարող են արտացոլված լինել Բանկի հաշվեկշռային և հետհաշվեկշռային հոդվածներում, ինչպես

նաև այս ամենի հետ մեկտեղ ապահովել շահութաբերության հնարավոր առավելագույն մակարդակ:

Գործառնական ռիսկն այն կորստի հավանականությունն է, որը կարող է առաջանալ անբավարար կամ ձախողված ներքին գործարար-գործընթացների, համակարգերի, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների արդյունքում: Գործառնական ռիսկը ներառում է նաև իրավական, տեղեկատվական տեխնոլոգիաների և հեղինակության ռիսկերը:

- ***Իրավական ռիսկը*** Բանկի գործունեությունը կարգավորող նորմատիվային և օրենսդրական փոփոխությունների արդյունքում Բանկի գործունեության որոշ ուղղությունների վերանայման կամ դրանցից հրաժարվելու հետևանքով Բանկի շահութաբերության վրա բացասաբար ազդելու հավանականությունն է:
- ***Տեղեկատվական տեխնոլոգիաների ռիսկը*** տեղեկատվական համակարգերի ամբողջականության խախտման, այդ համակարգերի խափանման կամ դրանցում չարտոնված առնչության արդյունքում տվյալների կորստի, սխալների առաջացման կամ գործունեության ընդհատման հավանականությունն է:
- ***Հեղինակության ռիսկը*** հասարակական բացասական կարծիքի հետևանքով Բանկի կողմից իր գործընկերներին, հաճախորդներին կորցնելու, ինչպես նաև նոր գործարար կապեր հաստատելուց զրկվելու հավանականությունն է, որը կարող է հանգեցնել Բանկի համար զգալի ֆինանսական կորուստների:

Բանկում գործառնական ռիսկերի կառավարման նպատակով աշխատանքային գործընթացներում, գործառնություններում և գործառույթներում ներդրված են ներքին հսկողության համապատասխան մեխանիզմներ:

Շուկայական ռիսկն առաջանում է փոխարժեքների, շուկայական տոկոսադրույքների և գների ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում:

Բանկում ***արտարժութային ռիսկը*** գնահատվում է միջազգային պրակտիկայում ընդունված VaR (Value at Risk) մոդելով, որը որոշակի հավանականությամբ կանխատեսում է արտարժույթի՝ ապագայում սպասվող առավելագույն տատանման մակարդակը՝ հաշվարկելով Բանկի հավանական կորստի առավելագույն մեծությունը: Արտարժութային ռիսկի զսպման նպատակով Բանկում իրականացվում է արտարժութային դիրքերի ամենօրյա մոնիթորինգ: Իսկ արտարժութային բաց դիրքերի առկայության դեպքում՝ հնարավոր կորուստներից խուսափելու նպատակով կիրառվում են հեջավորման գործիքներ:

Բանկում ***տոկոսադրույքի ռիսկի*** կառավարման խնդիրն է՝ պահպանել ակտիվների ու պարտավորությունների տոկոսադրույքների սպրեդի և զուտ տոկոսային մարժայի նպատակային մակարդակները: Տոկոսադրույքի ռիսկի զսպման նպատակով Բանկում գործում են ակտիվների և պարտավորությունների գնագոյացման (տոկոսադրույքների սահմանման) հատուկ մշակված մեխանիզմներ:

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում՝ ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում, հնարավոր կորուստների գնահատում ամսական կտրվածքով կիրառվող սթրես թեստերի միջոցով, ֆինանսական գործիքների գծով սահմանաչափերի սահմանում:

Մրցակցային ռիսկն առաջանում է բանկային համակարգում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում և այն կարող է իր ազդեցությունը թողնել Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա: Մրցակցային ռիսկի կառավարումը Բանկում իրականացվում է բիզնես ստորաբաժանումների և Մարքետինգային հետազոտությունների բաժնի կողմից՝ պարբերաբար իրականացվող Բանկի և այլ բանկերի կողմից առաջարկվող ծառայությունների տեսականու և պայմանների համեմատության միջոցով:

Այլ ռիսկեր. վերը նշված ռիկերից բացի այլ ռիսկեր, ինչպես օրինակ՝ քաղաքական, սոցիալական, ռազմավարական և այլն:

3. Տեղեկատվություն Բանկի մասին

3.1. Բանկի ֆիրմային անվանումը

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն

ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество “АРМБИЗНЕСБАНК”

անգլերեն՝ “ARMBUSINESSBANK” Closed Joint Stock Company

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ

ռուսերեն՝ ЗАО “АРМБИЗНЕСБАНК”

անգլերեն՝ “ARMBUSINESSBANK” CJSC

Բանկը հիմնադրվել է որպես «Արմինվեստբանկ» փայատիրական բանկ, 1994թ. վերակազմավորվել է որպես «Հայինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերություն, իսկ 2006թ.՝ վերանվանվել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի:

Բանկի ապրանքանիշը ներկայացված է ստորև:

3.2. Բանկի գրանցման վայրը և պետական գրանցման համարը

Բանկի գրանցման վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48, գրանցման համարը՝ 40:

3.3. Բանկի ստեղծման ամսաթիվը

Բանկը փաստացի գործունեությունը սկսել է իրականացնել 1991 թվականի դեկտեմբերից, մինչ օրս՝ շուրջ 28 տարի:

3.4. Բանկի գտնվելու վայրը. ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48:

3.5. Կապի միջոցները

Հեռախոսահամարներ՝ (+374 10) 59-20-20, (+374 60) 37-25-00

Ֆաքս՝ (+37410) 59 20 64

Էլեկտրոնային փոստ՝ info@armbusinessbank.am

Ինտերնետային կայք-էջ՝ www.armbusinessbank.am

3.6. Բանկի հիմնադրման երկիրը, մասնաճյուղային ցանցը

Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Գործող 61 մասնաճյուղերից 29-ը գտնվում են Երևանում, 25-ը՝ ՀՀ մարզերում և 7 մասնաճյուղ՝ Արցախի Հանրապետությունում: Բանկի գլխամասային գրասենյակը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48 հասցեում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում են մասնաճյուղերի գործունեության հասցեները:

	Մասնաճյուղի անվանում	Հասցե
1.	Կենտրոն	ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 20
2.	Երևան	ՀՀ, ք. Երևան, Աբովյան 43
3.	Շենգավիթ	ՀՀ, ք. Երևան, Գ. Նժդեհի 31/36
4.	Կիևյան	ՀՀ, ք. Երևան, Կիևյան 11 Ա շենք թիվ 64
5.	Խորենացի	ՀՀ, ք. Երևան, Եր. Քոչար 24/1
6.	Արցախ	ՀՀ, ք. Երևան, Էրեբունի 18
7.	Էրեբունի	ՀՀ, ք. Երևան, Ավանեսովի 8/3 շենք, թիվ 47
8.	Հայրենիք	ՀՀ, ք. Երևան, Սողոմոն Տարոնցի փող., 26/4

9.	Մալաթիա	ՀՀ, ք. Երևան, Արա Սարգսյան 19
10.	Նոր Նորք	ՀՀ, ք. Երևան, Թոթովենցի 4 նրբանցք
11.	Սեբաստիա	ՀՀ, ք. Երևան, Րաֆֆու փող., 77 շենք, շինություն 60
12.	Քանաքեռ	ՀՀ, ք. Երևան, Զ. Սարկավագի փող., թիվ 72/9
13.	Թալին	ՀՀ, ք. Թալին, Գայի 1
14.	Վանաձոր	ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծ 44
15.	Քաջարան	ՀՀ, ք. Քաջարան, Լեռնագործների 15
16.	Ստեփանակերտ	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան փող., թիվ 25/4
17.	Խաչեն	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ս. Դավթի փող. 15
18.	Մարտունի	ԱՀ, ք. Մարտունի, Ազատամարտիկների փող.
19.	Մարտակերտ	ԱՀ, ք. Մարտակերտ, Ազատամարտիկների 124/2
20.	Ասկերան	ԱՀ, ք. Ասկերան, Շահումյան 3
21.	Հադրութ	ԱՀ, ք. Հադրութ, Գ. Նժդեհի 3 Բ
22.	Շուշի	ԱՀ, ք. Շուշի, Ն. Դուման 2 շենք 1 հարկ N 72
23.	Արմավիր	ՀՀ, ք. Արմավիր, Հանրապետության 6
24.	Արարատ	ՀՀ, ք. Արարատ, Շահումյան 30/1
25.	Անի	ՀՀ, ք. Գյումրի, Պ. Սևակի 13
26.	Գյումրի	ՀՀ, ք. Գյումրի, Անկախության հրապարակ 8
27.	Վարդենիս	ՀՀ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան փող., թիվ 21/2

28.	Նոր-Հաճըն	ՀՀ, ք. Նոր-Հաճըն, Գայի 2
29.	Ագարակ	ՀՀ, ք. Ագարակ, Գ. Նժդեհի 76
30.	Աբովյան	ՀՀ, ք. Աբովյան, Ռոսիայի փող. թիվ 1/20
31.	Դիլիջան	ՀՀ, ք. Դիլիջան, Գետափնյա փողոց, թիվ 2/15
32.	Աշտարակ	ՀՀ, ք. Աշտարակ, Վ. Պետրոսյան 16
33.	Գավառ	ՀՀ, ք. Գավառ, Բունիաթյան 18/1
34.	Մասիս	ՀՀ, ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ 55
35.	Արարատյան	ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պողոտա, թիվ 10 շենք
36.	Արշակունի	ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 127/21
37.	Արթիկ	ՀՀ, ք. Արթիկ, Բաղրամյան փողոց, թիվ 14/10
38.	Սևան	ՀՀ, ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց 13/14
39.	Կոմիտաս	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պողոտա 61 շենք, 60-61 շին.
40.	Ալաշկերտ	ՀՀ, ք. Մարտունի, Պռոշյան փողոց 2 շենք, թիվ 17-18
41.	Արտաշատ	ՀՀ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փողոց 107
42.	Արաբկիր	ՀՀ, ք. Երևան, Ն. Զարյան 27
43.	Ավան	ՀՀ, ք. Երևան, Խուդյակով 165/4
44.	Ապարան	ՀՀ, ք. Ապարան, Բաղրամյան 24
45.	Չարբախ	ՀՀ, ք. Երևան, Արարատյան փողոց 62/23
46.	Հրազդան	ՀՀ, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ., 4-րդ փողոց, թիվ 8

47.	Տերյան	ՀՀ, ք. Երևան, Տերյան 69
48.	Տաշիր	ՀՀ, ք. Երևան, Մ. Խորենացի 33
49.	Ձորագետ	ՀՀ, ք. Տաշիր, Երևանյան փողոց, 6-րդ թաղամաս, 208/1
50.	Մերգելյան	ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 1
51.	Քաջազնունի	ՀՀ, ք. Երևան, Քաջազնունու փողոց 5 շենք, 26 շինություն
52.	Նոր-Արեշ	ՀՀ, ք. Երևան, Արցախի փողոց թիվ 17/9
53.	Նոր-Ավան	ՀՀ, ք. Երևան, Բաբաջանյան փողոց, թիվ 44/1
54.	Դավթաշեն	ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն, Տ. Պետրոսյան փողոց, թիվ 1/11
55.	Նորագավիթ	ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Նորագավիթ փողոց, թիվ 93/1
56.	Կապան	ՀՀ, ք. Կապան, Մ. Ստեփանյան փողոց, 3/12
57.	Աջափնյակ	ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, Բաշինջաղյան փողոց, 165/2
58.	Մասիվ	ՀՀ, ք. Երևան,Նոր-Նորք, Միկոյան 2/13
59.	Զվարթնոց	ՀՀ, ք. Երևան, Զվարթնոց օդանավակայան
60.	Լոռի	ՀՀ, ք. Լոռի, Լուսավորչի 38/1
61.	Կումայրի	ՀՀ, ք. Գյումրի, Թբիլիսյան խճուղի 2/14

Բանկն ունի մեկ ներկայացուցչություն Լիբանանում:

3.7. Բանկի տնտեսական նորմատիվները

Բանկային գործունեության վերահսկման նպատակով՝ սահմանված են տնտեսական նորմատիվներ, որոնցով կարևորվում է նաև բանկերի իրացվելիությունը: Ստորև ներկայացվում են իրացվելիության նորմատիվները 2016-2018 թվականների համար՝

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ-ի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2018թ.	Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2017թ.	Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2016թ.
$Ն_1$ (Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն)	նվազագույնը՝ 12%	13.5	13.5	12.98
$Ն_2^1$ (Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն)	նվազագույնը՝ 15%	22.21	25.27	17.1
$Ն_2^2$ (Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն)	նվազագույնը՝ 60%	82.07	132.18	120.47
$Ն_3^1$ (մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը)	առավելագույնը՝ 20%	19.39	19.76	19.93
$Ն_3^2$ (խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը)	առավելագույնը՝ 500%	498.77	497.25	485.47
$Ն_4^1$ (բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը)	առավելագույնը՝ 5%	4.6	4.47	3.86
$Ն_4^2$ (բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը)	առավելագույնը՝ 20%	19.04	19.33	12.4

Բանկի այլ տնտեսական նորմատիվների վերաբերյալ տեղեկատվություն ներդրողները կարող են գտնել Բանկի ինտերնետային կայք էջի Հաշվետվություններ ենթաբաժնում:

4. Բիզնեսի նկարագիրը

4.1. Հիմնական գործունեությունը

Բանկն իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով բանկերին թույլատրված ֆինանսական գործառնություններ, որոնք իրականացնելիս ղեկավարվում է հետևյալ սկզբունքներով՝ ֆինանսների ճիշտ ժամանակին բաշխում, լիակատար տնտեսական ինքնուրույնություն և իր գործունեության արդյունքների համար տնտեսական պատասխանատվություն, ծախսերի կրճատում կամ հիմնավորված անխուսափելի ավելացում, ժամանակի և ռեսուրսների արդյունավետ օգտագործում, բանկային ռիսկերի նվազեցում, կառավարում և զսպման նպատակով հաստատված տնտեսական և իրավական նորմատիվ ակտերի դրույթների պահպանում: Բանկն իր հիմնական գործունեությունը ծավալելով ՀՀ-ում ու ԱՀ-ում՝ առաջարկում է հետևյալ բանկային ծառայությունները.

- վճարահաշվարկային գործառնություններ,
- ավանդների ներգրավում,
- դրամական փոխանցումներ,
- հաճախորդների հաշիվների սպասարկում,
- վարկերի տրամադրում,
- արտարժույթի առք ու վաճառք,
- կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների ընդունում,
- ֆինանսական վարձակալություն (լիզինգ),
- առևտրային գործարքների (պարտքի) ֆինանսավորում (ֆակտորինգ),
- պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում,
- աշխատավարձային նախագծերի իրականացում,
- գործառնություններ պետական և կորպորատիվ արժեթղթերի շուկայում,
- ֆինանսական գործառնություններ միջբանկային շուկայում,
- բանկային երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրում,
- միջազգային ինկասո գործառնություններ,

- ինտերնետ-բանկինգ,
- մոբայլ-բանկինգ,
- «Բանկ-հաճախորդ» համակարգ,
- ապահովագրության ոլորտում գործակալական ծառայություններ,
- անհատական բանկային պահատեղերի տրամադրում,
- առարկայազուրկ մետաղական հաշիվների բացում և այլն:

30.09.2019թ. դրությամբ Բանկը սպասարկում է 147,863 հաճախորդ, որից 139,353-ը ֆիզիկական անձինք են, իսկ 8,510-ը՝ իրավաբանական անձինք: Թղթակցային հարաբերություններ ունի 30 բանկերի հետ, որից 20-ը ոչ ռեզիդենտ բանկեր են: Բանկը նոստրո թղթակցային հաշիվներ ունի 10 ռեզիդենտ և 19 ոչ ռեզիդենտ բանկերում, իսկ Բանկում լորո թղթակցային հաշիվներ ունեն 5 ռեզիդենտ և 4 ոչ ռեզիդենտ բանկեր:

Բանկի հիմնական նպատակներից է նոր բանկային տեխնոլոգիաների կիրառումը, ինչպես նաև հաճախորդներին բանկային ծառայությունների ամբողջական փաթեթի առաջարկումը:

Կատարվում են աշխատանքներ Բանկում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին մատուցվող ծառայությունների կատարելագործման գծով, ինչպես նաև մշակվել և ներդրվել են նոր բանկային ապրանքատեսակներ, որոնցից են «Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրի շրջանակներում, «ՀՀ գյուղատնտեսության ոլորտում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրի շրջանակներում և «ՀՀ-ում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկերը :

Կատարելագործվել և արդիականացվել են հետևյալ բանկային ապրանքատեսակները.

- «ABB-ԽՈՇՈՐ ԲԻԶՆԵՍ» Գերմանահայկական Հիմնադրամի «Տնտեսության կայունացման վարկավորման» ծրագրի շրջանակներում տրամադրվող խոշոր բիզնեսի վարկեր
- «ABB-ԷՆԵՐԳՈ» Գերմանահայկական Հիմնադրամի «Վերականգնվող էներգիայի զարգացում» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր, չվերականգնվող վարկային գծեր
- «ABB-ՓՄՁ ԲԻԶՆԵՍ» Գերմանահայկական Հիմնադրամի «ՓՄՁ ֆինանսական միջոցների հասանելիություն» վարկային ծրագրի (Համաշխարհային Բանկ) շրջանակներում տրամադրվող վարկեր, վարկային գծեր,
- «ABB–ՄԱՔՍԱՅԻՆ» Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին մաքսային քարտով տրամադրվող օվերդրաֆտներ
- «ABB-ՓՄՁ ԲԻԶՆԵՍ» Հայաստանի Ամերիկյան Համալսարանի «Թրփանջյան գյուղական համայնքների զարգացման» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր
- «ABB-ԷՆԵՐԳՈ» Գերմանահայկական Հիմնադրամի «Վերականգնվող էներգիայի զարգացում» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր, չվերականգնվող վարկային գծեր
- Աշխատավարձային նախագծեր:

4.2. Հիմնական շուկաներ

4.2.1. Բանկի ծառայությունների մատուցման հիմնական շուկաները

Բանկը շարունակում է իր ակտիվ գործունեությունը սեփական ռեսուրսներով և միջազգային ծրագրերով վարկավորման բնագավառում: Շուկայում նոր և մրցունակ առաջարկություններով հանդես գալու համար՝ շարունակում ենք համագործակցությունը միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ:

2018-2019թթ. ընթացքում պարբերաբար շուկային համընթաց կատարվել են ավանդատեսակների գծով պայմանների վերանայում և օպտիմալացում: Ավանդների ձևակերպման բիզնեսպրոցեսի օպտիմալացում՝ վերանայում /կարգի փոփոխություն/: Աշխատավարձային նախագծերի շրջանակներում տրամադրվող քարտերի գծով կատարվել է սակագնային փաթեթների օպտիմալացում: Ուսանողական քարտերի շրջանակներում ընդլայնվել են համագործակցող ուսումնական հաստատությունների ցանկը՝ պայմանագրեր են կնքվել քոլեջների, ուսումնարանների հետ: Ներդրվել են առանց հպման քարտատեսակներ: ՃՈ հետ համագործակցության շրջանակներում իրականացվել է նոր պրոեկտ՝ աշխատավարձային նախագծերի գծով և Ճանապարհային ոստիկանների կողմից հավաքագրված գումարների ընդունման և բյուջե փոխանցման գծով:

Պարբերաբար վերանայվել են գործող համակարգերի գծով սակագները: Հաճախորդների հեռահար սպասարկման ոլորտում մշակվել և ներդրվել է Մոբայլ Բանկինգ ծառայությունը:

Ընդլայնվել են բանկոմատների ցանկը և աշխարհագրությունը (ավելացվել է թվով 10 ինքնասպասարկման մեքենա): Պարբերաբար ուսումնասիրվել են բանկոմատների տեղակայման արդյունավետությունը և կատարվել են հասցեափոխություններ՝ բանոկմատների աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

2018թ-ի ընթացքում, Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հիմնական ուղենիշներին համաձայն, մշակվել և ներդրվել են մի շարք նորամուծություններ, այդ թվում՝

- առանց հպման և լոկալ քարտեր,
- ապահովագրական համակարգերի տեղադրում,
- դրամային փոխարժեքների թարմացումների ավտոմատ փոփոխման համակարգի ստեղծում,

- Swift վճարահաշվարկային համակարգի անցում Windows2016 ավելի արդիական և հզոր օպերացիոն համակարգով սերվերների,
- անցում Windows 7 օպերացիոն համակարգից Windows 10-ի,
- անցում էլ.ցանցի վճարումների Online համակարգի:

Բանկը նախատեսում է ընդլայնել միջազգային համագործակցությունը և սկիզբ դնել նոր հարաբերությունների հաստատմանը՝

- EBRD, IFC, ADB և այլ միջազգային ֆինանսական և ներդրումային բանկերի հետ համագործակցում (արտաքին առևտրի ֆինանսավորում, ծրագրերի համաֆինանսավորում և այլն),
- թղթակից բանկերում կրեդիտորական գծերի օվերդրաֆտ ստացում,
- թղթակից բանկերում փաստաթղթային գործառնությունների իրականացման համար լրացուցիչ լիմիտների ստացում,
- ԱՐՈՒՍ դրամական փոխանցումների միասնական համակարգին միացում:

4.2.2. Բանկի մրցակցային դիրքի նկարագրությունը

Բանկն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է հետևյալ սկզբունքներով, որոնք Բանկին հնարավորություն են տալիս պահպանել և ամրապնդել մրցակցային առաջատար դիրքերը ՀՀ բանկային համակարգում՝

ա) ֆինանսների ճիշտ ժամանակին բաշխում,

բ) լիակատար տնտեսական ինքնուրույնություն և իր գործունեության արդյունքների համար տնտեսական պատասխանատվություն,

գ) ծախսերի կրճատում կամ հիմնավորված անխուսափելի ավելացում,

դ) ժամանակի և ռեսուրսների արդյունավետ օգտագործում,

ե) բանկային ռիսկերի նվազեցում,

զ) կառավարում և զսպման նպատակով հաստատված տնտեսական և իրավական նորմատիվ ակտերի դրույթների պահպանում:

Բանկի համար առաջնային է հաճախորդների և գործընկերների հետ փոխհարաբերություններում անհատական մոտեցման ապահովումը: Հարաբերությունները բացառապես կառուցվում են փոխշահավետության, փոխվստահության և բիզնես էթիկայի նորմերի հիման վրա: Նման մոդելում փոխհարաբերությունները դրված են շուկայական հիմքի վրա, կրում են պայմանագրային բնույթ, ինչպես նաև ենթադրում են հաճախորդի ժամանակի խնայում, սպասարկման չափանիշների և որակի բարձրացում, բանկ-հաճախորդ բիզնեսի զարգացում: Բանկի գործունեության կարևորագույն սկզբունքներից է Բանկի աշխատակիցների նկատմամբ ղեկավարների կողմից արդարացի և հետևողական վերաբերմունքի ապահովումը: Կարևորելով համախմբված թիմային աշխատանքը՝ որպես առաջընթացի և զարգացման հիմնական գործոն, Բանկը միշտ գնահատում է իր յուրաքանչյուր աշխատակցի պոտենցիալը և կարողությունները, ստեղծում է խթանող և խաղաղ աշխատանքային պայմաններ, օգտվելով մրցութային ընտրությունից՝ ներգրավում նոր, հեռանկարային կադրեր: Աշխատանքի արդյունավետ կազմակերպման գործում Բանկը առաջնորդվում է նաև դինամիկ զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների քաղաքականության իրականացման սկզբունքով: Վերջինս ենթադրում է առաջավոր համակարգչային տեխնիկայի, ժամանակակից տեխնոլոգիաների, ներբանկային և միջբանկային ավտոմատացված համակարգերի, միջազգային վճարային ու ֆինանսական համակարգերի արդյունավետ և նպատակային կիրառում, գործընթացների աշխատատարության, ծախսատարության և գործառնական ռիսկերի նվազեցում: Սեփական պրոցեսինգային կենտրոնի ներդնումը Բանկին հնարավորություն տվեց կրճատել քարտային գործառնությունների հետ կապված ծախսերը, ինչի շնորհիվ Բանկը կարողացավ առավել գրավիչ առաջարկություններով հանդես գալ շուկայում և ընդլայնել քարտապան հաճախորդների բազան:

Իր կողմից առաջարկվող ծառայությունները բնակչության լայն զանգվածներին հասանելի դարձնելու նպատակով՝ Բանկը կարևորում է մասնաճյուղային լայն ցանցի

առկայությունը և 30.09.2019թ. դրությամբ ունի գործող հիսունինը մասնաճյուղ՝ քսանինը՝ Կենտրոն (7 մասնաճյուղ), Շենգավիթ (5 մասնաճյուղ), Էրեբունի (3 մասնաճյուղ), Մալաթիա-Սեբաստիա (3 մասնաճյուղ), Արաբկիր (4 մասնաճյուղ), Ավան (2 մասնաճյուղ), Նոր Նորք (2 մասնաճյուղ), Քանաքեռ-Զեյթուն, Դավթաշեն և Աջափնյակ վարչական շրջաններում, երկուսը՝ Գյումրի քաղաքում, մեկական՝ Վանաձոր, Թալին, Կապան, Քաջարան, Արմավիր, Արարատ, Մասիս, Արտաշատ, Աշտարակ, Վարդենիս, Նոր Հաճըն, Դիլիջան, Ագարակ, Աբովյան, Գավառ, Ալաշկերտ, Սևան, Արթիկ, Ապարան, Տաշիր և Հրազդան քաղաքներում և յոթը՝ ԱՀ-ում՝ Ստեփանակերտ (2 մասնաճյուղ), Մարտունի, Հադրութ, Մարտակերտ, Ասկերան և Շուշի քաղաքներում:

Տնտեսության գլոբալացման և տեխնոլոգիական առաջընթացի հետ կապված՝ առավել կարևորվում է գործուն ներքին վերահսկողության համակարգի ներդնումը՝ զեղծարարություններից և անփութություններից խուսափելու համար: Հուսալի ներքին հսկողության համակարգը հանդիսանում է Բանկի առողջ և ապահով գործունեության երաշխիքը: Ներքին վերահսկողության համակարգը կոչված է վերահսկել հետևյալ գործառույթները՝ արդյոք ֆինանսական և գործառնական տեղեկատվությունը ճշգրիտ է և հուսալի, արդյոք հնարավոր ռիսկերը բացահայտված և հասցված են նվազագույնի, արդյոք Բանկը հետևողական է ՀՀ կենտրոնական բանկի, բանկային գործունեությունը կանոնակարգող ընթացակարգերի, այլ ներքին իրավական ակտերի պահանջներին, արդյոք ապահովված է Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող աշխատանքների բավարար մակարդակ, արդյոք ռեսուրսներն օգտագործվում են արդյունավետ և արդյոք Բանկի կողմից սահմանված խնդիրները ստանում են արդյունավետ լուծումներ: Ներքին վերահսկողության համակարգը գործում է անկախ և օբյեկտիվության սկզբունքի հիման վրա:

Բանկի ղեկավարությունը մշտապես մեծ ուշադրություն է դարձնում առկա խնդիրների լուծման որոշումների կայացման կոլեգիալության սկզբունքին, որի իրագործման համար Բանկում գործում են հատուկ մասնագիտացված կոմիտեներ և

հանձնաժողովներ, որոնցից են «Վարկային կոմիտեն», «Ռիսկերի կառավարման հանձնաժողովը», «Ռազմավարական զարգացման, պլանավորման և հաճախորդների սպասարկման հանձնաժողովը»: Վերջիններիս գործունեությունը նպատակաուղղված է Բանկի գործունեության արդյունավետության բարձրացմանը, ընթացիկ և ռազմավարական նպատակների իրագործման ապահովմանն ու Բանկի գործունեության հետ առնչվող ռիսկերի արդյունավետ կառավարմանը: Բանկի հեռանկարային զարգացման առաջանցիկ տեմպերի ապահովման, ներդրումային ծրագրերի գնահատման առումով իր ուրույն տեղն ունի Ռիսկերի արդյունավետ կառավարման համակարգը, որը պարբերաբար վերանայվում է՝ ելնելով արտաքին և ներքին միջավայրում տեղի ունեցող փոփոխություններից, շուկայում առկա միտումներից և մրցակցության մակարդակից: Ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունն ապահովելու նպատակով Բանկում իրականացվում է հնարավոր ռիսկերի բացահայտում, քանակական գնահատում, մշակվում են համապատասխան միջոցառումներ՝ կանխելու կամ նվազագույնի հասցնելու հնարավոր ռիսկերի ազդեցությունը Բանկի ընթացիկ գործունեության վրա՝ ապահովելով Բանկի բնականոն գործունեությունն ու ֆինանսական կայունությունը:

5. Բանկի կառուցվածքը

Բանկի կազմակերպական կառուցվածքը ներկայացված է սույն ազդագրի Հավելված 1-ում:

6. Զարգացման վերջին միտումները

Բանկը, մշտապես կարևորելով հաճախորդների սպասարկման բարձր որակն ու նրանց հետ երկարաժամկետ կայուն հարաբերություններ հաստատելը, 2018թ. ընթացքում ևս վերանայել է առաջարկվող ծառայությունների սակագներն ու ծավալները, որոնք իրենց հերթին ազդել են Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա: Վերջին հաշվետու տարվա ավարտից մինչև ազդագրի ներկայացման օրն ընկած

ժամանակահատվածի համար մատուցվող ծառայությունների սակագների էական աճ չի գրանցվել: Այսպիսով, ստորև աղյուսակներում ներկայացված են 31.12.2018թ. դրությամբ Բանկի հաշվեկշռային հիմնական հոդվածների փոփոխությունները նախորդ համադրելի ժամանակահատվածի նկատմամբ՝ տարվա կտրվածքով վերջիններիս դինամիկան արտացոլելու նպատակով:

հազ. ՀՀ դրամ

	31.12.2018թ.	*31.12.2017թ.*	*Աճ/նվազում*
Ընդամենը ակտիվներ, այդ թվում՝	**611,824,023**	**547,530,373**	**64,293,650**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	127,342,452	115,576,209	11,766,243
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,898,845	14,036,722	-137,877
Հաճախորդներին տրված վարկեր	435,625,901	382,547,013	53,078,888

	31.12.2018թ.	*31.12.2017թ.*	*Աճ/նվազում*
Ընդամենը պարտավորություններ, այդ թվում՝	**575,856,380**	**510,693,374**	**65,163,006**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	473,205,797	398,967,148	74,238,649

	31.12.2018թ.	*31.12.2017թ.*	*Աճ/նվազում*
Ընդամենը կապիտալ	**35,967,643**	**36,836,999**	**-869,356**


Հարկ ենք համարում նշել, որ 30.09.2019թ. դրությամբ ֆիզիկական անձանցից ներգրաված ժամկետային ավանդների գծով Բանկը շարունակում է զբաղեցնել առաջին հորիզոնականը ՀՀ բանկային համակարգում:

7. Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը /այսուհետ՝ Ժողով/,
- Բանկի խորհուրդը /այսուհետ՝ Խորհուրդ/,
- Բանկի գործադիր մարմինները՝ Բանկի վարչության նախագահը (այսուհետ՝ Վարչության նախագահ) և Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև.



7.1. Բանկի կանոնադրությամբ Բանկի կառավարման մարմիններին վերապահված իրավասությունները

Բանկի Ժողովը

Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

Ժողովի իրավասություններն են՝

- Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,
- Բանկի վերակազմակերպումը,
- Բանկի լուծարումը,
- ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

- Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,
- հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
- Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
- Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
- ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը,
- հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,
- բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը,
- հաստատված օրակարգի շրջանակում օրենքով նախատեսված այլ հարցեր:

Վերը նշված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Բանկի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի Խորհրդին, Բանկի գործադիր մարմնի անդամներին կամ ալ անձի:

Բանկի Խորհուրդը

Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և Բանկի կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

Խորհրդի իրավասություններն են՝

- Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային ծրագրի հաստատումը,
- Ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,
- Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
- Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
- Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,
- Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը,
- Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը,
- շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,

- Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ժողովին ներկայացումը,
- Ժողովի հաստատմանը բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձի ներկայացումը՝
    - Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,
    - Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,
    - Բանկի կողմից Բանկի կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,
    - Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը,
    - Բանկի վերակազմակերպման հարցի ներկայացումը Ժողովի քննարկմանը,
    - Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը,
    - Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,
    - Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,
    - Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական

հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,

- դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,
  - դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը,
  - առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը,
  - առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը,
  - խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,
  - օրենքով և Բանկի կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

Գործադիր մարմինը

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է վարչության նախագահը և վարչությունը:

Վարչության նախագահը (վարչության անդամները) նշանակվում է (են) Խորհրդի կողմից, իսկ վարչության նախագահի տեղակալները՝ Խորհրդի կողմից՝ վարչության նախագահի ներկայացմամբ: Վարչության կառուցվածքում պարտադիր ընդգրկվում են Բանկի վարչության նախագահը, նրա տեղակալը (տեղակալները), գլխավոր հաշվապահը:

Բանկի վարչությունը՝

- կազմակերպում և իրականացնում է Բանկի օպերատիվ գործունեության ղեկավարումը և ապահովում է Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,
- սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների միջնորդավճարների չափերը, ներգրավվող ավանդների և տրամադրվող վարկերի տոկոսադրույքները,

- քննարկում է վերստուգումների, ստուգումների նյութերը, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները,
- լուծում է Բանկի վարչության նախագահի իրավասությանը չպատկանող այլ հարցեր, որոնք սահմանվում են Ժողովի և Խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերով:

Վարչության նախագահը՝

- տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
- գործում է Բանկի անունից առանց լիազորագրի,
- տալիս է լիազորագրեր,
- Բանկի անունից կնքում է գործարքներ,
- Բանկի անունից աշխատակիցների հետ աշխատանքային հարաբերություններում հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ, բացառությամբ Բանկի այն ղեկավարների հետ աշխատանքային հարաբերություններում, ովքեր նշանակվում/ ընտրվում են Խորհրդի կողմից,
- բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
- աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Բանկի աշխատակիցներին, բացառությամբ օրենքով և Բանկի կանոնադրությամբ սահմանված դեպքերի,
- խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված

ստորաբաժանումների կանոնակարգերը, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը,

- իրականացնում է օրենքով, Բանկի կանոնադրությամբ, ինչպես նաև խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

Այն հարցերը, որոնք օրենքով կամ Բանկի կանոնադրությամբ չեն սահմանվել որպես Ժողովի, Խորհրդի, Վարչության կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են Վարչության նախագահի իրավասությանը:

Վարչության նախագահը (վարչությունը) եռամսյակը մեկ Խորհրդին խորհրդի սահմանած ձևով ներկայացնում են իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվություններ Բանկի կանոնադրությամբ և վարչության կանոնակարգով սահմանված կարգով:

Վարչության նախագահի (վարչության) իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների, Բանկի ներքին աուդիտին, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ, եթե բանկի վարչության նախագահի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին: Վարչության նախագահի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական Բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

7.2. Տեղեկություններ Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ

Բանկի Խորհրդի նախագահ՝ Արսեն Միքայելյան

Բնակության վայրը	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Մարտունի փ, 25 տուն
Իրավասությունները	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	«ԱՐՑԱԽ ԳԱԶ» ՓԲԸ Խորհրդի նախագահ
	«Ջի Էմ Հոլդինգ» ՍՊԸ տնօրեն
	«Վիտալի Գրիգորյանց» բարեգործական հիմնադրամի տնօրեն
	«ԲԼԵՍՍ» ՍՊԸ Խորհրդի նախագահ

Խորհրդի անդամ՝ Վիտալի Գրիգորյանց

Բնակության վայրը	ՌԴ, ք. Մոսկվա, Չերտանովի փ. 45շ., մասնաշենք 1, բն. 43
Իրավասությունները	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	«Վիտալի Գրիգորյանց» բարեգործական հիմնադրամի հիմնադիր
	«ԱՐՉ Լիմիթեդ» Բաժնետիրական Ընկերության ներկայացուցչության տնօրեն

Խորհրդի անդամ՝ Սերգեյ Արզումանյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի փող., 63շ., բն. 24
Իրավասությունները	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բացակայում է

Խորհրդի անդամ՝ Ալիկ Չիրկինյան

Բնակության վայրը	ՌԴ, ք. Մոսկվա, Վավիլովի փող., 6 տուն, բն. 161

Իրավասությունները Պարտականությունները	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	«Արչ Լիմիթեդ» ՓԲԸ ներկայացուցչության փոխնախագահ

Խորհրդի անդամ՝ Արզուման Հարությունյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան Եզնիկ Կողբացու փ. 30շ. բն. 3
Իրավասությունները Պարտականությունները	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բացակայում է

Խորհրդի անդամ՝ Սևակ Պետրոսյան

Բնակության վայրը	ՌԴ, ք. Մոսկվա, Սերպուխովսկի վալ փող., 3 տուն, բն. 7
Իրավասությունները Պարտականությունները	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	«ԱՐՉ Լիմիթեդ» բաժնետիրական ընկերության ներկայացուցչության Մարքեթինգի բաժնի պետ

Ժողովի կողմից Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝

ա) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի խորհրդի անդամ (բանկի ղեկավար),

գ) մեկ տարվա ընթացքում բացակայել է Խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից (իրական ժամանակի ռեժիմով և Բանկի

կանոնադրությամբ սահմանված հեռակա մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն),

դ) օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

Բանկի Վարչության նախագահ՝ Արտավազդ Սարգսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան Հ. Քոչար 44փ. բն. 48
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բացակայում է

Վարչության նախագահի տեղակալ-Ֆինանսական դեպարտամենտի տնօրեն, Վարչության անդամ՝ Մանվել Սահակյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան, Նոր-Արեշ 14փ. տուն 5
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բացակայում է

Վարչության նախագահի տեղակալ (Կորպորատիվ բիզնեսի կառավարման դեպարտամենտի աշխատանքների կորդինացնող) Վարչության անդամ՝ Նշան Գրիգորյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան, Զաքյան 3, բն. 79
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բացակայում է

Վարչության նախագահի տեղակալ (Գանձապետական դեպարտամենտի և Միջազգային գործառնությունների դեպարտամենտի կորդինացնող), Վարչության անդամ՝ Մովսես Էլոյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան, Մոլդովական 2/1, բն. 16
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բացակայում է

Վարչության նախագահի տեղակալ (Մանրածախ բիզնեսի զարգացման դեպարտամենտի, Տարածքային զարգացման դեպարտամենտի, ՄԲ և ՓԲ վարկային գործարքների անդերրայթինգի վարչության և Հաճախորդների բիզնես պրոցեսների կառավարման բաժնի կորդինացնող), Վարչության անդամ՝ Ալյոնա Ստրատան

Բնակության վայրը	ք. Երևան, Վահագնի թաղ. Շանթի 20 տուն
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	IMON international (Տաջիկստան) Դիտորդական մարմնի նախագահ
	MAIB Moldova Agroindbank (Մոլդովա) Խորհրդի անդամ

Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ ՝ Նարինե Սարգսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան, Գյուլբենկյան փ. 38ա, բն. 4
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բացակայում է

Ռիսկերի կառավարման և հսկողության դեպարտամենտի տնօրեն, Վարչության անդամ՝ Անի Ղամբարյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք 8-րդ զանգված, շենք 2, բն. 23
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բացակայում է

Ազդագրի ներկայացման պահին Բանկի ակտիվների 10 և ավելի տոկոսը որևիցե մասնաճյուղում կենտրոնացված չէ:

Բանկի և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև ազդագրի ներկայացման պահի դրությամբ շահերի բախում չկա:

8. Հսկող անձինք

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ գտնվում է ՌԴ քաղաքացի Վիտալի Գրիգորյանցի (անձ. AK0688592, հասցե՝ ՌԴ, ք. Մոսկվա, Չերտանովի փ. 45շ., մասնաշենք 1, բն. 43) ուղղակի հսկողության ներքո, քանի որ վերջինս հանդիսանում է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 95% սեփականատեր:

9. Տեղեկատվություն Բանկի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

9.1. Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Բանկի 2017-2018թթ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ անկախ աուդիտորական եզրակացություններով և 2019 թվականի առաջինից երրորդ եռամսյակների միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ներառված են ազդագրում:

Ցանկության դեպքում ներդրողները Բանկի ֆինանսական հաշվետվությունները կարող են ստանալ նաև Բանկի գլխավոր գրասենյակից և մասնաճյուղերից, ինչպես նաև ծանոթանալ Բանկի ինտերնետային կայք-էջում:

9.2. Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2018 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

9.3. Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամիսների ընթացքում Բանկը ներգրավված է եղել դատական վարույթներում, որոնք Բանկի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա կարող են ունենալ կամ ունեցել են էական ազդեցություն: Ստորև համառոտ ներկայացվում են նշված դատական գործերը և դրանցով կայացված դատական ակտերը.

Թիվ ԵԿԴ/5584/02/14 քաղաքացիական գործն ըստ հայցի Բանկի ընդդեմ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի (իրավանախորդ՝ «Առէքսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի), երրորդ անձ «Մաքս Նիկել Դիվելըփմենթ» ՍՊԸ-ի՝ բանկային երաշխիքն անվավեր ճանաչելու պահանջի մասին և ըստ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի հակընդդեմ հայցի ընդդեմ Բանկի, երրորդ անձ «Մաքս Նիկել Դիվելըփմենթ» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ինչպես նաև «Մաքս Նիկել Դիվելըփմենթ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Սողոմոնյանի ինքնուրույն պահանջի՝ սնանկության գործով պահանջատեր «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի ապահովված պահանջը բավարարելու համար Բանկից հօգուտ կառավարիչ Հովհաննես Սողոմոնյանի գումար բռնագանձելու պահանջի մասին

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 02.10.2019թ. կայացվել է Բանկից գումար բռնագանձելու պահանջի մասին վճիռ, որով «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի հակընդդեմ հայցն ամբողջությամբ բավարարվել է: Դատարանը վճռել է Բանկից հօգուտ

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի բռնագանձել 2,063,958.26 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես երաշխիքի և դրա նկատմամբ հաշվեգրված տոկոսների գումար, 19,813,999.2 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար, ինչպես նաև 1,955,650.31 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ երաշխիքի գումարի նկատմամբ՝ սկսած 20.03.2015թ.-ից մինչև պարտքի մարումը հաշվեգրել և Բանկից բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ, իսկ հաշվեգրվող տոկոսների 2 տոկոսը բռնագանձել հօգուտ ՀՀ պետական բյուջեի՝ որպես պետական տուրքի գումար: Նշված վճիռը դեռ ուժի մեջ չի մտել, Բանկի կողմից նախապատրաստվում է վերաքննիչ բողոք:

Թիվ ԵԿԴ/0954/02/14 քաղաքացիական գործ ըստ «Միլլար» ՍՊԸ-ի հայցի ընդդեմ Բանկի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, «Միլլար» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի՝ գումար բռնագանձելու պահաջի մասին

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 16.11.2018թ. կայացվել է Բանկից գումար բռնագանձելու պահանջի մասին վճիռ, որով դատարանը վճռել է Բանկից հօգուտ «Միլլար» ՍՊԸ-ի բռնագանձել 1,625,601,100 ՀՀ դրամ՝ որպես պարտավորության գումար և դրա նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվեգրված տոկոսների գումար, 32,512,022 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար, ինչպես նաև 1,025,483,000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ սկսած 17.11.2018թ.-ից մինչև պարտքի մարումը հաշվեգրել և Բանկից բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ, իսկ հաշվեգրվող տոկոսների 2 տոկոսը բռնագանձել հօգուտ ՀՀ պետական բյուջեի՝ որպես պետական տուրքի գումար: Նշված վճռի դեմ Բանկի կողմից բերվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.05.2019թ. որոշմամբ բավարարվել է՝ 16.11.2018թ. վճիռն ամբողջությամբ բեկանվել է և գործն ուղարկվել է ամբողջ ծավալով նոր քննության: Գործի նոր քննությունը դեռ չի սկսվել:

Թիվ ԵԴ/24965/02/18 քաղաքացիական գործն ըստ հայցի «Նաիրի Բիզնես Տուր» ՍՊԸ-ի ընդդեմ Բանկի՝ պարտավորությունը դադարեցված համարելու պահանջի մասին

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվում է թիվ ԵԴ/24965/02/18 քաղաքացիական գործն ըստ հայցի «Նաիրի Բիզնես Տուր» ՍՊԸ-ի ընդդեմ Բանկի՝ պարտավորությունը դադարեցված համարելու պահանջի մասին: Ներկայացված

հայցադիմումով հայցվորը պահանջել է դադարեցված համարել Բանկի և «Նաիրի Բիզնես Տուր» ՍՊԸ-ի միջև կնքված ֆինանսավորման գործիքներ տրամադրելու հիմնական պայմանագրով «Նաիրի Բիզնես Տուր» ՍՊԸ-ի բոլոր պարտավորությունները: Ֆինանսավորման գործիքներ տրամադրելու հիմնական պայմանագրի շրջանակներում կողմերի միջև կնքվել է վարկային համաձայնագիր, որի հիման վրա «Նաիրի Բիզնես Տուր» ՍՊԸ-ն ստացել է 5,130,000 ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ: Ներկայումս գործը գտնվում է քննության փուլում:

10. Էական պայմանագրերը

Բանկում առկա չեն ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 1 տարվա ընթացքում Բանկի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Բանկի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

11. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Ներկայացվող ազդագրում փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն չի օգտագործվել:


12. Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները, ինչպես նաև որպես հաշվետու թողարկող, ներդրումների համար պատրաստվող տարեկան և միջանկյալ հաշվետվություն–վերլուծությունները մշտապես մատչելի են հանրությանն ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված

են Բանկի ինտերնետային կայք-էջում, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Բանկի գլխամասային գրասենյակ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կազմակերպական կառուցվածքը



Հավելված 2. Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևեր

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) =

(Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն) x 100

Ակտիվների շահութաբերություն (ROA) =

(Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն) x 100

Զուտ շահույթի մարժա (NPM) =

Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Գործառնական եկամուտ

Ակտիվների օգտագործման գործակից (AU) =

Գործառնական եկամուտ / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) =

Ընդհանուր ակտիվների միջին մեծություն / Սեփական կապիտալի միջին մեծություն

Զուտ տոկոսային մարժա (NIM) =

Զուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն =

Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր =

Տոկոսային ծախսեր / Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) =

Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սպրեդ

(Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն) - (Տոկոսային ծախսեր/Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)

Հավելված 3. Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /իրավաբանական անձ/

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական

Հայտի Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը _____

(օր, ամիս, տարի, ժամ)

Իրավաբանական անձի անվանումը _____

(ֆիրմայի անվանում, կազմակերպաիրավական ձև)

Պետական գրանցման տվյալները _____

(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գրանցման և գտնվելու վայրը _____

(գրանցման և գտնվելու վայրի հասցեները)

ՀՎՀՀ _____

Ռեզիդենտությունը _____

(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկված արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ ( )

քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման գինը ( )

գինը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը ( )

ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ԱՄՆ դոլարով

բանկային հաշվի համարը _____
(լրացվում է արտարժութային պարտատոմսերի ձեռք բերման դեպքում)

Անձի ՀՀ դրամով
բանկային հաշվի համարը _____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող
անձի անվանումը _____

Արժեթղթերի հաշվի
համարը _____

Սույնով հավաստում ենք, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել ենք վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրին, ստանձնում ենք այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:
Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:
Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու/ակցեպտավորելու պահից, այն կհանդիսանա Կողմերի միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից

Ձեռք բերվող
պարտատոմսերի ԱՄՏԾ _____

Թողարկված պարտատոմսերի
ընդհանուր քանակ՝ հատ (_____)
քանակը թվերով (գրառերով)

Դրամական միջոցների փոխանցման/
մուտքագրման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____
(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն, ազգանունը)

Կ.Տ.

Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները համապատասխանաբար 11500236924369 (ԱՄՆ դոլարային պարտատոմսերի դեպքում) և 11500579062790 (ՀՀ դրամային պարտատոմսերի դեպքում) հաշվեհամարներին են փոխանցվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները ստացված են համարվում այդ օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Հավելված 4. Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր/

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական

Հայտի Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը _____

(օր, ամիս, տարի, ժամ)

Հայտ ներկայացնողի անունը _____

(անուն, ազգանուն)

Անձը հաստատող փաստաթղթի տվյալները _____

(Անձնագրի համար, տրման ամսաթիվ)

Ռեզիդենտությունը _____

(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Գրանցման հասցեն _____

Սոցիալական քարտի համարը _____

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկված արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ _____ ( )

քանակը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման գինը _____ ( )

գինը թվերով (տառերով)

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը

( )
ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի ԱՄՆ դոլարով բանկային հաշվի համարը

(լրացվում է արտարժութային պարտատոմսերի ձեռք բերման դեպքում)

Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը

Բանկի անվանումը

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անվանումը

Արժեթղթերի հաշվի համարը

Սույնով հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրին, ստանձնում ենք այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:
Տեղյակ ենք, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն եմ Ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:
Հաստատում եմ, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:
Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ:
Տեղեկացված եմ(ենք), որ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով (ՀՀ օրենսդրության համաձայն, անհատ ձեռնարկատերը չի օգտվում իր պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելու հնարավորությունից):
Հաստատում եմ, որ սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու/ակցեպտավորելու պահից, այն կհանդիսանա Կողմերի միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից

Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ _____

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ՝ հատ (_____)
քանակը թվերով (տառերով)

Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____
(ֆիզիկական անձի տվյալները)

Կ.Տ.

Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները համապատասխանաբար 11500236924369 (ԱՄՆ դոլարային պարտատոմսերի դեպքում) և 11500579062790 (ՀՀ դրամային պարտատոմսերի դեպքում) հաշվեհամարներին են փոխանցվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները ստացված են համարվում այդ օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Հավելված 5. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2018թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	9
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	11
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	13
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	15
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	17

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերության (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական

հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

– *ՖՀՄՍ 9-ի առաջին անգամ որդեգրումը*

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների 4.4 ծանոթագրությունում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ 36.1 ծանոթագրությունում:

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՍԽ) թողարկել է ՖՀՄՍ 9-ը *«Ֆինանսական գործիքներ»*, որը փոխարինում է ՀՀՄՍ 39-ին՝ *«Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը»*: ՖՀՄՍ 9-ի ներդրման արդյունքում առաջացող հիմնական փոփոխություններն են. Բանկի արժեզրկումից կորուստները ներկայում հիմնված են ակնկալվող կորուստների, այլ ոչ թե փաստացի կորուստների մոդելի վրա, Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգման և չափման փոփոխությունները, որոնք մանրամասն նկարագրված են ֆինանսական հաշվետվություններին կից 4.4 ծանոթագրությունում:

Ինչպես նկարագրված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում, ֆինանսական ակտիվները դասակարգվել են, իսկ արժեզրկումից կորուստները հաշվառվել են համաձայն ՖՀՄՍ 9-ի *«Ֆինանսական գործիքներ»*: Սա համարվում է աուդիտի առանցքային հարց, քանի որ ՖՀՄՍ 9-ը նոր և բարդ հաշվապահական հաշվառման ստանդարտ է, որը պահանջում է էական դատողություններ ֆինանսական ակտիվների դասակարգման, ինչպես նաև արժեզրկման պահուստների որոշման համար:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են բիզնես մոդելի գնահատումը, որի շրջանակում պահվում են ակտիվները, գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները հիմնավորված են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներով, ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք, ինչպես հարկն է, չեն արտացոլվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման և դասակարգման հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

– ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգման և չափման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ,

– դիտարկվել և ստուգվել են Բանկի՝ բիզնես մոդելի գնահատումը և պայմանագրային այն դրամական միջոցների հոսքերի թեստավորումը, որոնք առաջացնում են «միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ» հանդիսացող դրամական հոսքեր (SPPI թեստ)

– ստուգվել են սկզբնական մնացորդների ճշգրտումների համապատասխանությունը:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՄ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՄ 9-ի պահանջների հետ,
- գնահատվել է արժեզրկման պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը, ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, պարտքային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը,
- գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը, ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը,
- ստուգվել է Բանկի՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերը տարբեր փուլերում դասակարգելու հիմքերի համապատասխանությունը,
- որպես ռիսկերի օրինակ՝ ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը,
- գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ,
- Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրության համար մատչելի տեղեկատվություն,
- ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացրել ընթացակարգեր՝ վարկի որակի էական վատթարացման ռիսկերը գնահատելու և անհատական գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկների ժամանակին բացահայտելու նպատակով:
- ստուգվել են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Տեսական հիմնավորումները ընդունվել են, իսկ մոդելների մաթեմատիկական ճշտությունը թեստավորվել,
- արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով ընդունվել են նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա համապատասխանությունը և նման տվյալների նկատմամբ վերահսկողությունն ու կառավարումը,
- մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ թեստավորում պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել),
- ստուգվել է սկզբնական մնացորդների ճշգրտումների համապատասխանությունը:

Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է Բանկի տարեկան հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա

համար՝ բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք չենք տրամադրում կարծիք, որը որևէ այլ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Մեր կողմից իրականացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռքբերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Բանկի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք

աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Բանկի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք մեր բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց ներկայացված հարցերից մենք առանձնացնում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտորի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հանրային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցերը չպետք է ներկայացվեն աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրանց ներկայացման հետ կապված բացասական

Grant Thornton

հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրանց ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Անկախ աուդիտի առաջադրանքի պատասխանատուն հանդիսանում է Արմեն Հովհաննիսյանը:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Արմեն Հովհաննիսյան
Առաջադրանքի պատասխանատու

29 ապրիլի 2019թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2018	2017
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	7	41,563,495	35,262,768
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	7	(32,975,738)	(28,374,816)
Զուտ տոկոսային եկամուտներ		8,587,757	6,887,952
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	8	4,749,493	3,282,273
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	8	(1,361,796)	(883,875)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		3,387,697	2,398,398
Զուտ առևտրային եկամուտ	9	2,108,344	1,429,550
Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ/(վնաս)		113,608	(4,755)
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ օգուտ		-	16,987
Այլ եկամուտներ	10	3,321,707	2,525,494
Արժեզրկման ծախս	11	(7,453,083)	(3,105,599)
Անձնակազմի գծով ծախսեր	12	(3,950,625)	(3,626,877)
Հիմնական միջոցների մաշվածություն	20	(679,115)	(819,859)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	21	(372,258)	(161,098)
Այլ ծախսեր	13	(3,877,988)	(3,871,793)
Գործառնական շահույթ		1,186,044	1,668,400
Շահութահարկի գծով ծախս	14	(333,524)	(388,206)
Տարվա շահույթ		852,520	1,280,194

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2018	2017
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Իրական արժեքի պահուստի շարժ (պարտքային գործիքներ)			
Իրական արժեքի զուտ փոփոխություն տարվա ընթացքում		225,428	-
Շահութահարկ		(45,087)	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտ		180,341	-
Իրական արժեքի պահուստի շարժ (վաճառքի համար մատչելի)			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ		-	562,783
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ գումար		-	69,375
Շահութահարկ		-	(126,432)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով զուտ օգուտ		-	505,726
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		1,032,861	1,785,920

17-ից 104 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	127,342,452	115,576,209
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	13,898,845	14,036,722
Հաճախորդներին տրված վարկեր	18	435,625,901	382,547,013
Ներդրումային արժեթղթեր			
- Վաճառքի համար մատչելի ներդրումներ	19	-	1,649,612
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	19	3,460,892	-
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	19	9,145,216	15,258,125
Հիմնական միջոցներ	20	12,316,130	9,138,396
Ոչ նյութական ակտիվներ	21	2,502,505	2,702,599
Հետաձգված հարկային ակտիվ	14	996,100	-
Բռնագանձված ակտիվներ	22	3,566,477	3,716,481
Այլ ակտիվներ	23	2,969,505	2,905,216
Ընդամենը՝ ակտիվներ		611,824,023	547,530,373
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	16	8,940	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	24	64,996,179	76,004,421
Առևտրային ֆինանսական պարտավորություններ	25	23,230,915	24,556,156
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	26	637,591	692,952
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	27	473,205,797	398,967,148
Թողարկված պարտքային արժեթղթեր	28	11,462,171	8,967,294
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		419,282	296,211
Հետաձգված հարկային պարտավորություն	14	-	7,716
Այլ պարտավորություններ	29	1,895,505	1,201,476
Ընդամենը՝ պարտավորություններ		575,856,380	510,693,374

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	30	31,374,560	31,374,560
Գլխավոր պահուստ		755,177	691,167
Այլ պահուստներ		2,672,235	2,480,668
Չբաշխված շահույթ		1,165,671	2,290,604
Ընդամենը՝ սեփական կապիտալ		35,967,643	36,836,999
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		611,824,023	547,530,373

Ֆինանսական հաշվետվությունները՝ ներկայացված 9-ից 104 էջերում, հաստատվել են Բանկի խորհրդի կողմից 2019թ. ապրիլի 29-ին, և ստորագրվել են Բանկի վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի կողմից:

Արտավազդ Սարգսյան — Նարինե Սարգսյան

Վարչության նախագահ — Գլխավոր հաշվապահ

17-ից 104 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաժանելի մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,374,560	691,167	2,009,246	471,422	2,290,604	36,836,999
ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը (ծանոթ. 6)	-	-	11,226	-	(1,913,443)	(1,902,217)
Վերահաշվարկված հաշվեկշիռը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	31,374,560	691,167	2,020,472	471,422	377,161	34,934,782
Տարվա շահույթ	-	-	-	-	852,520	852,520
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների իրական արժեքի զուտ փոփոխություն (ներառյալ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխությունները)	-	-	225,428	-	-	225,428
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	(45,087)	-	-	(45,087)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	180,341	-	852,520	1,032,861
Հատկացում պահուստին	-	64,010	-	-	(64,010)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	64,010	-	-	(64,010)	-
Հաշվեկշիռը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,374,560	755,177	2,200,813	471,422	1,165,671	35,967,643

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	31,374,560	638,508	1,503,520	471,422	1,063,069	35,051,079
Տարվա շահույթ	-	-	-	-	1,280,194	1,280,194
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	562,783	-	-	562,783
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին փոխանցած զուտ գումար	-	-	69,375	-	-	69,375
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	(126,432)	-	-	(126,432)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	505,726	-	1,280,194	1,785,920
Հատկացում պահուստին	-	52,659	-	-	(52,659)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	52,659	-	-	(52,659)	-
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,374,560	691,167	2,009,246	471,422	2,290,604	36,836,999

17-ից 104 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2018	2017
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	1,186,044	1,668,400
Ճշգրտումներ		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	1,051,373	980,957
Հիմնական միջոցների օտարումից օգուտ	(37)	(13,129)
Արժեզրկման ծախս	7,453,083	3,105,599
Առևտրային գործիքների իրական արժեքի փոփոխությունից զուտ (օգուտ)/վնաս	45,119	(19,880)
Ստացվելիք տոկոսներ	(11,557,887)	(5,078,406)
Վճարվելիք տոկոսներ	1,277,722	996,153
Արտարժույթի փոխարկումից (օգուտ)/վնաս	(113,608)	4,755
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	(658,191)	1,644,449
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	(45,119)	42,728
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(604,214)	(5,204,585)
Հաճախորդներին տրված վարկեր	(51,473,010)	(102,663,389)
Բռնագանձված ակտիվներ	150,004	805,866
Այլ ակտիվներ	(418,898)	(521,036)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	8,940	(42,456)
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(6,423,565)	(18,023,948)
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական պարտավորություններ	(1,325,241)	3,067,084
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	(53,920)	(467,713)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	76,269,316	135,379,207
Այլ պարտավորություններ	831,409	177,865
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից ստացված մինչև շահութահարկը	16,257,511	14,194,072
Վճարված շահութահարկ	(783,800)	(114,014)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	15,473,711	14,080,058

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2018	2017
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի վաճառք	4,368,743	19,678,998
Հիմնական միջոցների առք	(4,758,756)	(925,867)
Ոչ նյութական ակտիվների առք	(172,164)	(440,770)
Հիմնական միջոցների վաճառք	901,944	237,737
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	339,767	18,550,098
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ֆինանսական կազմակերպ. վարկերի ստացում/(մարում)	(3,801,812)	9,770,445
Պարտքային արժեթղթերի թողարկում	2,457,166	8,912,120
Ֆինանսական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(1,344,646)	18,682,565
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	14,468,832	51,312,721
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	115,576,209	63,215,155
Դրամական միջոցների գծով ակնկալվող պարտքային կորուստների ազդեցությունը	(6,085)	-
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(2,696,504)	1,048,333
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (ծանոթ. 15)	127,342,452	115,576,209
Լրացուցիչ տեղեկատվություն՝		
Ստացված տոկոսներ	30,005,608	30,184,362
Վճարված տոկոսներ	(32,975,738)	(27,378,663)

17-ից 104 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերությունը (նախկին «Հայինվեստբանկ ՓԲԸ») (այսուհետ՝ Բանկ) հիմնադրվել է 1991թ. և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 1991 թվականի դեկտեմբերի 10-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N40 արտոնագրային համարով:

Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց ավանդների հատուցում երաշխավորող պետական համակարգի, Հայաստանի բանկերի միության, ArCa, Master Card, Visa International քարտային վճարահաշվարկային համակարգերի անդամ:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումն է և ավանդների ընդունումը, ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժութային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը և թվով 27 մասնաճյուղերը գտնվում են Երևանում, 23 մասնաճյուղերը՝ ՀՀ տարբեր մարզերում, և 7 մասնաճյուղերը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Նալբանդյան 48:

2 Գործարար միջավայր

Ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստները ֆինանսական հաշվետվություններում ձևավորվել են գոյություն ունեցող տնտեսական պայմանների հիման վրա: Բանկը չի կարող կանխատեսել՝ ինչպես Հայաստանում կարող են փոխվել տնտեսական պայմանները, և ինչ ազդեցություն կարող են ունենալ այդ փոփոխությունները ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստների ճշտության վրա հետագա ժամանակաշրջաններում:

Վերանայված վարկեր

Որտեղ հնարավոր է, Բանկը փորձում է վերանայել վարկերը, քան բռնագանձել գրավը: Սա կարող է հանգեցնել վճարումների երկարաձգումների և վարկի մարման նոր պայմանների մասին համաձայնության: Երբ վարկի պայմանները վերանայված են, վարկն այլևս չի համարվում ժամկետանց: Ղեկավարությունը շարունակաբար վերանայում է վերանայված պայմաններով վարկերը, համոզվելու համար, որ բոլոր համաձայնությունները պահպանված են

և որ ապագա վճարումները կկատարվեն: Վարկերը շարունակում են մնալ արժեզրկման անհատական կամ խմբային գնահատման առարկա՝ օգտագործելով վարկի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, սեփական կապիտալից վերաձևակերպվում է շահույթի կամ վնասի մասին մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի դասակարգված կապիտալ գործիքների արժեզրկումից կորուստների հակադարձումը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի ճանաչվում, այլ հաշվառվում է կապիտալի առանձին բաժնում, որպես՝ այլ համապարփակ եկամուտ: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

4.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, այդ թվում, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռքբերման օրից 90 օր է, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում հեշտությամբ և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորություններ

Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորությունները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով, կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ: Առևտրային նպատակներով պահվող ակտիվները և պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, ապա հետագայում չափվում իրական արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ շահույթում կամ վնասում ճանաչված գործարքային ծախսերով: Իրական արժեքի բոլոր փոփոխությունները ճանաչվում են որպես շահույթում կամ վնասում զուտ առևտրային եկամտի մի մաս:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն:

4.8 Վարկեր

Վարկերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.9 Ներդրումային արժեթղթեր

2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող քաղաքականություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
- պարտքային և բաժնային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կամ նախորոշվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իսկ իրական արժեքի փոփոխությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մմիջոցով չափվող պարտքային արժեթղթեր և
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային ներդրումային արժեթղթեր:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի, երբ ճանաչվում են շահույթում կամ

վնասում, նույն ձևով, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում.

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,
- ակնկալվող պարտքային կորուստներ և վերադարձ
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Երբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթուղթը ապաճանաչվում է, նախկինում ակնկալվող պարտքային կորուստներում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Բանկը կարող է ոչ առևտրային նպատակներով պահվող բաժնային գործիքներում որոշ ներդրումների իրական արժեքի փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Այսպիսի ընտրություն կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ անհատական սկզբունքով և անշրջելի է:

Այսպիսի բաժնային գործիքների գծով օգուտ և վնասը երբեք չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, իսկ արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե դրանք հստակ չեն հանդիսանում ներդրումների մի մասի վերադարձ, որի դեպքում նրանք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը և վնասը ներդրումների օտարման դեպքում փոխանցվում են չբաշխված շահույթ:

Մինչև 2018թ. հունվարի 1-ը գործող քաղաքականություն

Ներդրումային արժեթղթերը սկզբնապես չափվել են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով ուղղակի ծախսերը և հետագայում հաշվարկվել են որպես վաճառքի համար մատչելի:

Վաճառքի համար մատչելի ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Բանկը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքների, փոխարժեքների կամ բաժնետոմսերի գների փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով, ընդ որում օգուտներն ու վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներառված կուտակված շահույթը կամ վնասը վերադասակարգվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են այն ժամանակ, երբ Բանկը իրավունք է ձեռքբերում ստանալու այդ շահաբաժինները:

Կարգավորվող ֆինանսական շուկաներում ակտիվորեն վաճառվող ֆինանսական ակտիվի իրական արժեքը որոշվում է հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գների միջոցով: Ակտիվ շուկա չունեցող գործիքների իրական արժեքը որոշվում է գնահատման մոդելների միջոցով: Նման մոդելները ներառում են վերջին շուկայական անկախ գործառնությունները, էականորեն չտարբերվող ակտիվների շուկայական գներին հղում կատարելը, զեղչված դրամական հոսքերի վերլուծությունը: Հակառակ դեպքում՝ ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:

4.10 Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.11 Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Զուտ առևտրային եկամուտե հոդվածում:

4.12 Վարձակալություն

Գործառնական վարձակալություն՝ Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.13 Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ օգուտ/վնաս հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

4.14 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Բանկի շենքերը ներկայացված են իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է սկզբնական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը.

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	30	3.3
Համակարգիչներ և կապի միջոցներ	3	33.3
Բանկոմատներ	10	10
Տրանսպորտային միջոցներ	5	20
Սարքավորումներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	5	20

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց մնացորդային արժեքով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Բանկ: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Շենքերը վերագնահատվում են կանոնավոր կերպով: Վերագնահատման հաճախականությունը կախված է ակտիվների իրական արժեքի փոփոխություններից: Այն դեպքում, երբ նշանակալի շեղում կա վերագնահատված ակտվների իրական արժեքի և նրանց մնացորդային արժեքների

միջև, ապա անցկացվում է հետագա վերագնահատում: Վերագնահատումը կատարվում է հիմնական միջոցների ողջ դասի համար:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցների իրացման կամ դուրս գրման դեպքում այդ հիմնական միջոցներին վերաբերվող վերագնահատման պահուստի մնացորդն ամբողջությամբ փոխանցվում է չբաշխված շահույթին:

4.15 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.16 Բռնագանձված ակտիվներ

Բանկի քաղաքականությունն է սահմանել՝ արդյոք բռնագանձված ակտիվը կարող է լավագույնս օգտագործվել իր ներքին գործառնությունների համար, թե պետք է վաճառվի: Ներքին գործառնությունների համար օգտագործման ենթակա ակտիվները փոխանցվում են իրենց համապատասխան ակտիվների դաս սկզբնական ապահովված ակտիվի բռնագանձված կամ հաշվեկշռային արժեքի նվազագույնով: Ակտիվները, որոնց համար վաճառքն ավելի լավ տարբերակ է ճանաչվում, ըստ Բանկի քաղաքականության՝ փոխանցվում են վաճառքի համար մատչելի ակտիվների դաս՝ իրենց իրական արժեքով (ֆինանսական ակտիվների դեպքում), իսկ ոչ ֆինանսական ակտիվների դեպքում՝ իրական արժեքով՝ հանած բռնագանձման ամսաթվի դրությամբ վաճառքից ծախսերը:

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.17 Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները ներառվում են այլ պարտավորություններում և կրեդիտագրվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

4.18 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի, այլ միջազգային և ՀՀ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

Երբ Բանկը գնում է իրեն պատկանող արժեթղթերը, դրանք դուրս են գրվում հաշվեկշռից, և հաշվեկշռային արժեքի ու վճարված գումարի տարբերությունն արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.19 Ֆինանսական երաշխիքներ և վարկային պարտավորվածություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Վարկային պարտավորվածությունները նախապես որոշված պայմաններով և ժամկետներով վարկեր տրամադրելու պարտավորվածություններն են:

Ֆինանսական երաշխիքները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկեր տրամադրելու պարտավորվածությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, իսկ սկզբնական իրական արժեքը ամորտիզացվում է երաշխիքի կամ պարտավորվածության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Հետագայում նրանք չափվում են հետևյալ կերպ.

- 2018թ. հունվարի 1-ից՝ ամորտիզացված գումարից և կորուստների գծով պահուստների գումարից առավելագույնով,
- մինչև 2018թ. հունվարի 1-ը՝ ամորտիզացված գումարի և պայմանագրերից բխող հնարավոր վճարների ներկա արժեքի առավելագույնով:

Ֆինանսական երաշխիքների գծով առաջացած պարտավորությունները ներառվում են պահուստներում՝ «Այլ պարտավորություններում»: Վարկային պարտավորությունների գծով ակնկալվող կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի գծով ձևավորված պահուստներում (տես ծանոթագրություն 18):

4.20 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Պահուստները ներառում են նաև ֆինանսական երաշխիքների գծով պարտավորությունները, ինչպես ներկայացվում է 4.19 ծանոթագրությունում:

4.21 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման

դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ

Այս պահուստը արտացոլում է Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Բիզնես մոդել և մայր գումարի և չմարված մայր գումարի փոկոսագումարների վճարումներ

Բանկը գնահատում է այն բիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես

մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տես 4.4.2 ծանոթագրությունը):

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 33):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես 32 ծանոթագրություն):

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում կանխատեսվող տեղեկատվության ներառումը (տես 36.1.2 ծանոթագրություն), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տես 4.4.6 ծանոթագրությունը):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների (տես՝ 31 ծանոթագրությունը):

6 Անցման բացահայտում

Ստորև նկարագրվում է ՖՀՄՄ 9-ի ներդրման ազդեցությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և չբաշխված շահույթի վրա՝ ներառյալ ՀՀՄՄ 39-ի կրած պարտքային կորուստների հաշվարկների՝ ՖՀՄՄ 9-ի ակնկալվող պարտքային կորուստներով փոխարինման ազդեցությունը:

Հետևյալ աղյուսակում ներկայացվում են Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար ՀՀՄՄ 39-ի համաձայն չափման դասերը և ՖՀՄՄ 9-ի ներքո նոր չափման դասերը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ

	Սկզբնական դասակարգում ՀՀՄՄ 39-ի համաձայն	Նոր դասակարգում ՖՀՄ 9-ի համաձայն	Սկզբնական հաշվեկշռային արժեք ՀՀՄՄ 39-ի համաձայն	Նոր հաշվեկշռային արժեք ՖՀՄՄ 9-ի համաձայն
Ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեք	115,576,209	115,566,795
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեք	14,036,722	13,957,218
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեք	382,547,013	381,309,320
Ներդրումային արժեթղթեր՝ պարտքային	Վաճառքի համար մատչելի	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող	16,883,709	16,883,709
Ներդրումային արժեթղթեր՝ բաժնային	Վաճառքի համար մատչելի	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող	24,028	24,028
Այլ ֆինանսական ակտիվներ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեք	1,031,725	941,971
Ընդամենը ֆինանսական ակտիվներ			530,099,406	528,683,041

Հազար ՀՀ դրամ

	Սկզբնական դասակարգում ՀՀՄՍ 39-ի համաձայն	Նոր դասակարգում ՖՀՄ 9-ի համաձայն	Սկզբնական հաշվեկշռային արժեք ՀՀՄՍ 39-ի համաձայն	Նոր հաշվեկշռային արժեք ՖՀՄՍ 9-ի համաձայն
Ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Ամորտիզացված արժեք	Ամորտիզացված արժեք	76,004,421	76,004,421
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական պարտավորություններ	Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող	Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող	24,556,156	24,556,156
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	Ամորտիզացված արժեք	Ամորտիզացված արժեք	692,952	692,952
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	Ամորտիզացված արժեք	Ամորտիզացված արժեք	398,967,148	398,967,148
Թողարկված պարտքային արժեթղթեր	Ամորտիզացված արժեք	Ամորտիզացված արժեք	8,967,294	8,967,294
Այլ ֆինանսական պարտավորություններ	Ամորտիզացված արժեք	Ամորտիզացված արժեք	740,658	740,658
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ			509,928,629	509,928,629

ՀՀՄՍ 39-ի համաձայն հաշվեկշռային արժեքների համադրումը ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված մնացորդների միջև ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ

	Հաշվեկշռային արժեք ՀՀՄՍ 39-ի համաձայն 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերադասակարգում	Վերաչափում (ակնկալվող պարտքային կորուստներ)	Հաշվեկշռային արժեք ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ				
Ամորտիզացված արժեք				
Դրանմական միջոցներ և դրանց համարժեքներ				
Տարեսկզբի մնացորդ	115,576,209			
Վերաչափում		-	(9,414)	
Տարեվերջի մնացորդ				115,566,795
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Տարեսկզբի մնացորդ	14,036,722			
Վերաչափում		-	(79,504)	
Տարեվերջի մնացորդ				13,957,218
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին				
Տարեսկզբի մնացորդ	382,547,013			
Վերաչափում		-	(1,237,693)	
Տարեվերջի մնացորդ				381,309,320

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք ՀՀՄՍ 39-ի համաձայն 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերադասա-կարգում	Վերաչափում (ակնկալվող պարտքային կորուստներ)	Հաշվեկշռային արժեք ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
Այլ ֆինանսական ակտիվներ				
Տարեսկզբի մնացորդ	1,031,725			
Վերաչափում		-	(89,754)	
Տարեվերջի մնացորդ				941,971
Ընդամենը ամորտիզացված արժեք	513,191,669	-	(1,416,365)	511,775,304
Վաճառքի համար մատչելի				
Ներդրումային արժեթղթեր				
Տարեսկզբի մնացորդ	16,907,737			
Վերադասակարգում իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափող բաժնային գործիքներ		(24,028)	-	
Վերադասակարգում իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափող պարտքային գործիքներ		(16,883,709)	-	
Տարեվերջի մնացորդ				-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափող պարտքային գործիքներ				
Տարեսկզբի մնացորդ	-			
Վերադասակարգում վաճառքի համար մատչելի արժեթղթերից		16,883,709	-	
Տարեվերջի մնացորդ				16,883,709
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափող բաժնային գործիքներ				
Ներդրումային արժեթղթեր				
Տարեսկզբի մնացորդ	-			
Վերադասակարգում վաճառքի համար մատչելի արժեթղթերից		24,028	-	
Տարեվերջի մնացորդ				24,028
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափող ֆինանսական ակտիվներ	-	16,907,737	-	16,907,737

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք ՀՀՄՍ 39-ի համաձայն 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերադասա-կարգում	Վերաչափում (ակնկալվող պարտքային կորուստներ)	Հաշվեկշռային արժեք ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
Ֆինանսական պարտավորություններ				
Ամորտիզացված արժեք				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	76,004,421	-	-	76,004,421
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	692,952	-	-	692,952
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	398,967,148	-	-	398,967,148
Թողարկված պարտքային արժեթղթեր	8,967,294	-	-	8,967,294
Այլ ֆինանսական պարտավորություններ	740,658	-	-	740,658
Ընդամենը ամորտիզացված արժեք	485,372,473	-	-	485,372,473
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափող ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական պարտավորություններ	24,556,156	-	-	24,556,156
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափող ֆինանսական պարտավորություններ	24,556,156	-	-	24,556,156

ՖՀՄՍ 9-ի անցման ազդեցությունը պահուստների և չբաշխված շահույթի վրա ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Պահուստներ և չբաշխված շահույթ
Իրական արժեքի պահուստ	
Տարեվերջի մնացորդ ՀՀՄՍ 39-ի համաձայն (2017թ. դեկտեմբերի 31)	2,009,246
Իրական արժեքով՝այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում ՖՀՄՍ 9-ի համաձայն	11,226
Տարեսկզբի մնացորդ ՖՀՄՍ 9-ի համաձայն (2018թ. հունվարի 1)	2,020,472
Չբաշխված շահույթ	
Տարեվերջի մնացորդ ՀՀՄՍ 39-ի համաձայն (2017թ. դեկտեմբերի 31)	2,290,604
ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում՝ ներառյալ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվողները (տես՝ ստորև)	(2,388,999)
Հետաձգված հարկ	475,556
Տարեսկզբի մնացորդ ՖՀՄՍ 9-ի համաձայն (2018թ. հունվարի 1)	377,161
Ընդամենը սեփական կապիտալի փոփոխություններ ՖՀՄՍ 9-ի ներդրման հետևանքով	(1,902,217)

Հետևյալ աղյուսակը համադրում է.

- ՀՀՄՄ 39-ի համաձայն ֆինանսական ակտիվների արժեզրկումից վերջնական պահուստը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ,
- ՖՀՄՄ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստների սկզբնական պահուստը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ	ՀՀՄՄ 39-ի համաձայն վարկերի գծով կորուստների պահուստ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերաչափում	ՖՀՄՄ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստներ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
Արժեզրկումից պահուստ			
ՀՀՄՄ 39-ի համաձայն վարկեր և դեբիտորական պարտքեր/ՖՀՄՄ 9-ի համաձայն ամորտիզացված արժեքով ֆինանսական ակտիվներ	(10,029,568)	(1,416,365)	(11,445,933)
ՀՀՄՄ 39-ի համաձայն վաճառքի համար մատչելի ներդրումային պարտքային արժեթղթեր/ ՖՀՄՄ 9-ի համաձայն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվներ	-	(11,226)	(11,226)
	(10,029,568)	(1,427,591)	(11,457,159)
Ֆինանսական երաշխիքներ	-	(961,408)	(961,408)
	-	(961,408)	(961,408)
Ընդամենը արժեզրկումից պահուստ	(10,029,568)	(2,388,999)	(12,418,567)

7 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Վարկեր հաճախորդներին	37,998,732	31,533,456
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր (2017թ.՝ վաճառքի համար մատչելի)	1,376,707	1,666,094
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	735,382	576,362
Հակադարձ ռեպո գործառնություններ	1,452,674	1,445,773
Արժեզրկված ակտիվների գծով հաշվեգրված տոկոսներ	-	40,219
Այլ տոկոսային եկամուտներ	-	864
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	41,563,495	35,262,768

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,435,186	4,534,419
Ռեպո գործառնություններ	1,045,022	173,078
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	17,502	32,602
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	26,617,926	23,537,124
Թողարկված պարտքային արժեթղթեր	860,102	97,593
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	32,975,738	28,374,816

8 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Դրամարկղային գործառնություններ	996,392	295,641
Կոմունալ վճարումների ընդունում	20,747	28,975
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	1,487,794	904,142
Վարկերի սպասարկում	790,553	901,042
Վճարային քարտերով գործառնություններ	1,073,462	867,359
Երաշխիքներ	356,346	268,675
Արժեթղթերով գործառնություններ	20,670	16,439
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	3,529	-
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4,749,493	3,282,273
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	316,851	282,840
Դրամարկղային գործառնություններ	156,122	3,284
Վճարային քարտերով գործառնություններ	825,747	565,024
Արժեթղթերով գործառնություններ	-	7,981
Ակրեդիտիվով գործառնություններ	34,807	18,260
Այլ ծախսեր	28,269	6,486
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	1,361,796	883,875

9 Զուտ առևտրային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Արտարժութային գործարքներից զուտ եկամուտ	2,050,726	1,450,704
Արտարժութային սվոպից զուտ եկամուտ/(վնաս)	57,618	(21,154)
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	2,108,344	1,429,550

10 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Ստացված տույժեր և տուգանքներ	2,744,679	2,171,120
Ապահովագրության գծով փոխհատուցում	-	50
Շնորհներից եկամուտ	1,709	82
Հիմնական միջոցների վաճառքից եկամուտ	37	13,129
Բռնագանձված գույքի վաճառքից եկամուտ	74,863	14,762
Հաշիվների փակումից եկամուտ	8,610	7,618
Տեղեկանքների տրամադրումից եկամուտ	8,467	8,115
Վարկային և երաշխիքային հայտերի ընդունումից եկամուտ	14,405	34,145
Դրամային փոխանցումներից եկամուտ	85,226	68,992
Ինտերնետ բանկային ծառայություններից եկամուտ	160,611	78,782
Ավտոմեքենաների տեխզննման կտրոնների տրամադրումից	51,544	50,154
Թանկարժեք մետաղներով գործառնություններից եկամուտ	30,946	35,989
Այլ եկամուտ	140,610	42,556
Ընդամենը այլ եկամուտներ	3,321,707	2,525,494

11 Արժեզրկման ծախս/(հակադարձում)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում չարժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում արժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը 2018թ.	Ընդամենը 2017թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	(3,329)	-	-	(3,329)	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	(21,226)	-	-	(21,226)	-
Վարկեր հաճախորդներին	18	215,353	232,840	7,234,624	7,682,817	3,105,599
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	19	(9)	-	-	(9)	-
Այլ ակտիվներ	23	(97,749)	-	-	(97,749)	-
Ֆինանսական երաշխիքներ և վարկային պարտավորվածություններ	31	(107,421)	-	-	(107,421)	-
Ընդամենը պարտքային կորուստների արժեզրկման ծախս/(հակադարձում)		(14,381)	232,840	7,234,624	7,453,083	3,105,599

12 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Աշխատավարձ և այլ փոխհատուցումներ աշխատակիցներին	3,949,275	3,619,093
Այլ ծախսեր	1,350	7,784
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	3,950,625	3,626,877

13 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	17,390	111,355
Վարձակալության գծով ծախսեր	271,711	184,310
Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	369,929	310,128
Գովազդի ծախսեր	248,580	198,421
Ապահովագրության գծով ծախսեր	33,693	65,336
Ներկայացուցչական ծախսեր	52,578	46,760
Պլաստիկ քարտերի ձեռք բերման և թողարկման ծախսեր	58,703	51,045
Իրավաբանական ծառայությունների ստացման ծախսեր	30,292	-
Ինկասացիոն ծախսեր	70,591	63,615
Ադմինիստրատիվ ծախսեր	697,300	456,506
Բռնագանձված ակտիվների վաճառքից վնաս	28,941	197,685
Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	360,691	383,108
Համակարգչային ծրագրերի օգտագործման և սպասարկման ծախսեր	192,889	171,640
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	114,723	110,025
Անվտանգության գծով ծախսեր	196,288	179,943
Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի գծով ծախսեր	748,918	997,683
Գրասենյակային ծախսեր	93,739	91,996
Գործուղման ծախսեր	161,246	130,185
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	44,999	70,098
Ֆինանսական համակարգի հաշտարարին վճարներ	57,534	40,441
Վճարված տուգանքներ	13,116	677
Այլ ծախսեր	14,137	10,836
Ընդամենը այլ ծախսեր	3,877,988	3,871,793

14 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Ընթացիկ հարկի գծով ծախս	906,871	573,866
Հետաձգված հարկ	(573,347)	(185,660)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	333,524	388,206

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2017թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է՝ 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2018	Արդյունավետ դրույքաչափ (%)	2017	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	1,186,044		1,668,400	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	237,209	20	333,680	20
Չհարկվող եկամուտներ	(94,921)	(8)	(5,737)	-
Չնվազեցվող ծախսեր	210,133	18	90,303	5
Արտարժույթի (դրական)/ բացասական փոխարժեքային տարբերություն	(12,867)	(1)	(7,091)	-
Հարկվող եկամուտներ	68,376	6	(2,427)	-
Հարկվող ծախսեր	-	-	(5,164)	-
Հաշմանդամներին վճարումներից առաջացած նվազեցումներ	(74,406)	(6)	(15,358)	(1)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	333,524	29	388,206	24

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2017				31 դեկտեմբերի 2018		
	Զուտ մնացորդ	ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	1,883	(666)	-	1,217	1,217	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	15,901	(4,245)	-	11,656	11,656	-
Հաճախորդներին տրված վարկեր	650,199	247,539	875,748	-	1,773,486	1,773,486	-
Ներդրումներ արժեթղթերում	(502,313)	-	-	(45,087)	(547,400)	-	(547,400)
Հիմնական միջոցներ	(200,726)	-	(87,327)	-	(288,053)	-	(288,053)
Այլ ակտիվներ	(25,354)	17,951	(11,786)	-	(19,189)	-	(19,189)
Այլ պարտավորություններ	70,478	192,282	(198,377)	-	64,383	64,383	-
Հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	(7,716)	475,556	573,347	(45,087)	996,100	1,850,742	(854,642)

Հազար ՀՀ դրամ	2016	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2017
Այլ պարտավորություններ	79,697	(9,219)	-	70,478
Հաճախորդներին տրված վարկեր	431,214	218,985	-	650,199
Համախառն հետաձգված հարկային ակտիվ	510,911	209,766	-	720,677
Այլ ակտիվներ	(19,267)	(6,087)	-	(25,354)
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	(375,881)	-	(126,432)	(502,313)
Հիմնական միջոցների ամորտիզացիա	(82,530)	(340)	-	(82,870)
Հիմնական միջոցների վերագնահատում	(100,177)	(17,679)	-	(117,856)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(577,855)	(24,106)	(126,432)	(728,393)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(66,944)	185,660	(126,432)	(7,716)

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Կանխիկ դրամական միջոցներ	7,076,916	7,036,940
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	109,194,765	54,978,114
Թղթակցային հաշիվներ այլ բանկերում	11,076,856	3,544,517
Մինչև 90 օր տևողությամբ ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	-	50,016,638
	127,348,537	115,576,209
Արժեզրկումից պահուստներ	(6,085)	-
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	127,342,452	115,576,209

Թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկվել են Բանկի կողմից ներգրաված դրամային որոշ միջոցների 2%-ի (2017թ.՝ 4%) և արտարժույթով որոշ միջոցների 18%-ի չափով ամբողջությամբ ՀՀ դրամով: Այդ միջոցները 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 57,405,804 հազար դրամ (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 12% 49,315,192 հազար դրամ): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Բանկը տոկոսներ չի ստանում:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 8,380,723 հազար դրամ գումարով (76%) թղթակցային հաշիվները կենտրոնացված են երկու բանկերում, ինչն իրենից ներկայացնում է էական կենտրոնացում (2017թ.՝ 3,048,341 հազար դրամ (86%)):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ		
2018թ. հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	9,414	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(3,329)	-
Մնացորդը տարվա վերջի դրությամբ	6,085	-

2018թ. ընթացքում իրականացվել են հետևյալ անկանխիկ գործառնությունները.

- վարկի մարում գրավների բռնագանձման միջոցով 651,231 հազար դրամ գումարով (2017թ.՝ 730,475 հազար դրամ):

16 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Արժույթի և տոկոսադրույքի սվոպերը դրամական միջոցների մեկը մյուսով փոխարինման ապահովումներ են: Սվոփերը հանգեցնում են արտարժույթների տնտեսական փոխանակման: Բանկի պարտքային ռիսկը ներկայացնում է սվոպային պայմանագրերի փոխարինման պոտենցիալ ծախս, այն դեպքում, եթե պայմանագրային կողմերը չմարեն իրենց պարտավորությունները:

Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ, կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել՝ հանգեցնելով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքների տատանման:

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր			
Արտաժութային սվոփ պայմանագրեր	1,660,950	-	8,940
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ	1,660,950	-	8,940

17 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	210,000	120,000
Ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	10,388,946	6,357,818
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր	910,329	4,124,618
Դեպոնացված միջոցներ ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններում	1,892,712	2,356,848
Այլ հաշիվներ	555,136	1,077,438
	13,957,123	14,036,722
Արժեզրկումից պահուստներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	(58,278)	-
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,898,845	14,036,722

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

Վարկերը ժամկետանց կամ արժեզրկված չեն:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր» հոդվածում ներառված հաշիվները կենտրոնացված են մեկ ֆինանսական կազմակերպությունում և կազմում են 5,635,924 հազար դրամ (54%) (2017թ.՝ 3,670,154 հազար դրամ (58%)՝ կենտրոնացված երկու ֆինանսական կազմակերպությունում):

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Դեպոնացված միջոցներ ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններ» հոդվածում ներառված գումարներն իրենցից ներկայացնում են Բանկի գործառնությունների համար տեղաբաշխված երաշխիքային միջոցներ և ներառում են Մաստեր Քարդ վճարային համակարգին անդամակցության համար սառեցված միջոց 317,093 հազար դրամ գումարով (2017թ.՝ 387,066 հազար դրամ), ինչպես նաև Visa վճարային համակարգին անդամակցության համար սառեցված միջոց 226,235 հազար դրամ գումարով (2017թ.՝ 218,140 հազար դրամ) և ստացված երաշխիքի դիմաց սառեցված գումար 1,271,794 հազար դրամ (2017թ.՝ 1,669,330 հազար դրամ):

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	79,504	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(21,226)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	58,278	-

18 Հաճախորդներին տրված վարկեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			31 դեկտեմբերի 2017թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
Հիփոթեքային և սպառողական վարկեր						
Հիփոթեքային վարկեր	11,768,956	(369,872)	11,399,084	12,823,767	(208,379)	12,615,388
Սպառողական վարկեր	58,741,737	(4,936,274)	53,805,463	48,252,183	(3,489,053)	44,763,130
Առևտրային վարկեր						
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր	22,646,535	(49,988)	22,596,547	20,847,485	-	20,847,485
Արդյունաբերություն	53,554,417	(2,847,470)	50,706,947	36,553,879	(365,539)	36,188,340
Շինարարություն	46,958,509	(1,382,548)	45,575,961	47,574,623	(1,971,627)	45,602,996
Առևտուր	118,802,871	(4,551,308)	114,251,563	107,048,226	(2,447,372)	104,600,854
Այլ	140,844,232	(3,553,896)	137,290,336	119,476,418	(1,547,598)	117,928,820
Ընդամենը	453,317,257	(17,691,356)	435,625,901	392,576,581	(10,029,568)	382,547,013

Վերոնշյալ աղյուսակում ակնկալվող պարտքային կորուստների պահուստները ներառում են նաև որոշ վարկային պարտավորվածությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները (վճարային քարտեր և օվերդրաֆտներ), քանզի Բանկը չի կարող առանձնացնել վարկային պարտավորվածության բաղադրիչը ֆինանսական գործիքների բաղադրիչից:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավը, այդ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 3,566,477 հազար դրամ (2017թ.՝ 3,716,481 հազար դրամ) (տես՝ ծանոթագրություն 22): Բանկը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է ՀՀ դրամով վարկերի համար 12.04% (2017թ.՝ 12.74%) և ԱՄՆ դոլարով և Եվրոյով վարկերի համար՝ 10.41% (2017թ.՝ 7.25%):

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի կենտրոնացում տրամադրված վարկերի գծով 148,789,266 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 33%-ը) ընդհանուր գումարով՝ տրամադրված թվով 10 վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց (2017թ.՝ 61,617,444 հազար դրամ կամ համախառն վարկային պորտֆելի 16%-ը): Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստները կազմում են 2,858,161 հազար դրամ (2017թ.՝ 1,717,236 հազար դրամ):

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ

	2018			
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	1,293,321	423,277	1,316,656	3,033,254
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	15,691	(15,691)	-	-
- փոխանցում ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(8,505)	23,815	(15,310)	-
- փոխանցում ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(45,506)	(146,527)	192,033	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	194,328	264,134	2,674,625	3,133,087
Վերականգնում	-	-	878,619	878,619
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,738,814)	(1,738,814)
Մնացորդ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,449,329	549,008	3,307,809	5,306,146

Հազար ՀՀ դրամ	2018			
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	3,096,902	731,345	4,405,760	8,234,007
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	20,012	(20,012)	-	-
- փոխանցում ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(976)	976	-	-
- փոխանցում ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(8,161)	(9,327)	17,488	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	21,025	(31,294)	4,559,999	4,549,730
Վերականգնում	-	-	101,711	101,711
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(500,238)	(500,238)
Մնացորդ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,128,802	671,688	8,584,720	12,385,210

Վարկային պորտֆելի ակնկալվող պարտքային կորուստների աճը պայմանավորված է եղել պորտֆելի համախառն չափի աճով և պարտքային ռիսկի աճի եւ տնտեսական պայմանների վատթարացման հետևանքով փուլերի միջև շարժով: Տնտեսական գործոնների հետագա վերլուծությունը ներկայացված է 36.1.2 ծանոթագրությունում:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀՄՍ 39-ի համաձայն վարկերի արժեզրկումից կորուստների գծով պահուստի շարժն ըստ դասերի հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	2017		
	Հիփոթեքային և սպառողական վարկեր	Առևտրային վարկեր	Ընդամենը
2017թ. հունվարի 1 դրությամբ	1,293,063	6,234,766	7,527,829
Տարվա ծախս	1,132,795	1,972,804	3,105,599
Վերականգնում	153,775	1,076,607	1,230,382
Դուրսգրում	(132,261)	(1,701,981)	(1,834,242)
2017թ. դեկտմբերի 31-ի դրությամբ	2,447,372	7,582,196	10,029,568
Անհատական արժեզրկում	216,655	147,787	364,442
Խմբային արժեզրկում	2,230,717	7,434,409	9,665,126
	2,447,372	7,582,196	10,029,568
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	342,745	216,655	559,400

Ինչպես նշված է 33 ծանոթագրությունում, 2018թ. դեկտեմբերի 31-ի և 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Հաճախորդներին տրված վարկերի ժամկետային վերլուծությունը ներկայացված է 35 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկեր պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է 36 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը կապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 32 ծանոթագրությունում:

19 Ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր (պարտքային գործիքներ)	3,411,231	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր (բաժնային գործիքներ)	49,661	-
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր	-	1,649,612
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր (2017թ.՝ վաճառքի համար մատչելի)	3,460,892	1,649,612
Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող (2017թ.՝ վաճառքի համար մատչելի) պարտքային գործիքներ	9,145,216	15,258,125

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ինչպես նաև հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2018	2017
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	11,226	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(9)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,217	-

Վերոնշյալ կորուստների գծով պահուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանզի իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող (2017թ.՝ վաճառքի համար մատչելի) և հետգնման պայմանագրերով գրավադրված պարտքային գործիքների հաշվեկշռային արժեքը հենց իրենց իրական արժեքն է:

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն (2017թ.՝ վաճառքի համար մատչելի) ըստ արդյունավետ տոկոսադրույքների և մարմանը մնացած ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.		31 դեկտեմբերի 2017թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	8.25-16.90	2019-2032	-	-
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	-	-	7.5-10.59	2018-2022

20 Հիմնական միջոցներ

	Հող և շենքեր	Սարքա-վորումներ	Փոխադրա-միջոցներ	Համակարգ-չային տեխնիկա	Այլ հիմնական միջոցներ	Վարձակալ. հիմնական միջ. գծով կապ.ներդ.	Ընդամենը
Սկզբնական կամ վերագնահատված արժեք							
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	8,357,430	570,005	231,570	3,482,535	1,264,857	204,175	14,110,572
Ավելացում	31,783	42,783	73,398	361,485	319,557	96,861	925,867
Օտարում	(221,941)	(130)	(87,949)	-	(632)	-	(310,652)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,167,272	612,658	217,019	3,844,020	1,583,782	301,036	14,725,787
Ավելացում	4,100,700	29,984	73,791	299,172	224,202	30,907	4,758,756
Օտարում	(859,078)	(11,483)	(47,224)	(118,922)	(36,509)	-	(1,073,216)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,408,894	631,159	243,586	4,024,270	1,771,475	331,943	18,411,327
Կուտակված մաշվածություն							
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	872,427	472,148	186,344	2,417,005	876,590	29,062	4,853,576
Տարվա ծախս	301,400	30,751	22,608	322,137	136,185	6,778	819,859
Օտարում	(3,402)	(111)	(82,531)	-	-	-	(86,044)
Ճշգրտում	-	-	-	422	(422)	-	-
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,170,425	502,788	126,421	2,739,564	1,012,353	35,840	5,587,391
Տարվա ծախս	313,681	24,405	20,909	238,775	71,816	9,529	679,115
Օտարում	-	(11,039)	(23,792)	(103,240)	(33,238)	-	(171,309)
Վերադասակարգում	-	-	-	309	(309)	-	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,484,106	516,154	123,538	2,875,408	1,050,622	45,369	6,095,197
Հաշվեկշռային արժեք							
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,996,847	109,870	90,598	1,104,456	571,429	265,196	9,138,396
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,924,788	115,005	120,048	1,148,862	720,853	286,574	12,316,130

Ակտիվների վերագնահատում

Բանկի սեփականությունը հանդիսացող շենքերի վերագնահատումը կատարվել է 31 դեկտեմբերի 2013թ. դրությամբ անկախ գնահատող կազմակերպության կողմից՝ կիրառելով համեմատական և եկամտային մեթոդները, որի արդյունքում առաջացել է վերագնահատման աճ 589,278 հազար դրամ գումարով: Իրական արժեքով Բանկի սեփականությունը հանդիսացող շենքի գնահատման համար ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Հիմնական միջոցների իրական արժեքի հիերարխիայի համար տես ծանոթագրություն 33.3-ը:

Բանկի ղեկավարության գնահատմամբ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի վերագնահատված արժեքն էականորեն չի տարբերվում դրանց իրական արժեքից:

Եթե վերագնահատված շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի մոդելի կիրառմամբ, ապա հաշվեկշռային արժեքները կունենան հետևյալ տեսքը՝

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Սկզբնական արժեք	7,194,583	7,194,583
Կուտակված մաշվածություն	(1,357,501)	(1,081,817)
Հաշվեկշռային արժեք	5,837,082	6,112,766

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկբնական արժեքը կազմում է 246,362 հազար դրամ (2017թ.՝ 128,232 հազար դրամ):

Ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցներ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցների գումարը կազմում է 742,996 հազար դրամ (2017թ.՝ 751,911 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների:

Պայմանագրային պարտավորություններ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցների ձեռք բերման գծով (2017թ.՝ 2,600,583 հազար դրամ Բանկի նոր գլխամասային շենքի գնման գծով):

21 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Արտոնագրեր	Համակարգչային ծրագրեր	Կապիտալ ներդրումներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	2,338,577	264,024	4,847	135,806	2,743,254
Ավելացում	435,770	5,000	-	-	440,770
Օտարում	(4,174)	-	-	-	(4,174)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,770,173	269,024	4,847	135,806	3,179,850
Ավելացում	172,164	-	-	-	172,164
Օտարում	(95,444)	-	-	-	(95,444)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,846,893	269,024	4,847	135,806	3,256,570
Կուտակված ամորտիզացիա					
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	288,898	27,935	-	3,494	320,327
Մասհանումներ	141,565	13,897	-	5,636	161,098
Օտարում	(4,174)	-	-	-	(4,174)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	426,289	41,832	-	9,130	477,251
Մասհանումներ	298,492	57,189	-	16,577	372,258
Օտարում	(95,444)	-	-	-	(95,444)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	629,337	99,021	-	25,707	754,065
Հաշվեկշռային արժեք					
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,343,884	227,192	4,847	126,676	2,702,599
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,217,556	170,003	4,847	110,099	2,502,505

Պայմանագրային պարտավորություններ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի պայմանագրային պարտավորություններ 206,199 հազար դրամ գումարի չափով (2017թ.՝ 309,299 հազար դրամ) արտոնագրերի գնման գծով:

22 Բռնագանձված ակտիվներ

Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների տնօրինման արդյունքում տարվա ընթացքում ձեռք բերված ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Անշարժ գույք	3,563,062	3,594,959
Այլ	3,415	121,522
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	3,566,477	3,716,481

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Բանկի քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Բանկը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

23 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Դեբիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	1,440,094	1,031,725
Արժեզրկումից պահուստներ այլ ակտիվների գծով	(139,001)	-
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	1,301,093	1,031,725
Կանխավճարներ	1,024,660	1,209,767
Հաշվարկներ աշխատակիցների հետ	-	30
Նկարներ	47,050	47,050
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	17,583	22,648
Թանկարժեք մետաղներ	154,475	115,135
Պահեստ	318,529	389,360
Այլ	106,115	89,501
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	1,668,412	1,873,491
Ընդամենը այլ ակտիվներ	2,969,505	2,905,216

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներում փոփոխությունների վերլուծությունը ստորև.

Հազար ՀՀ դրամ	2018	2017
	Ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Այլ ֆինանսական ակտիվներ		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	89,754	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(97,749)	-
Զուտ վերականգնում	146,996	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	139,001	-

24 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	34,783,231	38,585,043
Ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	17,116,894	21,924,589
Ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	3,728,161	938,152
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	1,577,823	708,760
Վարկեր ռեպո համաձայնագրերով	7,790,070	13,847,877
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	64,996,179	76,004,421

Ֆինանսական կազմակերպություններից ավանդները և վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից վարկերը 19,078,298 հազար դրամ գումարով (55%) ստացված են մեկ ֆինանսական կազմակերպությունից (2017թ.՝ 21,620,085 հազար դրամ գումարով (56%) ստացված են մեկ ֆինանսական կազմակերպությունից):

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքները կազմել են 8.63% (2017թ.՝ 8.82%), ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար՝ 6.35% (2017թ.՝ 3.03%):

25 Առևտրային ֆինանսական պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Ռեպո համաձայնագրերով վերագրավադրված արժեթղթեր	23,230,915	24,556,156
Ընդամենը առևտրային նպատակներով պահվող ֆինանսական պարտավորություններ	23,230,915	24,556,156

26 Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	208,880	89,421
Ստացված վարկեր	428,711	603,531
Ընդամենը պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	637,591	692,952

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորություններում ներառված է Համաշխարհային բանկի «Գյուղացիական բարեփոխումների» ծրագրի շրջանակներում և Գյուղացիական ֆինանսավորման կառույց ԾԻԳ-ից ներգրավված 352,643 հազար դրամ վարկը (2017թ.՝ 462,856 հազար դրամ), «Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ից ներգրավված 10,614 հազար դրամ վարկը (2017թ.՝ 21,184 հազար դրամ), ինչպես նաև Գերմանա-Հայկական հիմնադրամի կողմից «Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման» ծրագրի շրջանակում ստացված վարկերը 11,617 հազար դրամ գումարով (2017թ.՝ 69,241 հազար դրամ):

27 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	131,905,739	66,460,012
Ժամկետային ավանդներ	33,434,612	50,957,236
	165,340,351	117,417,248
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	38,577,398	22,614,470
Ժամկետային ավանդներ	269,288,048	258,935,430
	307,865,446	281,549,900
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	473,205,797	398,967,148

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական/ֆիզիկական անձանց ավանդներում ներառված են ժամկետային ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված ակրեդետիվների և երաշխիքների գծով 29,974,151 հազար դրամ գումարով

(2017թ.՝ 22,671,881 հազար դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ամենամեծ տաս հաճախորդների միջոցների ընդհանուր գումարը (ներառյալ կապակցված անձինք, տես ծանոթ. 32) կազմում է 110,292,567 հազար դրամ (2017թ.՝ 118,316,969 հազար դրամ) կամ հաճախորդներից ներգրաված միջոցների ընդհանուր գումարի 23.3% (2017թ.՝ 29.7%):

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով արդյունավետ տոկոսադրույքները տատանվում են 3.00-14.70% (2017թ.՝ 0.08-16.04%), ԱՄՆ դոլարով և Եվրոյով պարտավորությունների համար 0.10-10.00% (2017թ.՝ 0.08-15.47%):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2017թ.՝ նույնպես):

28 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Պարտատոմսեր	11,462,171	8,967,294
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	11,462,171	8,967,294

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը թողարկել է տոկոսային պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Արժեքը մեկ պարտատոմսի դիմաց	Քանակ	%	Պարտատոմսի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
23.01.2017	AMD	10,000	10,000	14.0	23.01.2019	100,000,000
23.01.2017	USD	100	10,000	8.5	23.01.2019	1,000,000
05.12.2017	USD	100	172,000	7.5	07.12.2020	17,200,000
06.02.2018	USD	100	51,000	8.0	07.12.2022	5,100,000

Բանկի պարտատոմսերը ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիաե ֆոնդային բորսայում:

Տարվա ընթացքում Բանկը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ (2017թ.՝ նույնպես):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2017թ.՝ նույնպես):

29 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Վճարվելիք գումարներ	317,667	456,041
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	339,932	284,617
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	657,599	740,658
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	383,069	328,598
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	848	587
Ակտիվներին վերաբերող շնորհներ	-	1,709
Գործառնական այլ պարտավորություններ	-	43
Պահուստներ*	853,987	-
Այլ	2	129,881
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	1,237,906	460,818
Ընդամենը այլ պարտավորություններ	1,895,505	1,201,476

Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	1,709	1,791
Եկամտի ճանաչում	(1,709)	(82)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	1,709

*Պահուստները ստեղծվել են ֆինանսական երաշխիքների գծով կորուստներից: Ֆինանսական երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերաբերյալ վերլուծությունը տես 31 ծանոթագրությունում:

30 Սեփական կապիտալ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 31,374,560 հազար դրամ (2017թ.՝ նույնպես):

Համաձայն Բանկի կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 41,120 սովորական բաժնետոմսերից յուրաքանչյուրը 763 հազար դրամ անվանական արժեքներով:

Բանկի բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.		31 դեկտեմբերի 2017թ.	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Վիտալի Գրիգորյանց	29,805,832	95	31,374,560	100
Արսեն Միքայելյան	1,568,728	5	-	-
	31,374,560	100	31,374,560	100

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը ունեն մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

2018թ. և 2017թ. ընթացքում Բանկը չի ավելացրել բաժնետիրական կապիտալը:

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

31 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Վարկային գծերի չօգտագործված մաս	31,687,504	20,719,108
Ակրեդիտիվներ	-	1,279,062
Տրամադրված երաշխիքներ	54,825,209	35,968,014
Չօգտագործված օվերդրաֆտներ	495,672	330,148
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	87,008,385	58,296,332

Ֆինանսական երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև: Վարկային պարտավորվածությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի պահուստներում (տես՝ ծանոթագրություն 18-ում):

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Ֆինանսական երաշխիքներ		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	961,408	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(107,421)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	853,987	-

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով՝ Բանկը որպես վարձակալ

Բանկն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Մինչև 1 տարի	44,715	41,412
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	44,715	41,412

Կապիտալ բնույթի պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է 20, 21 ծանոթագրություններում:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն իրականացրել է աշխատակիցների ազնվության, շինությունների, փոխադրումների, կեղծված չեկերի, կեղծ արժեթղթերի և արժույթի, գրասենյակային պարունակության, համակարգչային հանցագործությունների, տնօրենի և պաշտոնատար անձանց պատասխանատվության և մասնագիտական պատասխանատվության ապահովագրություն:

Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

32 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Բանկի վերջնական վերահսկող է հանդիսանում ՌԴ քաղաքացի գործարար Վիտալի Սարգսի Գրիգորյանցը:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2018		2017	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	-	3,876,021	-	2,936,745
Տարվա ընթացքում տրամադրված	909,459	-	-	12,555,692
Տարվա ընթացքում մարված	-	(3,876,021)	-	(11,616,416)
Մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	909,459	-	-	3,876,021
Արժեզրկումից պահուստ	(2,407)	-	-	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	907,052	-	-	3,876,021
Հաճախորդներին տրված վարկեր				
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն	755,630	3,871,486	-	456,661
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	14,264,377	660,456	2,099,780	8,357,320
Տարվա ընթացքում մարված վարկեր	(7,476,325)	(4,203,174)	(1,344,150)	(4,942,495)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	7,543,682	328,768	755,630	3,871,486
Արժեզրկումից պահուստ	(294,204)	(12,822)	(12,090)	(61,944)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,249,478	315,946	743,540	3,809,542
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
Տարվա ընթացքում ստացված	20,998,054	-	-	-
Տարվա ընթացքում վճարված	(15,668,526)	-	-	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,329,528	-	-	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	5,837,319	3,464,117	801,556	771,411
Տարվա ընթացքում ստացված	59,943,407	1,646,156	31,215,913	26,730,782
Տարվա ընթացքում վճարված	(57,289,449)	(5,034,326)	(26,180,150)	(24,038,076)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,491,277	75,947	5,837,319	3,464,117
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ	281,130	29,501	25,131	298,647
Տոկոսային ծախսեր	994,699	4,253	247,209	596,047
Արժեզրկման ծախս/(հակադարձում)	284,521	(49,122)	12,090	54,637

Տնօրեններին և ղեկավար անձնակազմի այլ անդամներին (և ընտանիքի անդամներին) տարվա ընթացքում տրամադրված վարկերն ունեն 6 ամսից 10 տարի մարման ժամկետ և դրանց տոկոսադրույքը կազմում է 5.5-24% (2017թ.՝ 7-24%, 1-ից 15 տարի): Տնօրեններին տրամադրված վարկերը ապահովված են ոսկով, անշարժ գույքով, դրամական միջոցներով և այլ գույքով:

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Աշխատավարձ և պարգևատրումներ	339,764	313,601
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	339,764	313,601

33 Իրական արժեքի չափումը

Բանկի Խորհուրդը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ չգնանշվող առևտրային և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը, չգնանշվող ածանցյալ ֆինանսական գործիքները, այնպես էլ ոչ-պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ վաճառքի համար պահվող ակտիվները:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, ինչպես օրինակ՝ անշարժ գույքի և բռնագանձված գույքի, գնահատման համար: Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Բանկի Խորհրդի կողմից:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Բանկի ղեկավարությունը վերլուծում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք պետք է վերագնահատվեն համաձայն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ, համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Բանկի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ, որոշելու համար, թե հիմնավորված է արդյոք տվյալ փոփոխությունը:

ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1՝ նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2՝ Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3՝ ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

33.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին

հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	127,342,452	-	127,342,452	127,342,452
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	13,898,845	-	13,898,845	13,898,845
Հաճախորդներին տրված վարկեր	-	435,135,448	-	435,135,448	435,625,901
Այլ ակտիվներ	-	1,301,093	-	1,301,093	1,301,093
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	64,996,179	-	64,996,179	64,996,179
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	637,591	-	637,591	637,591
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	473,205,797	-	473,205,797	473,205,797
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	11,462,171	-	11,462,171	11,462,171
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	657,599	-	657,599	657,599

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	115,576,209	-	115,576,209	115,576,209
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	14,036,722	-	14,036,722	14,036,722
Հաճախորդներին տրված վարկեր	-	382,547,013	-	382,547,013	382,547,013
Այլ ֆինանսական ակտիվներ	-	1,031,725	-	1,031,725	1,031,725
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	76,004,421	-	76,004,421	76,004,421
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	692,952	-	692,952	692,952
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	398,967,148	-	398,967,148	398,967,148
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	8,967,294	-	8,967,294	8,967,294
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	740,658	-	740,658	740,658

Պահանջներ և պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքերը կախված են վարկառուի պարտքային ռիսկից և տատանվում են 5% մինչև 24% տարեկան (2017թ.՝ 5.0% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների նկատմամբ

Ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների ավանդների իրական արժեքը գնահատվում է՝ օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ավանդների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

33.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2018թ.			
	Մակարդակ 1	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական ակտիվներ				
Ցուցակված պարտատոմսեր	99,452	-	-	99,452
Չցուցակված պարտատոմսեր՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը	-	12,456,995	-	12,456,995
Չցուցակված բաժնային գործիքներ	-	49,661	-	49,661
Ընդամենը	99,452	12,506,656	-	12,606,108

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	8,940	-	8,940
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական պարտավորություններ	-	23,230,915	-	23,230,915
Ընդամենը	-	23,239,855	-	23,239,855
Զուտ իրական արժեք	99,452	(10,733,199)	-	(10,633,747)

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	1,625,584	-	1,625,584
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	15,258,125	-	15,258,125
Ընդամենը	-	16,883,709	-	16,883,709
Ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական պարտավորություններ	-	24,556,156	-	24,556,156
Ընդամենը	-	24,556,156	-	24,556,156
Զուտ իրական արժեք	-	(7,672,447)	-	(7,672,447)

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Գնանշվող ներդրումներ

Բոլոր ցուցակված պարտատոմսերը թողարկվել են Հայաստանում հրապարակայնորեն գնանշվող ընկերությունների կողմից:

Չգնանշվող պարտքային արժեթղթեր

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշվող պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու նպատակով:

Չգնանշվող բաժնային գործիքներ

Բանկը չգնանշվող բաժնային գործիքների իրական արժեքը որոշելու համար օգտագործում է շուկայական և եկամտային մոտեցումների համադրությունը: Շուկայական և եկամտային մոտեցումները ոչ հրապարակային բաժնային գործիքների գնահատմանը բնորոշ մեթոդներ են: Շուկայական մոտեցման համաձայն՝ Բանկն օգտագործում է գները և նույնական կամ համադրելի արժեթղթերով շուկայական գործարքներից հավաքված այլ համապատասխան տեղեկատվություն: Եկամտային մոտեցման ներքո ապագա գումարները վերափոխվում են մեկ ներկա գումարի (օրինակ՝ զեղչված դրամական հոսքերի մոդել): Շուկայական մոտեցումը համարվում է նախընտրելի, քանի որ հիմնական օգտագործվող տեղեկատվությունը, արպես կանոն, դիտարկելի է: 2017թ. չգնանշվող բաժնային գործիքները չափվել են սկզբնական արժեքով և, հետևաբար, դուրս են մնացել այս բացահայտումից:

Ածանցյալներ

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Բանկը օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը:

Ընդհանրապես, Բանկի կողմից իրականացվող ածանցյալները չեն շրջանառվում գործող շուկաներում: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը, օր.՝ շուկայի արժույթի փոխանակման դրույքը (մակարդակ 2): Բանկի կողմից ներդրվող ածանցյալների մեծամասնությունը ներառված է 2-րդ մակարդակում և բաղկացած է արտարժութային սվոպ պայմանագրերից:

33.3 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումը

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Շենքեր	-	*11,408,894*	-	*11,408,894*
Զուտ իրական արժեք	-	11,408,894	-	11,408,894

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Շենքեր	-	*8,167,272*	-	*8,167,272*
Զուտ իրական արժեք	-	8,167,272	-	8,167,272

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-րդում

3-րդ մակարդակում դասակարգված Բանկի ոչ ֆինանսական ակտիվների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա: Այս մակարդակում ոչ ֆինանսական ակտիվների շարժը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2018
	Հիմնական միջոցներ
Ոչ ֆինանսական ակտիվներ	
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	8,167,272
Առք	4,100,700
Վաճառք	(859,078)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,408,894
Զուտ իրական արժեք	11,408,894

Հազար ՀՀ դրամ	2017
	Հիմնական միջոցներ
Ոչ ֆինանսական ակտիվներ	
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	8,357,430
Առք	31,783
Օտարում	(221,941)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,167,272
Զուտ իրական արժեք	8,167,272

Բանկի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Գնահատումը իրականացվել է՝ կիրառելով համեմատական և եկամտային մեթոդները, որոնք արտացոլում են նմանատիպ գույքերի վերջին շուկայական գործարքների գները և ներառում է վերոնշյալ հողին հատուկ գործոնների ճշգրտումներ, այդ թվում հողամասի չափը, գտնվելու վայրը, գրավադրումը և ներկայիս օգտագործումը և այլն:

Շենքերը վերագնահատվել են 2013թ.:

Նշանակալի չդիտարկվող ներդրումը՝ վերոնշյալ հողին հատուկ գործոնների ճշգրտումն է: Այս ճշգրտումների ծավալն ու ուղղությունը կախված է դիտարկվող շուկայում նմանատիպ գույքի գործարքների քանակից և բնույթից, որոնք կիրառվում են որպես գնահատման մեկնարկային կետ: Չնայած նրան, որ այս ելակետային տվյալը սուբյեկտիվ դատողություն է, ղեկավարությունը գտնում է, որ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունները նյութապես ազդեցություն չեն ունենա ընդհանուր գնահատման վրա:

34 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2018թ.					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների ամախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների ամախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 17,18)	23,556,864	-	23,556,864	(23,556,864)	-	-
Ֆինանսական պարտավորություններ						
Վարկեր ռեպո համաձայնագրերով (Ծանոթ. 24)	(7,790,070)	-	(7,790,070)	9,145,216	-	1,355,146

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր (Ծանոթ. 17, 18)	24,972,103	-	24,972,103	(24,972,103)	-	-
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ (Ծանոթ. 24)	(13,847,877)	-	(13,847,877)	15,258,125	-	1,410,248

35 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 36.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2018թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	*Մինչև 12 ամիս, ենթահանրագումար*	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	*12 ամսից ավելի, ենթահանրագումար*	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	127,342,452	-	*127,342,452*	-	-	-	127,342,452
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,531,878	214,367	*13,746,245*	152,600	-	*152,600*	13,898,845
Հաճախորդներին տրված վարկեր	75,099,920	144,898,352	*219,998,272*	180,580,628	35,047,001	215,627,629	435,625,901
Ներդրումային արժեթղթեր							
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	229,849	*229,849*	-	3,231,043	*3,231,043*	3,460,892
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	99,452	*99,452*	4,080,323	4,965,441	*9,045,764*	9,145,216
Այլ ֆինանսական ակտիվներ	1,301,093	-	*1,301,093*	-	-	-	1,301,093
	217,275,343	145,442,020	*362,717,363*	184,813,551	43,243,485	*228,057,036*	590,774,399
Պարտավորություններ							
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	8,940	-	*8,940*	-	-	-	8,940
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	27,711,867	9,784,737	*37,496,604*	11,179,386	16,320,189	*27,499,575*	64,996,179
Առևտրային ֆինանսական պարտավորություններ	23,230,915	-	*23,230,915*	-	-	-	23,230,915
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	220,497	71,283	*291,780*	137,969	207,842	*345,811*	637,591
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	192,535,916	156,213,004	*348,748,920*	118,871,570	5,585,307	*124,456,877*	473,205,797
Թողարկված պարտքային արժեթղթեր	595,560	-	*595,560*	10,866,611	-	10,866,611	11,462,171
Այլ ֆինանսական պարտավորություններ	657,599	-	*657,599*	-	-	-	657,599
	244,961,294	166,069,024	*411,030,318*	141,055,536	22,113,338	*163,168,874*	574,199,192
Զուտ Դիրք	(27,685,951)	(20,627,004)	*(48,312,955)*	43,758,015	21,130,147	*64,888,162*	16,575,207
Կուտակված ճեղքվածք	(27,685,951)	(48,312,955)		(4,554,940)	16,575,207		

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահան-րագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահան-րագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	115,576,209	-	115,576,209	-	-	-	115,576,209
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	8,462,159	2,058,935	10,521,094	3,515,628	-	3,515,628	14,036,722
Հաճախորդներին տրված վարկեր	67,230,983	68,557,836	135,788,819	169,194,795	77,563,399	246,758,194	382,547,013
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	527,338	527,338	1,098,246	24,028	1,122,274	1,649,612
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	15,258,125	-	15,258,125	-	-	-	15,258,125
Այլ ֆինանսական ակտիվներ	1,031,725	-	1,031,725	-	-	-	1,031,725
	207,559,201	71,144,109	278,703,310	173,808,669	77,587,427	251,396,096	530,099,406
Պարտավորություններ							
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	29,109,967	4,059,734	33,169,701	22,569,720	20,265,000	42,834,720	76,004,421
Առևտրային ֆինանսական պարտավորություններ	24,556,156	-	24,556,156	-	-	-	24,556,156
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	692,952	-	692,952	-	-	-	692,952
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	112,531,153	193,355,576	305,886,729	91,305,186	1,775,233	93,080,419	398,967,148
Թողարկված պարտքային արժեթղթեր	10,828	45,846	56,674	8,910,620	-	8,910,620	8,967,294
Այլ ֆինանսական պարտավորություններ	740,658	-	740,658	-	-	-	740,658
	167,641,714	197,461,156	365,102,870	122,785,526	22,040,233	144,825,759	509,928,629
Զուտ Դիրք	39,917,487	(126,317,047)	(86,399,560)	51,023,143	55,547,194	106,570,337	20,170,777
Կուտակված ճեղքվածք	39,917,487	(86,399,560)		(35,376,417)	20,170,777		

36 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն, և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Բանկի առաքելությանը, հիմնական ու միջանկյալ նպատակներին համահունչ և ուղղված է Բանկի ֆինանսական վիճակի բարելավմանը և հեղինակության բարձրացմանը:

Բանկում իրականացվող ռիսկերի կառավարման քաղաքականության հիմնական նպատակներն են բացահայտել, գնահատել և կառավարելի դարձնել բոլոր այն հնարավոր ռիսկերը, որոնք անմիջականորեն առնչվում են Բանկի գործունեության հետ, օժանդակել Բանկի ղեկավարությանը կայացնել հնարավորինս օպտիմալ որոշումներ, նպաստել Բանկի գործունեության ռազմավարական և մարտավարական իրատեսական պլանավորմանը, հաշվի առնելով ռիսկ/եկամտաբերություն ընդունելի հարաբերակցության սկզբունքները՝ ստանձնել կառավարելի ռիսկեր, սահմանել ռեսուրսների տեղաբաշխման նախընտրելի ոլորտները,

ապահովել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվների, ինչպես նաև Բանկի կողմից սահմանված ներբանկային նորմատիվների պահպանումը:

Բանկում իրականացվող ռիսկերի կառավարման քաղաքականությունը բխում է հետևյալ հիմնական սկզբունքներից.

- ✓ Ռիսկերի կառավարումը պետք է լինի կանխարգելող և հիմնավորված.
- ✓ Ռիսկերը պետք է հնարավորինս ամբողջությամբ բացահայտվեն, օբյեկտիվորեն գնահատվեն և արդյունավետորեն կառավարվեն.
- ✓ Բացահայտված ռիսկերին արձագանքելիս ռիսկերի կառավարման/հսկողության ծախսերը և ան¬ցանկալի դեպքերի ի հայտ գալու հետևանքները պետք է կշռվեն ռիսկի նվազեցման արդյունքում ակնկալվող օգուտների հետ.
- ✓ Ռիսկերի կառավարումը կարող է ներառել այնպիսի մոտեցումներ, ինչպիսիք են՝ ռիսկերի նվազեցմանն ուղղված ընթացակարգերը, ռիսկի փոխանցումը երրորդ անձանց, օրինակ՝ ապահովագրության միջոցով, և ռիսկերի ընդունումը, երբ դրանց նվազեցման ծախսերը գերազանցում են գնահատված կորուստները կամ դրանց նվազեցումը գործնականորեն անհնար է: Այս նպատակով սահմանվում է ռիսկի ընդունելի մակարդակը:

Բանկի ռիսկերի բացահայտումը, չափումը, վերահսկումը և մոնիտորինգը կրում են պարբերական և շարունակական բնույթ: Բանկում իրականացվող ռիսկերի կառավարման քաղաքականությունը թույլ է տալիս հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստների բացառման կամ դրանց նվազագույնի հասցնելու միջոցով արդյունավետ կառավարել Բանկի և Բանկի հաճախորդների ակտիվների և պարտավորությունների հետ առնչվող ռիսկերը՝ ապահովելով շահութաբերության, իրացվելիության և վճարունակության ընդունելի մակարդակ:

Բանկում ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով նկարագրված բոլոր բիզնես գործընթացների, վերջիններիս գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի միջոցով:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Բանկում պատշաճ ռիսկերի կառավարման համակարգի ձևավորման, կենսագործունեության և արդյունավետության համար պատասխանատու են Բանկի խորհուրդը, Վարչությունն ու Վարչության նախագահը, Բանկի ղեկավարները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ներքին իրավական ակտերով սահմանված իրենց պարտականությունների շրջանակներում:

Ռիսկերի կառավարման հանձնաժողով և Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Բանկում ռիսկերի կառավարման քաղաքականության իրականացման համար պատասխանատու են Բանկի Ռիսկերի կառավարման հանձնաժողովը և Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից շարունակաբար վերահսկվում են Բանկի ստանձնած ռիսկերի մակարդակները և դրանց գծով նախանշված սահմանաչափերի պահպանումը, տարբեր սթրես-թեստերի իրականացման միջոցով գնահատվում են հնարավոր ռիսկերի ազդեցությունը Բանկի գործունեության վրա:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանման (նաև այլ շահագրգիռ ստորաբաժանումների) կողմից ներկայացվող Բանկի գործունեությանն առնչվող ռիսկերի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծություններն ու առաջարկությունները քննարկվում են Ռիսկերի կառավարման հանձնաժողովի նիստերին և ներկայացվում են Բանկի վարչությանը՝ համապատասխան որոշում ընդունելու նպատակով:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի վարչության կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը և արդյունավետությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի վարչության անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Բանկի խորհուրդ:

Ռիսկերի բնորոշում և գնահատում

Կախված տարատեսակ գործոններից՝ Բանկը նպատակահարմար է գտնում բանկային ռիսկերը բաժանել արտաքին և ներքին ռիսկերի:

Արտաքին ռիսկերն են՝ երկրի, գնային, մրցակցային և ֆորսմաժորային ռիսկերը:

Ներքին ռիսկերն են՝ վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային, գործառնական, անձնակազմի և փողերի լվացման ռիսկերը:

Երկրի ռիսկ

Երկրի ռիսկը Բանկը կառավարում է՝ օգտվելով միջազգային վարկանիշային գործակալությունների (Moody's, S&P, Fitch) կողմից միջազգային բանկերին և կազմակերպություններին շնորհված վարկանիշներից: Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը կատարում է Բանկի կոնտրագենտ արտասահմանյան բանկերի վարկանիշների պարբերական մոնիտորինգ:

Գնային ռիսկ

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում՝ ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում, հնարավոր կորուստների գնահատում ամսական կտրվածքով կիրառվող սթրես թեստերի միջոցով, ֆինանսական գործիքների գծով լիմիտների (ըստ արժեթղթերով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի) սահմանում:

Մրցակցային ռիսկ

Մրցակցային ռիսկի կառավարումը Բանկում իրականացվում է բիզնես ստորաբաժանումների և Մարքեթինգային հետազոտությունների բաժնի կողմից, պարբերաբար պարբերաբար իրականացվող Բանկի և այլ բանկերի կողմից առաջարկվող ծառայությունների տեսականու և պայմանների համեմատության միջոցով:

Ֆորսմաժորային ռիսկ

ISO 27001-2005-ի պահանջներին համապատասխան Բանկն ունի սերվերային պահուստային կենտրոն: Կենտրոնի տեղակայվածությունը Բանկի գլխավոր գրասենյակից դուրս, հեռու տարածքում, թույլ կտա ապահովել Բանկի գործունեությունը ֆորսմաժորային իրավիճակների ժամանակ:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկերի կառավարման գլխավոր խնդիրը Բանկի համար հանդիսանում է վարկային ռիսկերի ժամանակին բացահայտումը, գնահատումը և դրանց նվազեցման ուղղությամբ համապատասխան քայլերի իրականացումը:

Բանկում վարկային ռիսկը գնահատվում է ինչպես յուրաքանչյուր վարկառուի, այնպես էլ ամբողջ վարկային պորտֆելի գծով: Բանկի կողմից մշակված համապատասխան մեթոդաբանության համաձայն՝ նախքան վարկի տրամադրումը, գնահատվում է պոտենցիալ վարկառուի վարկունակությունը: Վարկային ռիսկի կանխարգելման տեսանկյունից,

վարկավորման ժամանակ էապես կարևորվում է այնպիսի սկզբունքների պահպանումը, ինչպիսիք են վարկի ապահովվածությունն ու նպատակայնությունը: Վարկի տրամադրումից հետո, վարկային պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում, Բանկի կողմից իրականացվում է վարկի մոնիթորինգ՝ վարկառուի վճարունակությունը և վարկի ապահովվածությունը պարբերաբար գնահատելու և հնարավոր վարկային ռիսկի զսպման ուղղությամբ համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով: Պարբերաբար վերլուծության է ենթարկվում նաև Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը ըստ տնտեսության ճյուղերի, հաճախորդների և վարկատեսակների՝ պորտֆելի դիվերսիֆիկացիան և որակը ապահովելու նպատակով:

Վարկային ռիսկի զսպման գործում Բանկում խիստ կարևորվում է նաև Վարկային կոմիտեի գործունեությունը: Վարկային կոմիտեն հանդիսանում է Բանկի վարկային քաղաքականությունն իրականացնող մարմին, որի նպատակն է Բանկի վարկային գործունեության կառավարումը և որակյալ վարկային պորտֆելի ձևավորումը: Վարկային կոմիտեի հիմնական խնդիրն է կայացնել վարկային ռիսկ պարունակող գործարքների իրականացման և սպասարկման հետ կապված մասնագիտական կոլեգիալ արձանագրային կամ վերջնական որոշում:

Իրացվելիության ռիսկ

Բանկում իրացվելիության կառավարման նպատակն է՝ ստեղծել այնպիսի ֆինանսական կարողությունների ամբողջություն, որը հնարավորություն կտա առանց լուրջ հիմնախնդիրների բավարարելու բոլոր տեսակի կրեդիտորների, ավանդատուների և այլ հաճախորդների օրինական դրամական պահանջները, որոնք կարող են արտացոլված լինել Բանկի հաշվեկշռային և հետհաշվեկշռային հոդվածներում, ինչպես նաև այս ամենի հետ մեկտեղ ապահովել շահութաբերության հնարավոր առավելագույն մակարդակ:

Բանկում սահուն իրացվելիության ապահովման և իրացվելիության ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով իրականացվում է ակտիվների և պասիվների փոխհամաձայնեցված կառավարում՝ ապահովելով.

- ✓ բարձր իրացվելի ակտիվների բավարար առկայություն,
- ✓ ռեսուրսների կայունություն,
- ✓ ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքների ընդունելի սահմանաչափեր,
- ✓ արտաքին աղբյուրներից միջոցներ ներգրավելու հնարավորություններ:

Բանկում իրացվելիության կառավարման ճիշտ որոշումներ ընդունելու գործում հատկապես կարևորվում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը, որն իրականացվում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքների (GAP) հաշվարկման մոդելով՝ ակնթարթային (ցպահանջ) և կուտակային տարանջատումներով: Ակնթարթային իրացվելիությունը հաշվարկվում է ամենօրյա կտրվածքով՝ իրավիճակային ճիշտ որոշումներ կայացնելու նպատակով:

36.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտհաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Բանկի Ռիսկերի

կառավարման վարչության կողմից: Համապատասխան հաշվետվություններն ու վերլուծությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Վարչությանը:

Բանկում վարկային ռիսկը կառավարվում է համաձայն Բանկի վարկային քաղաքականության և ոլորտը կարգավորող այլ ներքին իրավական ակտերի: Ռիսկերի կառավարման վարչության կողմից կատարվում է վարկային պորտֆելի օրական կտրվածքով մոնիտորինգ, կառուցված շարքերի հիման վրա վարկային պորտֆելի դինամիկայի հաշվարկ և պորտֆելի որակի վերլուծություն ըստ պրոդուկտների ու մասնաճյուղերի, ինչի հիման վրա կատարվում են վարկային պորտֆելի որակական ցուցանիշների կանխատեսումներ: Ռիսկերի կառավարման վարչությունը իրականացնում է նաև որոշ վարկատեսակների վարկերի մոնիտորինգ հաստատված ընթացակարգերով, իսկ հարկ եղած դեպքում այլ վարկեր ելնելով վարկառուի վարկունակության վատթարացումից: Բանկի տրամադրվող վարկերը հաստատվում են նաև ռիսկերի վարչության կողմից ներքին իրավական ակտերի պահանջների համաձայն նվազեցնելով վարկային ռիսկը:

36.1.1 Վարկերի որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Բանկի՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված պարտավորվածությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքային պայմանագրերի գումարները:

Հազար ՀՀ դրամ

Ներքին վարկանիշեր	31 դեկտեմբերի 2018թ.				31 դեկտեմբերի 2017թ.
	Փուլ 1 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Փուլ 2 Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Փուլ 3 Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ					
Ստանդարտ	127,348,537	-	-	127,348,537	115,576,209
Համախառն հաշվեկշռային արժեք	127,348,537	-	-	127,348,537	115,576,209
Արժեզրկումից պահուստ	(6,085)	-	-	(6,085)	-
Զուտ հաշվեկշռային արժեք	127,342,452	-	-	127,342,452	115,576,209
Պահանջներ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ					
Ստանդարտ	13,957,123	-	-	13,957,123	14,036,722
Համախառն հաշվեկշռային արժեք	13,957,123	-	-	13,957,123	14,036,722
Արժեզրկումից պահուստ	(58,278)	-	-	(58,278)	-
Զուտ հաշվեկշռային արժեք	13,898,845	-	-	13,898,845	14,036,722

Հազար ՀՀ դրամ

Ներքին վարկանիշեր	31 դեկտեմբերի 2018թ.				31 դեկտեմբերի 2017թ.
	Փուլ 1 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Փուլ 2 Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Փուլ 3 Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր					
Բարձր	55,451,030	-	-	55,451,030	51,541,119
Ստանդարտ	5,628,746	1,917,157	-	7,545,903	6,109,090
Ցածր	-	419,064	-	419,064	516,112
Չաշխատող	-	-	7,094,696	7,094,696	2,909,629
Համախառն հաշվեկշռային արժեք	61,079,776	2,336,221	7,094,696	70,510,693	61,075,950
Արժեզրկումից պահուստ	(1,449,329)	(549,008)	(3,307,809)	(5,306,146)	(3,697,432)
Զուտ հաշվեկշռային արժեք	59,630,447	1,787,213	3,786,887	65,204,547	57,378,518
Առևտրային վարկեր					
Բարձր	330,578,996	-	-	330,578,996	287,165,221
Ստանդարտ	27,577,890	1,349,911	-	28,927,801	26,366,018
Ցածր	-	2,997,591	-	2,997,591	23,312
Չաշխատող	-	-	20,302,176	20,302,176	17,946,080
Համախառն հաշվեկշռային արժեք	358,156,886	4,347,502	20,302,176	382,806,564	331,500,631
Արժեզրկումից պահուստ	(3,128,802)	(671,688)	(8,584,720)	(12,385,210)	(6,332,136)
Զուտ հաշվեկշռային արժեք	355,028,084	3,675,814	11,717,456	370,421,354	325,168,495
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները (2017թ.՝ վաճառքի համար մատչելի)					
Ստանդարտ վարկանիշ	12,556,447	-	-	12,556,447	16,883,709
Իրական արժեք	12,556,447	-	-	12,556,447	16,883,709
Արժեզրկումից պահուստ	(11,217)	-	-	(11,217)	-
Այլ ֆինանսական ակտիվներ					
Ստանդարտ	1,440,094	-	-	1,440,094	1,031,725
Համախառն հաշվեկշռային արժեք	1,440,094	-	-	1,440,094	1,031,725
Արժեզրկումից պահուստ	(139,001)	-	-	(139,001)	-
Զուտ հաշվեկշռային արժեք	1,301,093	-	-	1,301,093	1,031,725

Հազար ՀՀ դրամ

Ներքին վարկանիշեր	31 դեկտեմբերի 2018թ.				31 դեկտեմբերի 2017թ.
	Փուլ 1 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Փուլ 2 Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Փուլ 3 Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը	Ընդամենը
Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ					
Ստանդարտ	87,008,385	-	-	87,008,385	58,296,332
	87,008,385	-	-	87,008,385	58,296,332
Արժեզրկումից պահուստ*	(853,987)	-	-	(853,987)	-

*Վերոնշյալ աղյուսակում վարկային պարտավորվածություններ և տրամադրված երաշխիքներում բացահայտված ակնկալվող պարտքային կորուստների պահուստը վերաբերում է միայն տրամադրված երաշխիքներին: Վարկային պարտավորվածությունների՝ վճարային քարտերի և օվերդրաֆտների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստը ներառված է վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստում, քանի որ Բանկը չի կարող վարկային պարտավորվածության բաղադրիչը տարանջատել ֆինանսական գործիքի բաղադրիչից և ակնկալվող պարտքային կորուստները ճանաչել առանձին-առանձին:

36.1.2 Արժեզրկման գնահատում

2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող քաղաքականություն

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Բանկի՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տես 4.4.6 ծանոթագրությունը):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Բանկը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Բանկը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Բանկը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ: 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտվող վարկեր. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան): Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների չափանիշներ

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները ներկայացված են հետևյալ պարագրաֆներում: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- 7 և ավել ժամկետանց օրեր հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար - Հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար 7 և ավել ժամկետանց օրերը վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը

վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

- Համեմատական փոփոխություն 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ: 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքի, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:

Ներդրումային արժեթղթերի չափանիշներ

Ստորև ներկայացված են արժեթղթերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները, որոնք բոլորն էլ որոշման մեջ ունեն հավասար կշիռ.

- 12-ամսյա դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն - 12-ամսյա դեֆոլտի հավանականության էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում երկրի (սուվերեն) վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած B2 մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Բանկի կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցէ մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Բանկը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են դեֆոլտի ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված) գործոններով, որոնք մատնանշում են դեֆոլտի ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Խմբային կամ անհատական գնահատում

Բանկը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- խոշոր և առանձնահատուկ վարկեր
- գանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեքով/իրական արժեքով՝ այլ համապատիկ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները,
- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես ձեռքբերված կամ ստեղծված արժեզրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Բանկը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- վարկի տեսակը (կորպորատիվ, հիփոթեք, վարկային քարտ, սպառողական վարկ և այլն)
- հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),
- գրավի տեսակը (օրինակ՝ գույք, ստացվելիք գումարներ և այլն),
- արժույթ
- այլ բնորոշ հատկանիշներ:

Դեֆոլտի սահմանում և «առողջացում»

Բանկը համարում է ֆինանսական գործիքը դեֆոլտի ենթարկված, և, հետեւաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Բանկը միջբանկային հաշիվները համարում է դեֆոլտի ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ դեֆոլտի ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուն համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուն դեֆոլտում է,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,
- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում՝ վարկի զգալի մասի զիջմամբ,
- վարկային կազմակերպությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Բանկի քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում դեֆոլտի սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չաշխատող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Վերանայված և փոփոխված վարկեր

Բանկը երբեմն զիջումներ կամ փոփոխություններ է կատարում վարկի սկզբնական պայմաններում՝ արձագանքելով վարկառուի ֆինանսական դժվարություններին՝ գրավը սեփականություն վերցնելու կամ այլ կերպ այն հավաքագրելու փոխարեն: Բանկը համարում է վարկը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով վարկառուի ներկա կամ կանխատեսվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե վարկառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ձախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո ցանկացած արժեզրկում չափվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ, որը հաշվարկվում է պայմանների

փոփոխությունից առաջ: Դա Բանկի՝ վերանայված վարկերի վերահսկման քաղաքականությունն է, ինչը կօգնի ապահովել ապագա վճարումների հավանականությունը:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Բանկը «առողջացման» ժամանակաշրջան է սահմանում վերանայումից հետո ընկած 12-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է միայն վերանայված և չաշխատող պարտքերի համար (բացառելով արտոնյալ ժամանակահատվածը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայումից անմիջապես հետո հնարավոր չէ որոշել ֆինանսական դժվարությունների առկայությունը՝ անհրաժեշտ է օգտագործել «առողջացման» ժամանակաշրջանը՝ որոշելու համար արդյոք պարտքն արդյունավետ է «առողջացել»: Այսպիսով, բոլոր վերանայված և չաշխատող պարտքերը վերանայումից հետո՝ «առողջացման» ժամանակաշրջանում, պետք է մնան 3-րդ փուլում, անկախ պարտավորության դրական դրսևորումից (ժամկետանց օրերի բացակայություն և այլն):

Բանկը փորձաշրջան է համարում «առողջացման» ժամանակաշրջանից հետո ընկած 24-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է վերանայված և աշխատող պարտքերի համար: Ակտիվը՝ որպես վերանայված և աշխատող պարտքեր դասակարգվելուց հետո շարունակում է մնալ առնվազն 24-ամսյա փորձաշրջանում որպես վերանայված:

Որպեսզի վարկը չդասակարգվի վերանայված կատեգորիայում, հաճախորդը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին.

- իր բոլոր պարտքերը պետք է դիտարկվեն աշխատող,
- երկու տարվա փորձաշրջանն ավարտվում է այն օրը, երբ վերանայման պայմանագիրը համարվում է աշխատող,
- փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսի ընթացքում ոչ էական համարվող մայր գումարի կամ տոկոսագումարի կանոնավոր վճարումներ,
- հաճախորդը չունի որևէ պայմանագիր, որը ավելի քան 30 օր ժամկետանց է:

Եթե փոփոխությունները զգալի են, վարկը ապաճանաչվում է, ինչպես բացատրվում է 4.4.4 ծանոթագրությունում:

Դեֆոլտի հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի դեֆոլտ հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Վնաս դեֆոլտի ժամանակ (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են դեֆոլտից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար դեֆոլտի ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում դեֆոլտի պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Բանկի դեֆոլտների վերջին տվյալների վերլուծության վրա:

Կանխատեսվող տեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է 4.4.6 ծանոթագրության գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Բանկը օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Բանկը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները: Մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը ակնկալվող պարտքային կորուստների վրա հաշվարկելու համար Բանկն օգտագործում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակ որպես ելակետային տվյալներ իր մոդելների համար, այդ թվում՝

- ՀՆԱ-ի աճ,
- Զուտ ընթացիկ արտասահմանյան տրանֆերտներ,
- Գործազրկության մակարդակ,
- Բանկի չաշխատող վարկերի մասնաբաժինն ընդհանուր տրված վարկերում
- Արտարժույթի պաշտոնական փոխարժեք

Արժեզրկման գնահատման քաղաքականությունը մինչև 2018թ. հունվարի 1

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական միջոցների հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Բանկը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման անհատական գնահատում

Բանկը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի կամ փոխատվության համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական միջոցների հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ կրեդիտ քարտերը, հիպոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի և փոխատվությունների գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ՝ ինչ վարկերինը:

Չարժեզրկված, ոչ ժամկետանց վարկեր և փոխատվություններ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է չարժեզրկված և ոչ ժամկետանց վարկերի որակը՝ հիմնված կորուստների պատմության վրա:

Հազար ՀՀ դրամ	2017
Հաճախորդներին տրված վարկեր	
Արդյունաբերություն	1.0%
Գյուղատնտեսություն	1.0%
Շինարարություն	4.1%
Առևտուր	2.1%
Սպառողական	7.2%
Հիփոթեքային	1.6%
Այլ	1.0%

Պարտքային ռիսկ պարունակող այլ ֆինանսական ակտիվների գծով 2017թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը կորուստներ չի ունեցել:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը և փոխատվությունները, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ: Ժամկետանց վարկերի հիմնական մասն արժեզրկված չեն:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է հետևյալ աղյուսակում.

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչէ 30 օր	31 –ից 60 օր	61 –ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր					
Արդյունաբերություն	-	-	-	7,407,299	7,407,299
Գյուղատնտեսություն	14,341	6,974	7,447	18,849	47,611
Շինարարություն	-	34,126	-	1,418,233	1,452,359
Առևտուր	-	2,761	811	163,061	166,633
Սպառողական	747,176	213,831	204,191	2,255,345	3,420,543
Հիփոթեքային	64,157	49,020	49,109	82,218	244,504
Այլ	-	643	97	8,396,677	8,397,417
Ընդամենը	825,674	307,355	261,655	19,741,682	21,136,366

36.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական սեգմենտների:

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ	ՏՀԶԿ	Ոչ ՏՀԶԿ Երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	116,269,239	6,702,814	4,370,399	127,342,452
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,263,355	981,232	10,654,258	13,898,845
Հաճախորդներին տրված վարկեր	385,684,603	805,471	49,135,827	435,625,901
Ներդրումային արժեթղթեր				
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	3,443,219	17,673	-	3,460,892
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	9,145,216	-	-	9,145,216
Այլ ակտիվներ	1,287,003	2,047	12,043	1,301,093
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	518,092,635	8,509,237	64,172,527	590,774,399
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	476,011,641	3,829,466	50,258,299	530,099,406

Ակտիվները դասակարգվում են՝ հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Արդյունաբերության ճյուղեր

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ տնտեսության ճյուղերի.

Հազար ՀՀ դրամ	Ֆինանսա-կան կազմակերպ ություններ	Արդյու-նաբե-րություն	Շինա-րարություն	Առևտուր	Սպառո-ղական ոլորտ	Հիփոթեք	Այլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	127,342,452	-	-	-	-		-	127,342,452
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,898,845	-	-	-	-		-	13,898,845
Հաճախորդներին տրված վարկեր	-	50,706,947	45,575,961	136,848,110	53,805,463	11,399,084	137,290,336	435,625,901
Ներդրումային արժեթղթեր								
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	49,661	-	-	-	-	-	3,411,231	3,460,892
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	99,452	-	-	-	-	-	9,045,764	9,145,216
Այլ ակտիվներ	-	-	-	-	-	-	1,301,093	1,301,093
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	141,390,410	50,706,947	45,575,961	136,848,110	53,805,463	11,399,084	151,048,424	590,774,399
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	143,510,005	36,188,340	45,602,996	104,600,854	44,763,130	12,615,388	142,818,693	530,099,406

36.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևալն են.

- արժեթղթերի փոխառության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում՝, դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- առևտրային վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, պաշարներ և առևտրային դեբիտորական պարտքեր, իսկ հատուկ հանգամանքներում՝ պետական երաշխիքներ,
- գրավադրմամբ սպառողական վարկերի դեպքում՝ անշարժ գույք
- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք:

Բանկը նաև երաշխիքներ է ստանում մայր ընկերություններից իրենց դուստր ընկերությունների վարկերի համար: Ղեկավարությունը վերահսկում է գրավի շուկայական արժեքը և անհրաժեշտության դեպքում՝ ըստ հիմնական համաձայնագրի՝ պահանջում լրացուցիչ գրավ:

Բանկը չի ունեցել որևէ ֆինանսական գործիք, որի կորուստների գծով պահուստը ճանաչված չէ գրավի առկայության պատճառով:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են գրավով, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը հիմնականում ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Անշարժ գույք	128,552,782	118,308,308
Ոսկի	12,067,616	12,044,262
Արժեթղթեր	23,165,276	24,056,087
Կազմակերպությունների երաշխիքներ	84,022,547	80,739,367
Մեքենաներ	1,219,799	176,238
Դրամական միջոցներ	2,542,377	22,671,881
Պաշարներ	12,728,957	7,093,332
Այլ գրավ	189,017,903	127,487,106
Ընդամենը վարկեր (համախառն)	453,317,257	392,576,581

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

36.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Առևտրային պորտֆելի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է VaR մեթոդով, որը արտացոլում է ռիսկի փոփոխականների միջև կախվածությունը: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ:

Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Բանկը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

36.2.1 Շուկայական ռիսկ՝ Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Բանկում տոկոսադրույքի ռիսկի կառավարման խնդիրն է՝ պահպանել ակտիվների ու պարտավորությունների տոկոսադրույքների սպրեդի և զուտ տոկոսային մարժայի նպատակային մակարդակները: Տոկոսադրույքի ռիսկի զսպման նպատակով Բանկում գործում են ակտիվների և պարտավորությունների գնագոյացման (տոկոսադրույքների սահմանման) հատուկ մշակված մեխանիզմներ:

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման հիմքում ընկած է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և տոկոսադրույքի նկատմամբ զգայուն պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքի (GAP) հաշվարկման մոդելը, որը թույլ է տալիս գնահատել տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը Բանկի սպասվող զուտ տոկոսային եկամտի վրա: Բանկում տոկոսադրույքի ռիսկը գնահատվում է նաև դյուրացիայի մոդելով, որը ցույց է տալիս տոկոսադրույքի փոփոխության արդյունքում կապիտալի տնտեսական արժեքի փոփոխությունը՝ հաշվի առնելով ներգրավված պարտավորությունների և տեղաբաշխված ակտիվների ժամկետայնության անհամապատասխանությունը:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքեներում փոփոխությունների հետևանքով: Արտարժութային ռիսկը Բանկը կառավարում է՝ օգտվելով ստանդարտ և ՎաՌ մեթոդաբանություններից: Օրական կտրվածքով կատարվում է արտարժութային կուրսերի մոնիթորինգ, որի հիման վրա ամսվա վերջին գալիք ամսվա համար կատարվում է արտարժութային փոխաժեքների կանխատեսում: Վարչությունը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ) և կապիտալի վրա (կապված կապիտալի գործիքների իրական արժեքի փոփոխման հետ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			31 դեկտեմբերի 2017թ.		
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա
ԱՄՆ դոլար	+5	407,116	407,116	+5	(114,650)	(114,650)
ԱՄՆ դոլար	-5	(407,116)	(407,116)	-5	114,650	114,650
Եվրո	+8	2,748,985	2,748,985	+8	(11,281)	(11,281)
Եվրո	-8	(2,748,985)	(2,748,985)	-8	11,281	11,281

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ/ թանկարժեք մետաղներ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	58,258,213	67,777,705	1,306,534	127,342,452
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,484,183	2,317,448	10,097,214	13,898,845
Հաճախորդներին տրված վարկեր	203,807,859	229,136,097	2,681,945	435,625,901
Ներդրումային արժեթղթեր				
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	3,460,892	-	-	3,460,892
- հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	8,404,656	740,560	-	9,145,216
Այլ ֆինանսական ակտիվներ	1,151,392	147,995	1,706	1,301,093
	276,567,195	300,119,805	14,087,399	590,774,399

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ/ թանկարժեք մետաղներ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Պարտավորություններ				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	50,957,487	11,167,186	2,871,506	64,996,179
Առևտրային ֆինանսական պարտավորություններ	23,230,915	-	-	23,230,915
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	524,291	113,300	-	637,591
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	186,061,154	275,922,680	11,221,963	473,205,797
Թողարկված պարտքային արժեթղթեր	102,724	11,359,447	-	11,462,171
Այլ ֆինանսական պարտավորություններ	619,300	38,299	-	657,599
Ընդամենը	261,495,871	298,600,912	14,093,469	574,190,252
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	(8,940)	-	-	(8,940)
Զուտ դիրք 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	15,062,384	1,518,893	(6,070)	16,575,207
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2018թ. դեկտեմբերի 31-ին	23,574,273	63,145,495	288,617	87,008,385
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	275,178,795	247,730,445	7,190,166	530,099,406
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	252,500,539	250,195,585	7,232,505	509,928,629
Զուտ դիրք 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,678,256	(2,465,140)	(42,339)	20,170,777
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2017թ. դեկտեմբերի 31-ին	21,390,294	36,203,168	702,870	58,296,332

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը և Եվրոն, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

36.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով

Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 2%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 20%-ի չափով պահուստավորման գումար (տես ծանոթագրություն 15-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

	Աուդիտ չարված	
	2018, %	2017, %
Ն21- Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	22.21	25.27
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	82.07	132.18

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս ծանոթագրություն 35-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական միջոցների հոսքերը, ինչպես նշված է Բանկի կողմից ավանդների պահպանման պատմության մեջ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2018թ.				
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	27,825,881	10,171,252	13,142,491	20,877,568	72,017,192
Առևտրային ֆինանսական պարտավորություններ	23,230,915	-	-	-	23,230,915
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	220,497	71,458	152,047	230,181	674,183
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	192,612,059	162,712,688	134,938,506	10,052,460	500,315,713
Թողարկված պարտքային արժեթղթեր	597,907	-	12,688,562	-	13,286,469
Այլ ֆինանսական պարտավորություններ	740,658	-	-	-	740,658
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	245,227,917	172,955,398	160,921,606	31,160,209	610,265,130
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ					
Արտարժույթի սվոպ պայմանագրեր					
Ներհոսք	1,660,950	-	-	-	1,660,950
Արտահոսք	(1,669,890)	-	-	-	(1,669,890)
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	3,943,016	41,234,485	34,279,214	7,551,670	87,008,385

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	43,112,888	8,699,426	15,691,735	30,453,111	97,957,160
Առևտրային ֆինանսական պարտավորություններ	24,556,156	-	-	-	24,556,156
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	89,866	16,208	318,091	328,140	752,305
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	112,052,008	203,184,796	107,309,388	3,714,885	426,261,077
Թողարկված պարտքային արժեթղթեր	598,265	8,480,504	-	-	9,078,769
Այլ ֆինանսական պարտավորություններ	740,658	-	-	-	740,658
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	181,149,841	220,380,934	123,319,214	34,496,136	559,346,125
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	1,333,544	20,713,006	31,861,591	4,388,191	58,296,332

Բանկը ներգրավել է էական գումարներով միջոցներ բաժնետերերից և կապակցված կողմերից: Նշված գումարների ցանկացած էական վերադարձ կարող է բացասաբար անդրադառնալ Բանկի գործունեության վրա: Բանկի ղեկավարությունը վստահ է, որ ֆինանսավորման ներկայիս մակարդակը կպահպանվի տեսանելի ապագայում, և միջոցների վերադարձի դեպքում նա կտեղեկացվի նախապես, ինչը հնարավորություն կտա Բանկին ժամանակին իրացնելու իր իրացվելի միջոցները և վերադարձնելու պարտքը:

36.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Բանկի ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ռիսկերի կառավարման վարչությունը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

37 Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Բանկի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.		
	Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	38,585,043	8,967,294	47,552,337
Դրամային հոսքերից	*(3,842,738)*	*2,498,092*	*(1,344,646)*
Վճարումներ	(20,768,663)	(1,687,129)	(22,455,792)
Ստացված գումար	16,925,925	4,185,221	21,111,146
Ոչ դրամային հոսքերից	*40,926*	*(3,215)*	*37,711*
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	40,926	(3,215)	37,711
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	34,783,231	11,462,171	46,245,402

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2017թ.		
	Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ընդամենը
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	28,814,598	-	28,814,598
Դրամային հոսքերից	*9,829,539*	*8,853,026*	*18,682,565*
Վճարումներ	(18,289,846)	(137,603)	(18,427,449)
Ստացված գումար	28,119,385	8,990,629	37,110,014
Ոչ դրամային հոսքերից	*(59,094)*	*114,268*	*55,174*
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	(59,094)	114,268	55,174
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	38,585,043	8,967,294	47,552,337

38 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման և այլ պահուստները:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2018 և 2017թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Հիմնական կապիտալ	32,255,952	30,170,167
Լրացուցիչ կապիտալ	2,235,401	2,620,145
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	34,491,353	32,790,312
Ռիսկով կշռված ակտիվներ	255,454,765	242,891,200
Կապիտալի համարժեքության նորմատիվ	13.50%	13.50%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

Նպատակ ունենալով խթանել բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, ինչպես նաև նպաստել բանկային համակարգի կողմից առավել արդյունավետ և մատչելի բանկային ծառայությունների մատուցմանը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը 2017թ. որոշում է կայացրել 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո բանկերի համար ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափը սահմանել 30.000.000 հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

39 Սեգմենտային հաշվետվություններ

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ըստ ՖՀՄՍ 8 «Գործառնական սեգմենտներ» ստանդարտի պահանջների:

Արտաքին հաճախորդներից ստացվող եկամտի մեծ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Բանկը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2017թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	8
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	9
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	11
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	13
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	15

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերության (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 38-ի վրա, որտեղ ներկայացված է 2018թ. ապրիլի 13-ից Հայաստանի հանրապետությունում տիրող քաղաքական իրավիճակը և դրա հետ կապված անորոշությունները: Բանկի ղեկավարության գնահատմամբ այս գործընթացները որևէ նշանակալի ազդեցություն չունեն Բանկի գործունեության վրա և հետևաբար ղեկավարության գնահատմամբ չկա որևէ անհրաժեշտություն ճշգրտելու 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտվող տարվա Բանկի ֆինանսական հաշվետվությունները: Մեր կարծիքը չի ձևափոխվում այս հանգամանքի առնչությամբ

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

- *Վարկերի արժեզրկման գծով պահուստի ձևավորում*

Վարկերի արժեզրկման գծով պահուստը հանդիսանում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել վարկերի արժեզրկման գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա: Դատողությունները և ենթադրությունները կարող են վերաբերել արժեզրկման օբյեկտիվ հայտանիշերի գնահատմանը, վարկառուների ֆինանսական վիճակի, ակնկալվող դրամական միջոցների հոսքերի, գրավների արժեքի և իրացման ժամկետների, ինչպես նաև կրած, սակայն դեռևս չբացահայտված վնասների գնահատմանը:

Անհատապես էական վարկերի գծով ձևավորված արժեզրկման պահուստների գնահատման համար մեր կողմից կիրառված ընթացակարգերը ներառել են արժեզրկման բացահայտման և քանակական գնահատման հիմքում ընկած դատողությունների և ենթադրությունների, գրավների շուկայական արժեքների ուսումնասիրությունները, ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները և այլն:

Խմբային արժեզրկման արդյունքում ձևավորված պահուստների ճշգրտության գնահատման համար մենք ուսումնասիրել ենք գործող վերահսկողության մեխանիզմների կառուցվածքը և արդյունավետությունը, դուրսգրումների և ժամկետանց օրերի հաշվառումը, խմբային արժեզրկման հաշվարկի հիմքում ընկած մոդելները և ենթադրությունները:

Մեր կողմից նաև կիրառվել են ընթացակարգեր ուղղված ֆինանսական հաշվետվություններում վարկային ռիսկին, արժեզրկման պահուստի ձևավորման ենթադրություններին և դատողություններին վերաբերող բացահայտումների գնահատմանը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է Բանկի տարեկան հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական

եզրակացությունից: Տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք չենք տրամադրում կարծիք, որը որևէ այլ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Մեր կողմից իրականացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռքբերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկի, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք

աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Բանկի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք մեր բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց ներկայացված հարցերից մենք առանձնացնում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտորի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հանրային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցերը չպետք է ներկայացվեն աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրանց ներկայացման հետ կապված բացասական

Grant Thornton

հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրանց ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Անկախ աուդիտի առաջադրանքի պատասխանատուն հանդիսանում է Արմեն Հովհաննիսյանը:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Արմեն Հովհաննիսյան
Առաջադրանքի պատասխանատու

27 ապրիլի 2018թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	35,262,768	29,843,923
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(28,374,816)	(21,869,138)
Զուտ տոկոսային եկամուտներ		6,887,952	7,974,785
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	3,282,273	2,532,401
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(883,875)	(687,135)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		2,398,398	1,845,266
Զուտ առևտրային եկամուտ	8	1,429,550	781,807
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային փոխարկումներից զուտ օգուտ/(վնաս)		(4,755)	358,657
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ օգուտ		16,987	3,728
Այլ եկամուտներ	9	2,525,494	2,175,814
Արժեզրկման ծախս	10	(3,105,599)	(4,602,720)
Անձնակազմի գծով ծախսեր	11	(3,626,877)	(3,297,734)
Հիմնական միջոցների մաշվածություն	19	(819,859)	(808,868)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	20	(161,098)	(179,631)
Այլ ծախսեր	12	(3,871,793)	(2,960,373)
Շահույթ մինչև հարկումը		1,668,400	1,290,731
Շահութահարկի գծով ծախս	13	(388,206)	(237,550)
Տարվա շահույթ		1,280,194	1,053,181
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ		562,783	1,948,255
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ (օգուտ)/վնաս		69,375	(234,308)
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		(126,432)	(342,789)
Ընդամենը տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		505,726	1,371,158
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		1,785,920	2,424,339

15-ից 82 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	115,576,209	63,215,155
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	14,036,722	8,532,277
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	16	-	22,848
Հաճախորդներին տրված վարկեր	17	382,547,013	275,926,637
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	18	1,649,612	171,309
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր		15,258,125	35,667,112
Կանխավճարներ շահութահարկի գծով		-	163,641
Հիմնական միջոցներ	19	9,138,396	9,256,996
Ոչ նյութական ակտիվներ	20	2,702,599	2,422,927
Բռնագանձված ակտիվներ	21	3,716,481	4,522,347
Այլ ակտիվներ	22	2,905,216	1,767,496
Ընդամենը՝ ակտիվներ		547,530,373	401,668,745
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	16	-	42,456
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	23	76,004,421	82,827,456
Առևտրային ֆինանսական պարտավորություններ	24	24,556,156	21,489,072
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	25	692,952	1,161,395
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	26	398,967,148	260,121,062
Թողարկված պարտքային արժեթղթեր	27	8,967,294	-
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		296,211	-
Հետաձգված հարկային պարտավորություն	13	7,716	66,944
Այլ պարտավորություններ	28	1,201,476	909,281
Ընդամենը՝ պարտավորություններ		510,693,374	366,617,666

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	29	31,374,560	31,374,560
Գլխավոր պահուստ		691,167	638,508
Այլ պահուստներ		2,480,668	1,974,942
Չբաշխված շահույթ		2,290,604	1,063,069
Ընդամենը՝ սեփական կապիտալ		36,836,999	35,051,079
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		547,530,373	401,668,745

Ֆինանսական հաշվետվությունները՝ ներկայացված 8-ից 82 էջերում, 2018թ. ապրիլի 27-ին և ստորագրվել են Բանկի Վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի կողմից:

Արսեն Միքայելյան
Վարչության նախագահ

Գարինե Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

15-ից 82 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասերը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2016թ. հունվար 1-ի դրությամբ	22,907,500	576,319	132,362	471,422	4,533,597	28,621,200
Բաժնետիրական կապիտալի ավելացում	8,467,060	-	-	-	(4,461,520)	4,005,540
Հատկացում պահուստին	-	62,189	-	-	(62,189)	-
Սեփականատերերի հետ գործարքներ	8,467,060	62,189	-	-	(4,523,709)	4,005,540
Տարվա շահույթ	-	-	-	-	1,053,181	1,053,181
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	1,948,255	-	-	1,948,255
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ օգուտ	-	-	(234,308)	-	-	(234,308)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	(342,789)	-	-	(342,789)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	1,371,158	-	1,053,181	2,424,339
Հաշվեկշիռը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,374,560	638,508	1,503,520	471,422	1,063,069	35,051,079

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,374,560	638,508	1,503,520	471,422	1,063,069	35,051,079
Հատկացում պահուստին	-	52,659	-	-	(52,659)	-
Սեփականատերերի հետ գործարքներ	-	52,659	-	-	(52,659)	-
Տարվա շահույթ	-	-	-	-	1,280,194	1,280,194
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	562,783	-	-	562,783
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին փոխանցած զուտ վնաս	-	-	69,375	-	-	69,375
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	(126,432)	-	-	(126,432)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	505,726	-	1,280,194	1,785,920
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,374,560	691,167	2,009,246	471,422	2,290,604	36,836,999

15-ից 82 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	1,668,400	1,290,731
Ճշգրտումներ		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	980,957	988,499
Հիմնական միջոցների օտարումից օգուտ	(13,129)	(248)
Արժեզրկման ծախս	3,105,599	4,602,720
Առևտրային գործիքների իրական արժեքի փոփոխությունից զուտ (օգուտ)/վնաս	(19,880)	95,907
Ստացվելիք տոկոսներ	(5,078,406)	(6,729,472)
Վճարվելիք տոկոսներ	996,153	1,146,833
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային փոխարկումից զուտ (օգուտ)/վնաս	4,755	(358,657)
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	1,644,449	1,036,313
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(5,204,585)	(2,301,558)
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	42,728	(112,395)
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	20,483,070	(14,147,208)
Հաճախորդներին տրված վարկեր	(102,663,389)	(55,413,487)
Բռնագանձված ակտիվներ	805,866	632,668
Այլ ակտիվներ	(521,036)	69,018
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	(42,456)	27,784
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(18,023,948)	17,042,192
Առևտրային ֆինանսական պարտավորություններ	3,067,084	9,021,385
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	(467,713)	(1,975,489)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	135,379,207	78,557,200
Այլ պարտավորություններ	177,865	329,429
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	34,677,142	32,765,852
Վճարված շահութահարկ	(114,014)	(4,379)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	34,563,128	32,761,473

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի (առք)/վաճառք	(804,072)	3,233,737
Հիմնական միջոցների առք	(925,867)	(1,149,919)
Ոչ նյութական ակտիվների առք	(440,770)	(585,478)
Հիմնական միջոցների վաճառք	237,737	37,220
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	(1,932,972)	1,535,560
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	-	4,005,540
Ֆինանս. կազմակերպ. վարկերի ստացում	9,770,445	891,657
Պարտքային արժեթղթերի թողարկում	8,912,120	-
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	18,682,565	4,897,197
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	51,312,721	39,194,230
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	63,215,155	24,110,724
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	1,048,333	(89,799)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ. 14)	115,576,209	63,215,155
Լրացուցիչ տեղեկատվություն		
Ստացված տոկոսներ	30,184,362	23,114,451
Վճարված տոկոսներ	(27,378,663)	(20,722,305)

15-ից 82 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերությունը (նախկին «Հայինվեստբանկ ՓԲԸ») (այսուհետ՝ Բանկ) հիմնադրվել է 1991թ. և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 1991 թվականի դեկտեմբերի 10-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N40 արտոնագրային համարով:

Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց ավանդների հատուցում երաշխավորող պետական համակարգի, Հայաստանի բանկերի միության, ArCa, Master Card, Visa International քարտային վճարահաշվարկային համակարգերի անդամ:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժութային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը և թվով 24 մասնաճյուղերը գտնվում են Երևանում, 22 մասնաճյուղերը՝ ՀՀ տարբեր մարզերում և 7 մասնաճյուղերը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Նալբանդյան 48:

2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական բարեփոխումները: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս բարփոխումներից, ինչպես նաև Եվրասիական Տնտեսական Միությունում զարգացումներից, որի հետ շարունակվում է ՀՀ տնտեսության ինտեգրումը:

Բանկի ղեկավարությունը կարծում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Բանկի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով, բացառությամբ շինությունների, որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2017թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Բանկն ավելի վաղ չէր ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որն ուժի մեջ էր մտել, բայց դեռ չէր կիրառվել: Չնայած ներքոհիշյալ ստանդարտներն ու փոփոխություններն առաջին անգամ կիրառվել են 2017թ-ին ՝ դրանք որևէ էական ազդեցություն չունեն Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Բացահայտման նախաձեռնություն (ՀՀՄՍ 7 փոփոխություններ)*
- *Հետաձգված հարկային ակտիվների ճանաչում չիրացված կորուստների համար (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*
- *2014-2016թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ տարբեր չափանիշներով (ՖՀՄՍ 12 փոփոխություններ)*

3.5 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

ՖՀՄՍ 9, Ֆինանսական գործիքներ (2014)

2014թ. հուլիսին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՍԽ) թողարկել է ՖՀՄՍ 9-ի («Ֆինանսական գործիքներ») վերջնական տարբերակը: ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող

տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ նախապես կիրառելու թույլտվությամբ: Այն փոխարինում է *ՀՀՄՍ 39-ին («Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը»):*

2017թ. հոկտեմբերին ՀՀՄՍԽ-ն թողարկել է Բացասական փոխհատուցմամբ կանխավճարի առանձնահատկությունները (ՖՀՄՍ 9 փոփոխություններ): Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2019թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ նախապես կիրառելու թույլտվությամբ:

Բանկը կկիրառի 2014թ. հուլիսին թողարկված ՖՀՄՍ 9-ը սկզբնապես 2018թ. հունվարի 1-ին և նույն ամսաթվին կընդունի նաև 2017թ. հոկտեմբերին ՀՀՄՍԽ-ի թողարկած ՖՀՄՍ 9 փոփոխությունները:

Նոր ստանդարտի կիրառումը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի սեփական կապիտալի սկզբնական մնացորդի վրա 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Բանկի գնահատումը դեռ նախնական է, քանի որ ոչ բոլոր անցումային աշխատանքներն են ավարտված: Մասնավորապես՝ Բանկը դեռ չի ավարտվել ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան հաշվապահական գործընթացների վերանայման և ներքին վերահսկողության փոփոխությունների աշխատանքները, ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկման մոդելների մշակումը և ամփոփումը, ինչպես նաև կարող են փոփոխվել նոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, կիրառված ենթադրությունները, դատողությունները և գնահատման մեթոդները մինչև Բանկը կամփոփի իր առաջին ֆինանսական հաշվետվությունները, որոնք կներառեն սկզբնական կիրառման ամսաթիվը:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգում

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման նոր մոտեցում, որը արտացոլում է այդ ակտիվների կառավարման համար օգտագործվող բիզնես մոդելը և դրանց հետ կապված դրամական միջոցների հոսքերի առանձնահատկությունները:

ՖՀՄՍ 9-ը ֆինանսական ակտիվների համար ներառում է երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող (FVTPL):

Բանկը, բաժնային գործիքների համար, որոնք չեն պահվում առևտրային նպատակներով, սկզբնական ճանաչման պահին կարող է կատարել իրականան արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) չափելու անհակադարձելի ընտրություն: Այս ընտրությունը յուրաքանչյուր ներդրման համար կատարվում է առանձին:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվները դասակարգվում են վերը նշված դասերից մեկում: ՖՀՄՍ 9-ի կիրառմամբ դադարեցվում են ՀՀՄՍ 39-ով սահմանվող՝ մինչև մարման ժամկետը պահվող, վարկեր և դեբիտորական պարտքեր, վաճառքի համար մատչելի և իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների դասակարգումները:

ՖՀՄՍ 9-ը կանդրադառնա 01 հունվարի 2018թ-ի դրությամբ պահվող ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա հետևյալ կերպ.

- Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և առևտրային նպատակով պահվող ածանցյալ գործիքները, որոնք պահվում են ռիսկի կառավարման նպատակով և որոնք ՀՀՄՍ 39-ի համաձայն չափվում են իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով, համաձայն ՖՀՄՍ 9-ի նույնպես կչափվեն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- Բանկերին և հաճախորդներին տրված վարկերը, որոնք ՀՀՄՍ 39-ի համաձայն դասակարգված են որպես վարկեր և դեբիտորական պարտքեր և չափվում են ամորտիզացված արժեքով, համաձայն ՖՀՄՍ 9-ի ընդհանուր առմամբ նույնպես կչափվեն ամորտիզացված արժեքով,
- ՀՀՄՍ 39-ի համաձայն վաճառքի համար մատչելի դասակարգված պարտքային գործիքները, համաձայն ՖՀՄՍ 9-ի կչափվեն ամորտիզացված արժեքով, իրականան արժեքով՝ այլ

համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) կամ իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով (FVTPL)՝ կախված կոնկրետ հանգամանքներից:

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ դասակարգման և չափման գնահատումը պարտադիր չէ, որ կներկայացնի ազդեցությունը Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա այնպես, ինչպես կլինի 2018թ-ի հունվարի 1-ին, քանի որ ՖՀՄՍ 9-ը պահանջում է, որ բիզնես մոդելի գնահատումը կատարվի սկզբնական կիրառման օրվա դրությամբ գոյություն ունեցող փաստերի և հանգամանքների հիման վրա, որը Բանկի համար հանդիսանալու է 2018թ-ի հունվարի 1-ը:

ՖՀՄՍ 9-ը հիմնականում պահպանում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման համար ՀՀՄՍ 39-ի ներկա պահանջները:

Այնուամենայնիվ, համաձայն ՀՀՄՍ 39-ի ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի բոլոր փոփոխությունները սահմանված իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով (FVTPL-ով)՝ ճանաչվում են շահույթ և վնասում, մինչդեռ ՖՀՄՍ 9-ի համաձայն իրական արժեքի այդ փոփոխությունները հիմնականում կներկայացվեն հետևյալ կերպ.

- Պարտավորության սեփական վարկային ռիսկին վերագրելի իրական արժեքի փոփոխության գումարը կներկայացվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (OCI), և
- իրական արժեքի փոփոխության մնացած գումարը կներկայացվի շահույթ և վնասում:

Ֆինանսական ակտիվների, վարկերի տրամադրման պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի արժեզրկում

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ի «կրած կորուստների» մոդելը ապագայի վրա հիմնված «ակնկալվող պարտքային կորուստների» մոդելով: Նոր արժեզրկման մոդելի կիրառումը Բանկից կպահանջի զգալի մասնագիտական դատողություններ, թե ինչպես են տնտեսական գործոնների փոփոխություններն ազդում հավանականությամբ կշռված ակնկալվող պարտքային կորուստների վրա:

Բանկը ակնկալվող պարտքային կորուստների պահուստ կճանաչի ստորև նշված այն ֆինանսական գործիքների գծով, որոնք չեն հանդիսանում իրական արժեքով շահույթի և վնասի միջոցով հաշվառվող.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ,
- այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ,
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր,
- պայմանագրային ակտիվներ,
- վարկերի տրամադրման պարտավորվածություններ,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր:

ՖՀՄՍ 9-ի համաձայն բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջները բարդ են և կպահանջեն ղեկավարության դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, հատկապես հետևյալ ոլորտներում.

- գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էական է աճել,
- ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մեջ կանխատեսվող մակրոտնտեսական տեղեկատվության ընդգրկում,
- դեֆոլտի սահմանում:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հիմնական մուտքային տարրերն են հանդիսանալու հետևյալ փոփոխականները.

- դեֆոլտի հավանականություն (PD),
- դեֆոլտի դեպքում վնասի գործակից (LGD),
- դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD):

Բանկը այս ցուցանիշները կստանա ներքին վիճակագրական մոդելներից և այլ պատմական տվյալներից, որոնք օգտագործվում են կարգավորող մոդելներում: Կանխատեսվող տեղեկատվությունը արտացոլելու համար՝ դրանք կճշգրտվեն:

ՖՀՄՍ 9-ի ուժի մեջ մտնելու հետ կապված Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա ամենաէական ազդեցությունն ակնկալվում է, որ կլինի արժեզրկման նոր պահանջների հետևանքով: ՖՀՄՍ 9-ի նոր արժեզրկման մոդելի կիրառումը կհանգեցնի ֆինանսական գործիքների համար արժեզրկումից կորուստների ավելացմանը և փոփոխականությանը: Արժեզրկման նոր պահանջները առավել մեծ ազդեցություն կունենան երկարաժամկետ չապահովված վարկային պրոդուկտների, ինչպիսիք են օվերդրաֆտներն ու վարկային քարտերը, կորուստների պահուստի վրա:

Անցումային դրույթներ

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները հիմնականում կկիրառվեն հետադարձ, բացառությամբ ստորև նշված դեպքերի.

- Բանկը օգտվում է ընտրության առավելությունից, որը թույլ է տալիս չվերահաշվարկել նախորդ ժամանակաշրջանների համեմատական տվյալները ֆինանսական գործիքների դասակարգման և գնահատման (ներառյալ արժեզրկման) փոփոխությունների առումով: ՖՀՄՍ 9-ի ընդունման արդյունքում առաջացող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքների տարբերությունները հիմնականում ճանաչվելու են չբաշխված շահույթում և պահուստներում 2018թ-ի հունվարի 1-ի դրությամբ:
- Հետևյալ գնահատումները պետք է կատարվեն այն փաստերի և հանգամանքների հիման վրա, որոնք առկա են սկզբնական կիրառման օրվանից.

- այն բիզնես մոդելի որոշումը, որի շրջանակում պահվում է ֆինանսական ակտիվը,
- իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող (FVTPL) ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ որոշման կայացում, թե արդյոք ֆինանսական պարտավորության վարկային ռիսկի փոփոխությունների ազդեցության ներկայացումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, կարող է ստեղծել կամ ընդլայնել հաշվապահական անհամապատասխանությունը շահույթում կամ վնասում:

Եթե պարտքային գործիքները 2018թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեն ցածր վարկային ռիսկ, ապա Բանկը որոշելու է, որ վարկային ռիսկը էական չի աճել սկզբնական ճանաչումից հետո:

ՖՀՄՍ 15, Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

ՖՀՄՍ 15-ը ներկայացնում է հասույթի ճանաչման նոր պահանջներ՝ փոխարինելով *ՀՀՄՍ 18 «Հասույթ», ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր»,* և որոշ հասույթի հետ կապված մեկնաբանություններ: Նոր ստանդարտը սահմանում է հսկողության վրա հիմնված հասույթի ճանաչման մոդել և տրամադրում է հավելյալ ուղղորդում մանրամասնորեն չլուսաբանված տարբեր բնագավառներում գործող ՖՀՄՍ-ների ներքո, այդ թվում, թե պայմանավորվածությունների համար ինչպես հաշվառել բազմաթիվ կատարողական պարտավորությունները, փոփոխական գնագոյացումը, հաճախորդների փոխհատուցման իրավունքները, մատակարարների հետգնման տարբերակները և այլ ընդհանուր բարդություններ:

ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջաններում: Բանկի ղեկավարությունը դեռ չի գնահատել ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 16, Վարձակալություն

ՖՀՄՍ 16-ը ներկայացնում է վարձակալության հաշվառման նոր պահանջներ և փոփոխություններ: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, որ վարձակալները պետք է հաշվառեն

վարձակալությունները «հաշվապահական հաշվեկշռում»՝ ճանաչելով «օգտագործման իրավունքը» որպես ակտիվ և վարձակալության գծով համապատասխան պարտավորությունը:

Միևնույն ժամանակ ՖՀՄՍ 16-ը՝

- փոփոխում է վարձակալության սահմանումը,
- սահմանում է ակտիվի և պարտավորության հաշվառման պահանջներ, այդ թվում՝ այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են ոչ-վարձակալական տարրերը, փոփոխվող վարձակալական վճարները և արտոնյալ (օպցիոն) ժամանակաշրջանները;
- ազատման հնարավորություն է տալիս կարճաժամկետ վարձակալությունների և ցածրարժեք ակտիվների համար,
- փոխում է «վաճառք հետադարձ վարձակալությամբ» պայմանավորվածությունների հաշվառումը,
- մեծապես պահպանում է ՀՀՄՍ 17-ի մոտեցումը՝ վարձատուների հաշվառման մասով;
- ներկայացնում է նոր բացահայտման պահանջներ:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը՝ պայմանով, որ ՖՀՄՍ 15-ը *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»,* նույնպես կիրառվի: Բանկի ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այլ ստանդարտներ

Հետևյալ փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները զգալի ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- 2014-2016թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-ՖՀՄՍ 1 և ՀՀՄՍ 28 փոփոխություններ (ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին)
- ՖՀՄՄԿ 22 «Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ» (ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին)
- ՖՀՄՄԿ 23 «Անորոշություն շահութահարկի մոտեցումների շուրջ» (ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին)

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից, և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամտի ճանաչումը:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել՝ կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Շահույթ մինչև հարկումը	1,668,400		1,290,731	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	333,680	20	258,146	20
Չհարկվող եկամուտներ	(5,737)	-	(5,121)	-
Չնվազեցվող ծախսեր	90,303	5	68,509	5
Փոխարժեքային տարբերություն	(7,091)	-	(57,035)	(4)
Հարկվող եկամուտներ	(2,427)	-	1,136	-
Հարկվող ծախսեր	(5,164)	-	(11,181)	(1)
Հաշմանդամներին վճարումներից առաջացած նվազեցումներ	(15,358)	(1)	(16,904)	(1)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	388,206	24	237,550	19

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ պարտավորություններ	79,697	(9,219)	-	70,478
Հաճախորդներին տրված վարկեր	431,214	218,985	-	650,199
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	510,911	209,766	-	720,677
Այլ ակտիվներ	(19,267)	(6,087)	-	(25,354)
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	(375,881)	-	(126,432)	(502,313)
Հիմնական միջոցների ամորտիզացիա	(82,530)	(340)	-	(82,870)
Հիմնական միջոցների վերագնահատում	(100,177)	(17,679)	-	(117,856)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(577,855)	(24,106)	(126,432)	(728,393)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(66,944)	185,660	(126,432)	(7,716)

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ պարտավորություններ	35,196,	44,501	-	79,697
Հաճախորդներին տրված վարկեր	351,926	79,288	-	431,214
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	387,122	123,789	-	510,911
Այլ ակտիվներ	(25,765)	6,498	-	(19,267)
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	(33,092)	-	(342,789)	(375,881)
Հիմնական միջոցների ամորտիզացիա	-	(82,530)	-	(82,530)
Հիմնական միջոցների վերագնահատում	(106,070)	5,893	-	(100,177)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	164,927	(70,139)	(342,789)	(577,855)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	222,195	53,650	(342,789)	(66,944)

14 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ դրամական միջոցներ	7,036,940	7,677,430
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	54,978,114	52,081,824
Թղթակցային հաշիվներ այլ բանկերում	3,544,517	3,455,901
Մինչև 90 օր տևողությամբ ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	50,016,638	-
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	115,576,209	63,215,155

2017թ. դեկտեմբերի 31-ի թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրաված դրամային որոշ միջոցների 2%-ի և արտարժույթով որոշ միջոցների 18%-ի չափով (2016թ.՝ համապատասխանաբար 2% և 18%): Այդ միջոցները 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 49,315,192 հազար դրամ: Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է Կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Բանկը տոկոսներ չի ստանում:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ բանկերում տեղաբաշխված միջոցները 3,048,341 հազար դրամ գումարով (86%) կենտրոնացված են երկու բանկերում (2016թ.՝ 2,525,615 հազար դրամ (73%)՝ կենտրոնացված երկու բանկերում):

2017թ. ընթացքում իրականացվել են հետևյալ անկանխիկ գործառնությունները.

- վարկերի մարում գրավների բռնագանձման միջոցով 730,475 հազար դրամ գումարով (2016թ.՝ 715,342 հազար դրամ):

15 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	120,000	220,000
Ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	6,357,818	4,259,099
Հակադարձ ռեպո համաձայնագրեր	4,124,618	1,011,762
Դեպոնացված միջոցներ ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններում	2,356,848	1,848,371
Այլ հաշիվներ	1,077,438	1,193,045
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14,036,722	8,532,277

Վարկերը ժամկետանց կամ արժեզրկված չեն:

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրԲա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր» հոդվածում ներառված հաշիվները կենտրոնացված են երկու ֆինանսական կազմակերպությունում և կազմում են 3,670,154 հազար դրամ (58%) (2016թ.՝ 2,164,097 հազար դրամ (51%)՝ կենտրոնացված մեկ ֆինանսական կազմակերպությունում):

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Դեպոնացված միջոցներ ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններ» հոդվածում ներառված գումարներն իրենցից ներկայացնում են Բանկի գործառնությունների համար տեղաբաշխված երաշխիքային միջոցներ և ներառում են Մաստեր Քարդ վճարային համակարգին անդամակցության համար սառեցված միջոց 387,066 հազար դրամ գումարով (2016թ.՝ 380,656 հազար դրամ), ինչպես նաև Visa վճարային համակարգին անդամակցության համար սառեցված միջոց 218,140 հազար դրամ գումարով (2016թ.՝ 218,068 հազար դրամ) և «ԲԱՆԿ ՕՖ ՋՈՐՋԻԱ» երաշխիքի դիմաց սառեցված գումար 1,669,330 հազար դրամ (2016թ.՝ 1,249,647 հազար դրամ):

16 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Պայմանա-կան գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավ. իրական արժեք	Պայմանա-կան գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավ. իրական արժեք
Վաճառքի համար պահվող ածանցյալներ						
Արտարժույթով պայմանագրեր						
Սվոպեր-արտաքին	-	-	-	9,922,697	22,848	42,456
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ	-	-	-	9,922,697	22,848	42,456

17 Հաճախորդներին տրված վարկեր

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր	229,710,777	157,195,274
Ֆակտորինգ	1,568,526	1,603,508
Հակադարձ ռեպո համաձայնագրեր	20,847,485	22,150,334
Օվերդրաֆտներ և վարկային գծեր	112,074,523	79,275,169
Վարկային քարտերով տրամադրված վարկեր	27,808,028	22,648,880
Երաշխիքներ	567,242	581,243
Ֆինանսական վարձակալություն	-	58
	392,576,581	283,454,466
Արժեզրկումից պահուստներ վարկերի գծով	(10,029,568)	(7,527,829)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	382,547,013	275,926,637

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է ՀՀ դրամով վարկերի համար 12.74% (2016թ.՝ 16.56%) և ԱՄՆ դոլարով և Եվրոյով վարկերի համար՝ 7.25% (2016թ.՝ 7.73%):
Տրամադրված վարկերի դիմաց բռնագանձված ակտիվների հաշվեկշռային արժեքը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 3,716,481 հազար դրամ (2016թ.՝ 4,522,347 հազար դրամ) (Տես՝ ծանոթագրություն 21): Բանկը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի կենտրոնացում տրամադրված վարկերի գծով 61,617,444 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 16%-ը) ընդհանուր գումարով՝ տրամադրված թվով 10 վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց (2016թ.՝ 60,691,027 հազար դրամ կամ համախառն վարկային պորտֆելի 21%-ը): Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստները կազմում են 1,717,236 հազար դրամ (2016թ.՝ 1,213,821 հազար դրամ):

Հակադարձ ռեպո համաձայնագրերով գրավադրված արժեթղթերի իրական արժեքը, որոնք վերագրավադրվել են այլ կազմակերպություններում որպես ռեպո համաձայնագրերով գրավադրված արժեթղթեր 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, կազմում է 24,556,156 հազար դրամ (2016թ.՝ 21,489,072 հազար դրամ) (Ծանոթ. 24):

Տրամադրված վարկերի վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի ներկայացված է ստորև.

	2017							
Հազար ՀՀ դրամ	Արդյունա-բերություն	Գյուղա-տնտե-սություն	Շինարա-րություն	Առևտուր	Սպառո-ղական ոլորտ	Հիփոթեք	Այլ	Ընդամենը
Վարկեր	36,553,879	9,004,198	47,574,623	107,048,226	48,252,183	12,823,767	131,319,705	392,576,581
Արժեզրկումից պահուստներ վարկերի գծով	(365,539)	(134,091)	(1,971,627)	(2,447,372)	(3,489,053)	(208,379)	(1,413,507)	(10,029,568)
Զուտ վարկեր	36,188,340	8,870,107	45,602,996	104,600,854	44,763,130	12,615,388	129,906,198	382,547,013

Հազար ՀՀ դրամ	Արդյունա-բերություն	Գյուղա-տնտե-սություն	Շինարա-րություն	Առևտուր	Սպառո-ղական ոլորտ	Հիփոթեք	Այլ	Ընդամենը
						2016		
Վարկեր	27,231,314	8,967,585	28,724,052	80,899,045	42,278,155	13,172,461	82,181,854	283,454,466
Արժեզրկումից պահուստներ վարկերի գծով	(435,257)	(143,335)	(1,129,689)	(1,293,063)	(2,794,130)	(418,788)	(1,313,567)	(7,527,829)
Զուտ վարկեր	26,796,057	8,824,250	27,594,363	79,605,982	39,484,025	12,753,673	80,868,287	275,926,637

Վարկերի գծով արժեզրկման պահուստի շարժն ըստ դասերի հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Արդյունա-բերություն	Գյուղա-տնտե-սություն	Շինարա-րություն	Առևտուր	Սպառո-ղական ոլորտ	Հիփո-թեք	Այլ	Ընդամենը
						2017		
2017թ. հունվարի 1 դրությամբ	435,257	143,335	1,129,689	1,293,063	2,794,130	418,788	1,313,567	7,527,829
Տարվա ծախս/(հակադարձում)	(26,241)	109,123	954,221	1,132,795	808,687	(35,691)	162,705	3,105,599
Դուրսգրում	(43,484)	(128,201)	(112,283)	(132,261)	(1,035,568)	(310,343)	(72,102)	(1,834,242)
Վերադարձ	7	9,834	-	153,775	921,804	135,625	9,337	1,230,382
2017թ. դեկտմբերի 31-ի դրությամբ	365,539	134,091	1,971,627	2,447,372	3,489,053	208,379	1,413,507	10,029,568
Անհատական արժեզրկում	-	46,463	-	216,655	-	-	101,324	364,442
Խմբային արժեզրկում	365,539	87,628	1,971,627	2,230,717	3,489,053	208,379	1,312,183	9,665,126
	365,539	134,091	1,971,627	2,447,372	3,489,053	208,379	1,413,507	10,029,568
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	-	241,421	-	216,655	-	-	101,324	559,400

Հազար ՀՀ դրամ	Արդյունա-բերություն	Գյուղա-տնտե-սություն	Շինարա-րություն	Առևտուր	Սպառո-ղական ոլորտ	Հիփոթեք	Այլ	Ընդամենը
							2016	
2016թ. հունվարի 1 դրությամբ	422,946	160,469	769,931	1,578,921	1,836,060	360,513	997,173	6,126,013
Տարվա ծախս/(հակադարձում)	15,540	(571,442)	1,522,183	1,112,318	1,880,853	185,669	457,599	4,602,720
Դուրսգրում	(21,931)	(171,991)	(1,162,914)	(1,569,974)	(1,664,041)	(249,144)	(415,744)	(5,255,739)
Վերադարձ	18,702	726,299	489	171,798	741,258	121,750	274,539	2,054,835
2016թ. դեկտմբերի 31-ի դրությամբ	435,257	143,335	1,129,689	1,293,063	2,794,130	418,788	1,313,567	7,527,829
Անհատական արժեզրկում	-	-	-	-	-	-	330,399	330,399
Խմբային արժեզրկում	435,257	143,335	1,129,689	1,293,063	2,794,130	418,788	983,168	7,197,430
	435,257	143,335	1,129,689	1,293,063	2,794,130	418,788	1,313,567	7,527,829
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	-	-	-	-	-	-	3,586,658	3,586,658

Տրամադրված վարկերի վերլուծությունն ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆիզիկական անձիք	61,043,321	55,606,677
Մասնավոր ձեռնարկություններ	300,298,040	212,514,304
Անհատ ձեռնարկատերեր	2,062,804	4,801,644
Պետական ձեռնարկություններ	26,003,290	10,264,900
Ոչ առևտրային կազմակերպություններ	3,169,126	266,941
	392,576,581	283,454,466
Արժեզրկումից պահուստներ վարկերի գծով	(10,029,568)	(7,527,829)
Ընդամենը վարկեր	382,547,013	275,926,637

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներկայացվում են ստորև.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիփոթեքային վարկեր	11,296,139	11,585,109
Վարկային քարտեր	28,068,308	22,738,678
Սպառողական վարկեր	8,552,332	6,532,202
Ոսկու վարկեր	11,553,484	12,887,120
Ավտոմեքենաների ձեռքբերման վարկեր	78,060	54,825
Այլ	1,494,998	1,808,743
Ընդամենը ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր (համախառն)	61,043,321	55,606,677

Ֆինանսական վարձակալության գծով տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ		
Մինչև 1 տարի	-	58
	-	58
Ֆինանսական վարձակալության գծով չվաստակած ապագա ֆինանսական եկամուտ	-	-
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ	-	58

Ֆինանսական վարձակալության գծով արժեզրկումից պահուստները ներառված են վարկերի գծով արժեզրկումից պահուստում և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 29 հազար դրամ:

Ֆինանսական վարձակալության գծով տոկոսադրույքը կազմում է 19%:

Ինչպես նշված է 32 ծանոթագրությունում, 2017թ. դեկտեմբերի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Վարկային պորտֆելի ժամկետային վերլուծությունը տես 34 ծանոթագրությունում:

Վարկային պորտֆելին ներհատուկ վարկային, արժութային և տոկոսային ռիսկը բացահայտված է 35 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը կապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 31 ծանոթագրությունում:

18 Վաճառքի համար մատչելի ներդրումներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չգնանշվող ներդրումներ		
Բաժնեմասային արժեթղթեր	13,935	14,034
ՀՀ կազմակերպությունների բաժնետոմսեր	10,093	8,857
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	1,582,346	146,912
Հաշվեգրված տոկոսներ	43,238	1,506
Ընդամենը ներդրումներ	1,649,612	171,309

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Չգնանշվող վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը չափվում են իրական արժեքով՝ օգտագործելով գնահատման տեխնիկա, հիմնված տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի զեղչատոկոս:

Բոլոր չգնանշված վաճառքի համար մատչելի բաժնեմասային արժեթղթերը գրանցված են ինքնարժեքով, քանի որ իրական արժեքը չի կարող արժանահավատորեն գնահատվել: Այս ներդրումների համար չկա գնանշվող շուկա, և Բանկը նախատեսում է դրանք պահել երկար ժամկետով:

Վաճառքի համար մատչելի արժեթղթերն ըստ տոկոսադրույքների և ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	(%)	Ժամկետ	(%)	Ժամկետ
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	7.5-10.59	2018-2022	9.50-10.59%	2017-2019

2017թ. դեկտեմբերի 31-ի վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը 15,258,125 հազար դրամ իրական արժեքով (2016թ.՝ 14,178,041 հազար դրամ) վաճառվել են երրորդ անձանց ռեպո համաձայնագրերով՝ 1 ամիսը չգերազանցող ժամանակահատվածներով: Դրանք վերադասակարգվել են որպես ռեպո համաձայնագրերով գրավադրված արժեթղթեր հաշվապահական հաշվեկշռում՝ առանձին տողում:

19 Հիմնական միջոցներ

	Հող և շենքեր	Սարքա-վորումներ	Փոխա-դրա-միջոցներ	Համա-կարգ-չային տեխնիկա	Այլ հիմնական միջոցներ	Վարձ. հիմն. միջ.գծով կապ.ներդ.	Ընդամենը
Սկզբնական կամ վերագնահատված արժեք							
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	7,578,510	540,872	223,553	3,282,276	1,205,116	172,377	13,002,704
Ավելացում	778,920	30,351	8,017	201,281	64,521	66,829	1,149,919
Օտարում	-	(1,359)	-	(1,022)	(4,639)	(35,031)	(42,051)
Վերադասակարգում	-	141	-	-	(141)	-	-
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,357,430	570,005	231,570	3,482,535	1,264,857	204,175	14,110,572
Ավելացում	31,783	42,783	73,398	361,485	319,557	96,861	925,867
Օտարում	(221,941)	(130)	(87,949)	-	(632)	-	(310,652)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,167,272	612,658	217,019	3,844,020	1,583,782	301,036	14,725,787
Կուտակված մաշվածություն							
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	580,601	429,486	153,103	2,129,651	733,117	23,829	4,049,787
Տարվա ծախս	291,826	43,388	33,241	287,730	147,450	5,233	808,868
Օտարում	-	(726)	-	(376)	(3,977)	-	(5,079)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	872,427	472,148	186,344	2,417,005	876,590	29,062	4,853,576
Տարվա ծախս	301,400	30,751	22,608	322,137	136,185	6,778	819,859
Օտարում	(3,402)	(111)	(82,531)	-	-	-	(86,044)
Ճշգրտում	-	-	-	422	(422)	-	-
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,170,425	502,788	126,421	2,739,564	1,012,353	35,840	5,587,391
Հաշվեկշռային արժեք							
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,485,003	97,857	45,226	1,065,530	388,267	175,113	9,256,996
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,996,847	109,870	90,598	1,104,456	571,429	265,196	9,138,396

Ակտիվների վերագնահատում

Բանկի սեփականությունը հանդիսացող շենքերի վերագնահատումը կատարվել է 31 դեկտեմբերի 2013թ. դրությամբ անկախ գնահատող կազմակերպության կողմից՝ կիրառելով համեմատական և եկամտային մեթոդները, որի արդյունքում առաջացել է վերագնահատման աճ 589,278 հազար դրամ գումարով: Իրական արժեքով Բանկի սեփականությունը հանդիսացող շենքի գնահատման համար ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Բանկի ղեկավարության գնահատմամբ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի վերագնահատված արժեքն էականորեն չի տարբերվում դրանց շուկայական արժեքից:

Եթե շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, հաշվեկշռային արժեքը 31 դեկտեմբեր 2017թ. դրությամբ կկազմեր 6,112,776 հազար դրամ (2016թ.՝ 6,599,017 հազար դրամ):

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 128,232 հազար դրամ (2016թ.՝ 118,103 հազար դրամ):

Ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցների գումարը կազմում է 751,911 հազար դրամ (2016թ.՝ 475,177 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների (2016թ.՝ նույնպես):

Պայմանագրային պարտավորություններ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի պայմանագրային պարտավորություններ 2,600,583 հազար դրամ (2016թ.՝ 94,095 հազար դրամ) Բանկի նոր գլխամասային շենքի գնման գծով (Ծանոթ. 22):

20 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Արտոնագրեր	Համակարգչային ծրագրեր	Կապիտալ ներդրումներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	1,827,089	257,253	4,847	75,239	2,164,428
Ավելացում	518,140	6,771	-	60,567	585,478
Օտարում	(6.652)	-	-	-	(6.652)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,338,577	264,024	4,847	135,806	2,743,254
Ավելացում	435,770	5,000	-	-	440,770
Օտարում	(4,174)	-	-	-	(4,174)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,770,173	269,024	4,847	135,806	3,179,850
Կուտակված ամորտիզացիա					
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	134,985	12,205	-	158	147,348
Մասհանումներ	160,565	15,730	-	3,336	179,631
Օտարում	(6,652)	-	-	-	(6,652)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	288,898	27,935	-	3,494	320,327

Հազար ՀՀ դրամ	Արտոնագրեր	Համակարգչային ծրագրեր	Կապիտալ ներդրումներ	Այլ	Ընդամենը
Մասհանումներ	141,565	13,897	-	5,636	161,098
Օտարում	(4,174)	-	-	-	(4,174)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	426,289	41,832	-	9,130	477,251
Հաշվեկշիռային արժեք					
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,049,679	236,089	4,847	132,312	2,422,927
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,343,884	227,192	4,847	126,676	2,702,599

Ոչ նյութական ակտիվների սահմանափակումներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների (2016թ.՝ նույնպես):

Պայմանագրային պարտավորություններ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ ոչ նյութական ակտիվների գնման գծով (2016թ.՝ 41,625 հազար դրամ արտոնագրերի գնման գծով):

21 Բռնագանձված ակտիվներ

Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների տնօրինման արդյունքում տարվա ընթացքում ձեռք բերված ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անշարժ գույք	3,594,959	3,764,206
Այլ	121,522	758,141
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	3,716,481	4,522,347

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Բանկի քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Բանկը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

22 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	1,031,725	718,929
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	1,031,725	718,929
Կանխավճարներ	1,209,767	442,592
Հաշվարկներ աշխատակիցների հետ	30	54
Նկարներ	47,050	47,050
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	22,648	29,103
Թանկարժեք մետաղներ	115,135	44,555
Պահեստ	389,360	377,026
Այլ	89,501	108,187
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	1,873,491	1,048,567
Ընդամենը այլ ակտիվներ	2,905,216	1,767,496

Կանխավճարներ տողում ներառված են Բանկի կողմից կատարված վճարումը նոր գլխամասային շենքի ձեռք բերման համար 650, 298 հազար դրամ գումարի չափով:

23 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	38,585,043	28,814,598
Ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	21,924,589	17,671,899
Ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	938,152	1,064,279
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	708,760	1,329,584
Վարկեր ռեպո համաձայնագրերով	13,847,877	33,947,096
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	76,004,421	82,827,456

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից վարկերը 21,620,085 հազար դրամ գումարով (56%) ստացված են մեկ ֆինանսական կազմակերպությունից (2016թ.՝ 12,627,202 հազար դրամ գումարով (44%) ստացված են մեկ ֆինանսական կազմակերպությունից):

Ֆինանսական կազմակերպություններից ավանդները և վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքները կազմել են 8.82% (2016թ.՝ 8.92%), ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար՝ 3.03% (2016թ.՝ 7.89%):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2016թ.՝ նույնպես):

24 Առևտրային ֆինանսական պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռեպո համաձայնագրերով վերագրավադրված արժեթղթեր (Ծանոթ. 17)	24,556,156	21,489,072
Ընդամենը առևտրային ֆինանսական պարտավորություններ	24,556,156	21,489,072

25 Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	89,421	365,540
Ստացված վարկեր	603,531	795,855
Ընդամենը պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	692,952	1,161,395

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորություններում ներառված է Համաշխարհային բանկի «Գյուղացիական բարեփոխումների» ծրագրի շրջանակներում և Գյուղացիական ֆինանսավորման կառույց ԾԻԳ-ից ներգրավված 462,856 հազար դրամ վարկը (2016թ.՝ 628,296 հազար դրամ), «Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ից ներգրավված 21,184 հազար դրամ վարկը (2016թ.՝ 28,739 հազար դրամ), ինչպես նաև Գերմանա-Հայկական հիմնադրամի կողմից «Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման» ծրագրի շրջանակում ստացված վարկերը 69,241 հազար դրամ գումարով (2016թ.՝ 86,605 հազար դրամ):

26 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	66,460,012	36,203,765
Ժամկետային ավանդներ	50,957,236	26,612,345
	117,417,248	62,816,110
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	22,614,470	15,002,349
Ժամկետային ավանդներ	258,935,430	182,302,603
	281,549,900	197,304,952

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	66,460,012	36,203,765
Ժամկետային ավանդներ	50,957,236	26,612,345
	117,417,248	62,816,110
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	22,614,470	15,002,349
Ժամկետային ավանդներ	258,935,430	182,302,603
	281,549,900	197,304,952
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	398,967,148	260,121,062

Հաճախորդների ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույք:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական/ֆիզիկական անձանց ավանդներում ներառված են ժամկետային ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված ակրեդետիվների և երաշխիքների գծով 22,671,881 հազար դրամ գումարով (2016թ.՝ 17,911,300 հազար դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ամենամեծ տաս հաճախորդների միջոցների ընդհանուր գումարը (ներառյալ կապակցված անձինք, տես ծանոթ. 31) կազմում է 118,316,969 հազար դրամ (2016թ.՝ 62,124,642 հազար դրամ) կամ հաճախորդներից ներգրաված միջոցների (բացառությամբ ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների) ընդհանուր գումարի 29.7% (2016թ.՝ 23.9%):

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով արդյունավետ տոկոսադրույքները տատանվում են 0.08-16.04% (2016թ.՝ 3.00-19.50%), ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով պարտավորությունների համար 0.08-15.47% (2016թ.՝ 1.51-10.76%):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2016թ.՝ նույնպես):

27 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ընթացիկ պարտատոմսեր	8,967,294	-
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	8,967,294	-

2017թ. ընթացքում թողարկվել են 10,000 հազար դրամ անվանական արժեքով 10,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսեր, տարեկան 14.0% տոկոսադրույքով և մինչև 2019թ. մարման ժամկետով:

2017թ. ընթացքում թողարկվել են 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով 10,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսեր, տարեկան 8.5% տոկոսադրույքով և մինչև 2019թ. մարման ժամկետով:

2017թ. ընթացքում թողարկվել են 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով 172,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսեր, տարեկան 7.5% տոկոսադրույքով և մինչև 2020թ. մարման ժամկետով:

Բանկի պարտատոմսերը ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիաե ֆոնդային բորսայում:

Տարվա ընթացքում Բանկը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ պարտատոմս:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

28 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վճարվելիք գումարներ	456,041	338,017
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	284,617	214,868
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	740,658	552,885
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	328,598	302,522
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	587	373
Ակտիվներին վերաբերող շնորհներ	1,709	1,791
Գործառնական այլ պարտավորություններ	43	37
Այլ	129,881	51,673
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	460,818	356,396
Ընդամենը այլ պարտավորություններ	1,201,476	909,281

Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	1,791	1,873
Եկամտի ճանաչում	(82)	(82)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,709	1,791

29 Սեփական կապիտալ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 31,374,560 հազար դրամ (2016թ.՝ 31,374,560 հազար դրամ):

Համաձայն Բանկի կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 41,120 սովորական բաժնետոմսերից յուրաքանչյուրը 763 հազար դրամ անվանական արժեքներով:

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի միակ բաժնետերն է Վիտալի Գրիգորյանցը:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել: Սովորական բաժնետոմսերի բաժնետերը իրավունք ունի ստանալու շահաբաժին և մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում:

2017թ. և 2016թ. ընթացքում Բանկը չի ավելացրել բաժնետիրական կապիտալը:

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս, քան բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

30 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են՝

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկային գծերի չօգտագործված մաս	20,719,108	19,944,553
Ակրեդիտիվներ	1,279,062	156,016
Տրամադրված երաշխիքներ	35,968,014	32,179,463
Չօգտագործված օվերդրաֆտներ	330,148	863,885
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	58,296,332	53,143,917

Վարկային պարտավորությունների, երաշխիքների և այլ ֆինանսական միջոցների պարտքային ռիսկի առավելագույն չափը լավագույնս ներկայացված է այս պարտավորությունների և պայմանական պարտավորությունների ընդհանուր գումարով:

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով՝ Բանկը որպես վարձակալ

Բանկն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	41,412	24,248
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	41,412	24,248

Պայմանագրային պարտավորությունների

Պայմանագրային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթ. 19, 20-ում:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն իրականացրել է աշխատակիցների ազնվության, շինությունների, փոխադրումների, կեղծված չեկերի, կեղծ արժեթղթերի և արժույթի, գրասենյակային պարունակության, համակարգչային հանցագործությունների, տնօրենի և պաշտոնատար անձանց պատասխանատվության և մասնագիտական պատասխանատվության ապահովագրություն:

Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

31 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն

ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Բանկի վերջնական վերահսկող է հանդիսանում ՌԴ քաղաքացի գործարար Վիտալի Սարգսի Գրիգորյանցը:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2017		2016	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	-	2,936,745	-	1,398,000
Տարվա ընթացքում տրամադրված	-	12,555,692	-	13,718,346
Տարվա ընթացքում մարված	-	(11,616,416)	-	(12,179,601)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	3,876,021	-	2,936,745
Հաճախորդներին տրված վարկեր				
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն	-	456,661	22,833	1,269,290
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	2,099,780	8,357,320	365,572	1,098,865
Տարվա ընթացքում մարված վարկեր	(1,344,150)	(4,942,495)	(388,405)	(1,911,494)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	755,630	3,871,486	-	456,661
Արժեզրկումից պահուստ	(12,090)	(61,944)	-	(7,307)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	743,540	3,809,542	-	449,354
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	801,556	771,411	17,763	639,418
Տարվա ընթացքում ստացված	31,215,913	26,730,782	20,191,368	15,525,305
Տարվա ընթացքում վճարված	(26,180,150)	(24,038,076)	(19,407,575)	(15,393,312)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,837,319	3,464,117	801,556	771,411
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ	25,131	298,647	916	226,739
Տոկոսային ծախսեր	247,209	596,047	(33,316)	(359,054)
Արժեզրկման ծախս/(հակադարձում)	12,090	54,637	(229)	(5,386)

Տնօրեններին և ղեկավար անձնակազմի այլ անդամներին (և ընտանիքի անդամներին) տարվա ընթացքում տրամադրված վարկերն ունեն 1-ից 15 տարի մարման ժամկետ և դրանց տոկոսադրույքը կազմում է 7-24% (2016թ.՝ 7-24%, 1-ից 15 տարի): Տնօրեններին տրամադրված վարկերը ապահովված են ոսկով, անշարժ գույքով, դրամական միջոցներով և այլ գույքով:

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Աշխատավարձ և պարգևատրումներ	313,601	319,417
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	313,601	319,417

32 Իրական արժեքի չափումը

Բանկի Խորհուրդը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ չգնանշվող առևտրային և վաճառքի համար մատչելի արժեթղթերը, չգնանշվող ածանցյալ ֆինանսական գործիքները, այնպես էլ ոչ-պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես, օրինակ, վաճառքի համար պահվող ակտիվները:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, ինչպես օրինակ՝ անշարժ գույքի և բռնագանձված գույքի, գնահատման համար: Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Բանկի Խորհրդի կողմից:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Բանկի ղեկավարությունը վերլուծում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք պետք է վերագնահատվեն համաձայն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ, համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Բանկի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ, որոշելու համար, թե հիմնավորված է արդյոք տվյալ փոփոխությունը:

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1՝ նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2՝ Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3՝ ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

32.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է

դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	115,576,209	-	-	115,576,209
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	14,036,722	-	-	14,036,722
Հաճախորդներին տրված վարկեր	-	382,547,013	-	-	382,547,013
Այլ ֆինանսական ակտիվներ	-	1,031,725	-	-	1,031,725
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	76,004,421	-	-	76,004,421
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	692,952	-	-	692,952
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	398,967,148	-	-	398,967,148
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	8,967,294	-	-	8,967,294
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	740,658	-	-	740,658

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	63,215,155	-	-	63,215,155
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	8,532,277	-	-	8,532,277
Հաճախորդներին տրված վարկեր	-	275,926,637	-	-	275,926,637
Այլ ֆինանսական ակտիվներ	-	718,929	-	-	718,929
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	82,827,456	-	-	82,827,456
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	1,161,395	-	-	1,161,395
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	260,121,062	-	-	260,121,062
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	552,885	-	-	552,885

Պահանջներ և պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են՝ ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքերը կախված են վարկառուի վարկային ռիսկից և տատանվում են 5.0% մինչև 24% տարեկան (2016թ.՝ 6.0% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հաճախորդների ավանդների իրական արժեքը գնահատվում է՝ օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ավանդների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

32.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական ակտիվներ				
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	1,625,584	-	1,625,584
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	15,258,125	-	15,258,125
Ընդամենը	-	16,883,709	-	16,883,709
Ֆինանսական պարտավորություններ				
Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ	-	24,556,156	-	24,556,156
Ընդամենը	-	24,556,156	-	24,556,156
Զուտ իրական արժեք	-	(7,672,447)	-	(7,672,447)

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	22,848	-	22,848
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	148,418	-	148,418
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	35,667,112	-	35,667,112
Ընդամենը	-	35,838,378	-	35,838,378
Ֆինանսական պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	42,456	-	42,456
Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ	-	21,489,072	-	21,489,072
Ընդամենը	-	21,531,528	-	21,531,528
Զուտ իրական արժեք	-	14,306,850	-	14,306,850

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Չգնանշվող բաժնետոմսեր

Բանկի ներդրումների իրական արժեքը չգնանշվող ներդրումներում չի կարող չափվել և հետևաբար դուրս է մնում այս բացահայտումից: Սեփական կապիտալի այս ներդրումի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տես Ծանոթ. 18-ը:

32.3 Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափումը

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Շենքեր	-	-	*8,167,272*	*8,167,272*
Զուտ իրական արժեք	-	-	8,167,272	8,167,272

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Շենքեր	-	-	*8,357,430*	*8,357,430*
Զուտ իրական արժեք	-	-	8,357,430	8,357,430

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-րդում

3-րդ մակարդակում դասակարգված Բանկի ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա:

Այս մակարդակում ֆինանսական ակտիվները սկզբից մինչև վերջ կարելի է համաձայնեցնել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ	2017
	Հիմնական միջոցներ
Ոչ ֆինանսական ակտիվներ	
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	8,357,430
Առք	31,783
Օտարում	(221,941)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,167,272
Զուտ իրական արժեք	8,167,272

Հազար ՀՀ դրամ	2016
	Հիմնական միջոցներ
Ոչ ֆինանսական ակտիվներ	
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	7,578,510
Առք	778,920
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,357,430
Զուտ իրական արժեք	8,357,430

Բանկի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Գնահատումը իրականացվել է՝ կիրառելով համեմատական և եկամտային մեթոդները, որոնք արտացոլում են նմանատիպ գույքերի վերջին շուկայական գործարքների գները և ներառում է վերոնշյալ հողին հատուկ գործոնների ճշգրտումներ, այդ թվում հողամասի չափը, գտնվելու վայրը, գրավադրումը և ներկայիս օգտագործումը և այլն:

Շենքերը վերագնահատվել են 2013թ.:

Նշանակալի չդիտարկվող ներդրումը՝ վերոնշյալ հողին հատուկ գործոնների ճշգրտումն է: Այս ճշգրտումների ծավալն ու ուղղությունը կախված է դիտարկվող շուկայում նմանատիպ գույքի գործարքների քանակից և բնույթից, որոնք կիրառվում են որպես գնահատման մեկնարկային կետ: Չնայած նրան, որ այս ելակետային տվյալը սուբյեկտիվ դատողություն է, ղեկավարությունը գտնում է, որ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունները նյութապես ազդեցություն չեն ունենա ընդհանուր գնահատման վրա:

33 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր (Ծանոթ. 15, 17)	24,972,103	-	24,972,103	(24,972,103)	-	-
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ (Ծանոթ. 23)	(13,847,877)	-	(13,847,877)	15,258,125	-	1,410,248

Հազար ՀՀ դրամ

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր (Ծանոթ. 17)	22,150,334	-	22,150,334	(21,489,072)	-	661,262
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ (Ծանոթ. 23)	(33,947,096)	-	(33,947,096)	35,667,112	-	1,720,016

34 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է հիմնական ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 35.3-ում.

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ընթացիկ	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ընթացիկ	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	115,576,209	-	115,576,209	-	-	-	115,576,209
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	8,462,159	2,058,935	10,521,094	3,515,628	-	3,515,628	14,036,722
Հաճախորդներին տրված վարկեր	67,230,983	68,557,836	135,788,819	169,194,795	77,563,399	246,758,194	382,547,013
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	527,338	527,338	1,098,246	24,028	1,122,274	1,649,612
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	15,258,125	-	15,258,125	-	-	-	15,258,125
Այլ ֆինանսական ակտիվներ	1,031,725	-	1,031,725	-	-	-	1,031,725
	207,559,201	71,144,109	278,703,310	173,808,669	77,587,427	251,396,096	530,099,406

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Պարտավորություններ							
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	29,109,967	4,059,734	33,169,701	22,569,720	20,265,000	42,834,720	76,004,421
Առևտրային ֆինանսական պարտավորություններ	24,556,156	-	24,556,156	-	-	-	24,556,156
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	692,952	-	692,952	-	-	-	692,952
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	112,531,153	193,355,576	305,886,729	91,305,186	1,775,233	93,080,419	398,967,148
Թողարկված պարտքային արժեթղթեր	10,828	45,846	56,674	8,910,620	-	8,910,620	8,967,294
Այլ ֆինանսական պարտավորություններ	740,658	-	740,658	-	-	-	740,658
	167,641,714	197,461,156	365,102,870	122,785,526	22,040,233	144,825,759	509,928,629
Զուտ Դիրք	39,917,487	(126,317,047)	(86,399,560)	51,023,143	55,547,194	106,570,337	20,170,777
Կուտակված ճեղքվածք	39,917,487	(86,399,560)		(35,376,417)	20,170,777		

Հազար ՀՀ դրամ

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	63,215,155	-	63,215,155	-	-	-	63,215,155
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,503,908	1,011,762	5,515,670	948,280	2,068,327	3,016,607	8,532,277
Աճանցյալ ֆինանսական ակտիվներ	22,848	-	22,848	-	-	-	22,848
Հաճախորդներին տրված վարկեր	77,828,200	63,581,541	141,409,741	53,144,367	81,372,529	134,516,896	275,926,637
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	49,900	49,900	98,518	22,891	121,409	171,309
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	35,667,112	-	35,667,112	-	-	-	35,667,112
Այլ ֆինանսական ակտիվներ	718,929	-	718,929	-	-	-	718,929
	181,956,152	64,643,203	246,599,355	54,191,165	83,463,747	137,654,912	384,254,267

Հազար ՀՀ դրամ

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահամադրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահամադրագումար	Ընդամենը
Պարտավորություններ							
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	42,456	-	42,456	-	-	-	42,456
Պարտավորություններ ֆինան-սական կազմակերպությունների նկատմամբ	44,772,358	14,187,579	58,959,937	18,228,935	5,638,584	23,867,519	82,827,456
Առևտրային ֆինանսական պարտավորություններ	21,489,072	-	21,489,072	-	-	-	21,489,072
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	374,240	240,846	615,086	213,004	333,305	546,309	1,161,395
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	69,083,636	146,237,392	215,321,028	43,198,955	1,601,079	44,800,034	260,121,062
Այլ ֆինանսական պարտավորություններ	552,885	-	552,885	-	-	-	552,885
	136,314,647	160,665,817	296,980,464	61,640,894	7,572,968	69,213,862	366,194,326
Զուտ Դիրք	45,641,505	(96,022,614)	(50,381,109)	(7,449,729)	75,890,779	68,441,050	18,059,941
Կուտակված ճեղքվածք	45,641,505	(50,381,109)		(57,830,838)	18,059,941		

35 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն, և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Բանկի առաքելությանը, հիմնական ու միջանկյալ նպատակներին համահունչ և ուղղված է Բանկի ֆինանսական վիճակի բարելավմանը և հեղինակության բարձրացմանը:

Բանկում իրականացվող ռիսկերի կառավարման քաղաքականության հիմնական նպատակներն են բացահայտել, գնահատել և կառավարելի դարձնել բոլոր այն հնարավոր ռիսկերը, որոնք անմիջականորեն առնչվում են Բանկի գործունեության հետ, օժանդակել Բանկի ղեկավարությանը կայացնել հնարավորինս օպտիմալ որոշումներ, նպաստել Բանկի գործունեության ռազմավարական և մարտավարական իրատեսական պլանավորմանը, հաշվի առնելով ռիսկ/եկամտաբերություն ընդունելի հարաբերակցության սկզբունքները՝ ստանձնել կառավարելի ռիսկեր, սահմանել ռեսուրսների տեղաբաշխման նախընտրելի ոլորտները, ապահովել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվների, ինչպես նաև Բանկի կողմից սահմանված ներբանկային նորմատիվների պահպանումը:

Բանկում իրականացվող ռիսկերի կառավարման քաղաքականությունը բխում է հետևյալ հիմնական սկզբունքներից.

- ✓ Ռիսկերի կառավարումը պետք է լինի կանխարգելող և հիմնավորված.
- ✓ Ռիսկերը պետք է հնարավորինս ամբողջությամբ բացահայտվեն, օբյեկտիվորեն գնահատվեն և արդյունավետորեն կառավարվեն.

- ✓ Բացահայտված ռիսկերին արձագանքելիս ռիսկերի կառավարման/հսկողության ծախսերը և ան¬ցանկալի դեպքերի ի հայտ գալու հետևանքները պետք է կշռվեն ռիսկի նվազեցման արդյունքում ակնկալվող օգուտների հետ.
- ✓ Ռիսկերի կառավարումը կարող է ներառել այնպիսի մոտեցումներ, ինչպիսիք են՝ ռիսկերի նվազեցմանն ուղղված ընթացակարգերը, ռիսկի փոխանցումը երրորդ անձանց, օրինակ՝ ապահովագրության միջոցով, և ռիսկերի ընդունումը, երբ դրանց նվազեցման ծախսերը գերազանցում են գնահատված կորուստները կամ դրանց նվազեցումը գործնականորեն անհնար է: Այս նպատակով սահմանվում է ռիսկի ընդունելի մակարդակը:

Բանկի ռիսկերի բացահայտումը, չափումը, վերահսկումը և մոնիտորինգը կրում են պարբերական և շարունակական բնույթ: Բանկում իրականացվող ռիսկերի կառավարման քաղաքականությունը թույլ է տալիս հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստների բացառման կամ դրանց նվազագույնի հասցնելու միջոցով արդյունավետ կառավարել Բանկի և Բանկի հաճախորդների ակտիվների և պարտավորությունների հետ առնչվող ռիսկերը՝ ապահովելով շահութաբերության, իրացվելիության և վճարունակության ընդունելի մակարդակ:

Բանկում ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով նկարագրված բոլոր բիզնես գործընթացների, վերջիններիս գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի միջոցով:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Բանկում պատշաճ ռիսկերի կառավարման համակարգի ձևավորման, կենսագործունեության և արդյունավետության համար պատասխանատու են Բանկի խորհուրդը, Վարչությունն ու Վարչության նախագահը, Բանկի ղեկավարները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ներքին իրավական ակտերով սահմանված իրենց պարտականությունների շրջանակներում:

Ռիսկերի կառավարման հանձնաժողով և Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Բանկում ռիսկերի կառավարման քաղաքականության իրականացման համար պատասխանատու են Բանկի Ռիսկերի կառավարման հանձնաժողովը և Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից շարունակաբար վերահսկվում են Բանկի ստանձնած ռիսկերի մակարդակները և դրանց գծով նախանշված սահմանաչափերի պահպանումը, տարբեր սթրես-թեստերի իրականացման միջոցով գնահատվում են հնարավոր ռիսկերի ազդեցությունը Բանկի գործունեության վրա:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանման (նաև այլ շահագրգիռ ստորաբաժանումների) կողմից ներկայացվող Բանկի գործունեությանն առնչվող ռիսկերի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծություններն ու առաջարկությունները քննարկվում են Ռիսկերի կառավարման հանձնաժողովի նիստերին և ներկայացվում են Բանկի վարչությանը՝ համապատասխան որոշում ընդունելու նպատակով:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի վարչության կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը և արդյունավետությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի վարչության անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Բանկի խորհուրդ:

Ռիսկերի բնորոշում և գնահատում

Կախված տարատեսակ գործոններից՝ Բանկը նպատակահարմար է գտնում բանկային ռիսկերը բաժանել արտաքին և ներքին ռիսկերի:

Արտաքին ռիսկերն են՝ երկրի, գնային, մրցակցային և ֆորսմաժորային ռիսկերը:

Ներքին ռիսկերն են՝ վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային, գործառնական, անձնակազմի և փողերի լվացման ռիսկերը:

Երկրի ռիսկ

Երկրի ռիսկը Բանկը կառավարում է՝ օգտվելով միջազգային վարկանիշային գործակալությունների (Moody's, S&P, Fitch) կողմից միջազգային բանկերին և կազմակերպություններին շնորհված վարկանիշներից: Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը կատարում է Բանկի կոնտրագենտ արտասահմանյան բանկերի վարկանիշների պարբերական մոնիտորինգ:

Գնային ռիսկ

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում՝ ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում, հնարավոր կորուստների գնահատում ամսական կտրվածքով կիրառվող սթրես թեստերի միջոցով, ֆինանսական գործիքների գծով լիմիտների (ըստ արժեթղթերով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի) սահմանում:

Մրցակցային ռիսկ

Մրցակցային ռիսկի կառավարումը Բանկում իրականացվում է բիզնես ստորաբաժանումների և Մարքեթինգային հետազոտությունների բաժնի կողմից, պարբերաբար պարբերաբար իրականացվող Բանկի և այլ բանկերի կողմից առաջարկվող ծառայությունների տեսականու և պայմանների համեմատության միջոցով:

Ֆորսմաժորային ռիսկ

ISO 27001-2005-ի պահանջներին համապատասխան Բանկն ունի սերվերային պահուստային կենտրոն: Կենտրոնի տեղակայվածությունը Բանկի գլխավոր գրասենյակից դուրս, հեռու տարածքում, թույլ կտա ապահովել Բանկի գործունեությունը ֆորսմաժորային իրավիճակների ժամանակ:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկերի կառավարման գլխավոր խնդիրը Բանկի համար հանդիսանում է վարկային ռիսկերի ժամանակին բացահայտումը, գնահատումը և դրանց նվազեցման ուղղությամբ համապատասխան քայլերի իրականացումը:

Բանկում վարկային ռիսկը գնահատվում է ինչպես յուրաքանչյուր վարկառուի, այնպես էլ ամբողջ վարկային պորտֆելի գծով: Բանկի կողմից մշակված համապատասխան մեթոդաբանության համաձայն՝ նախքան վարկի տրամադրումը, գնահատվում է պոտենցիալ վարկառուի վարկունակությունը: Վարկային ռիսկի կանխարգելման տեսանկյունից, վարկավորման ժամանակ էապես կարևորվում է այնպիսի սկզբունքների պահպանումը, ինչպիսիք են վարկի ապահովվածությունն ու նպատակայնությունը: Վարկի տրամադրումից հետո, վարկային պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում, Բանկի կողմից իրականացվում է վարկի մոնիթորինգ՝ վարկառուի վճարունակությունը և վարկի ապահովվածությունը պարբերաբար գնահատելու և հնարավոր վարկային ռիսկի զսպման ուղղությամբ համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով: Պարբերաբար վերլուծության է ենթարկվում նաև Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը ըստ տնտեսության ճյուղերի, հաճախորդների և վարկատեսակների՝ պորտֆելի դիվերսիֆիկացիան և որակը ապահովելու նպատակով:

Վարկային ռիսկի զսպման գործում Բանկում խիստ կարևորվում է նաև Վարկային կոմիտեի գործունեությունը: Վարկային կոմիտեն հանդիսանում է Բանկի վարկային քաղաքականությունն իրականացնող մարմին, որի նպատակն է Բանկի վարկային գործունեության կառավարումը և

որակյալ վարկային պորտֆելի ձևավորումը: Վարկային կոմիտեի հիմնական խնդիրն է կայացնել վարկային ռիսկ պարունակող գործարքների իրականացման և սպասարկման հետ կապված մասնագիտական կոլեգիալ արձանագրային կամ վերջնական որոշում:

Իրացվելիության ռիսկ

Բանկում իրացվելիության կառավարման նպատակն է՝ ստեղծել այնպիսի ֆինանսական կարողությունների ամբողջություն, որը հնարավորություն կտա առանց լուրջ հիմնախնդիրների բավարարելու բոլոր տեսակի կրեդիտորների, ավանդատուների և այլ հաճախորդների օրինական դրամական պահանջները, որոնք կարող են արտացոլված լինել Բանկի հաշվեկշռային և հետհաշվեկշռային հոդվածներում, ինչպես նաև այս ամենի հետ մեկտեղ ապահովել շահութաբերության հնարավոր առավելագույն մակարդակ:

Բանկում սահուն իրացվելիության ապահովման և իրացվելիության ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով իրականացվում է ակտիվների և պասիվների փոխհամաձայնեցված կառավարում՝ ապահովելով.

- ✓ բարձր իրացվելի ակտիվների բավարար առկայություն,
- ✓ ռեսուրսների կայունություն,
- ✓ ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքների ընդունելի սահմանաչափեր,
- ✓ արտաքին աղբյուրներից միջոցներ ներգրավելու հնարավորություններ:

Բանկում իրացվելիության կառավարման ճիշտ որորշումներ ընդունելու գործում հատկապես կարևորվում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը, որն իրականացվում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքների (GAP) հաշվարկման մոդելով՝ ակնթարթային (ցպահանջ) և կուտակային տարանջատումներով: Ակնթարթային իրացվելիությունը հաշվարկվում է ամենօրյա կտրվածքով՝ իրավիճակային ճիշտ որոշումներ կայացնելու նպատակով:

35.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ,որոնք կապված են վարկերի տրամադրման, ինչպես նաև ներդրումային գործունեության հետ: Ռիսկն առկա է նաև մի շարք հետհաշվեկշռային հոդվածներում: Վարկային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Բանկի Ռիսկերի կառավարման վարչության կողմից: Համապատասխան հաշվետվություններն ու վերլուծությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Վարչությանը:

Բանկում վարկային ռիսկը կառավարվում է համաձայն Բանկի վարկային քաղաքականության և ոլորտը կարգավորող այլ ներքին իրավական ակտերի: Ռիսկերի կառավարման վարչության կողմից կատարվում է վարկային պորտֆելի օրական կտրվածքով մոնիտորինգ, կառուցված շարքերի հիման վրա վարկային պորտֆելի դինամիկայի հաշվարկ և պորտֆելի որակի վերլուծություն ըստ պրոդուկտների ու մասնաճյուղերի, ինչի հիման վրա կատարվում են վարկային պորտֆելի որակական ցուցանիշների կանխատեսումներ: Ռիսկերի կառավարման վարչությունը իրականացնում է նաև որոշ վարկատեսակների վարկերի մոնիտորինգ հաստատված ընթացակարգերով, իսկ հարկ եղած դեպքում այլ վարկեր ելնելով վարկառուի վարկունակության վատթարացումից: Բանկի տրամադրվող վարկերը հաստատվում են նաև ռիսկերի վարչության կողմից ներքին իրավական ակտերի պահանջների համաձայն նվազեցնելով վարկային ռիսկը:

2017 և 2016թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

35.1.1 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2017 և 2016թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական սեգմենտների:

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ	ՏՀՀԿ	Ոչ ՏՀՀԿ Երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	112,041,633	1,759,814	1,774,762	115,576,209
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	8,840,016	1,278,210	3,918,496	14,036,722
Հաճախորդներին տրված վարկեր	337,208,043	776,099	44,562,871	382,547,013
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	1,634,442	15,170	-	1,649,612
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	15,258,125	-	-	15,258,125
Այլ ֆինանսական ակտիվներ	1,029,382	173	2,170	1,031,725
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	476,011,641	3,829,466	50,258,299	530,099,406
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	320,854,509	6,614,099	56,785,659	384,254,267

Ակտիվները դասակարգվում են՝ հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Արդյունաբերության ճյուղեր

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ տնտեսության ճյուղերի.

Հազար ՀՀ դրամ	Ֆինանսական կազմակերպություններ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Առևտուր	Սպառողական ոլորտ	Հիփոթեք	Այլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	115,576,209	-	-	-	-	-	-	-	115,576,209
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14,036,722	-	-	-	-	-	-	-	14,036,722
Հաճախորդներին տրված վարկեր	-	36,188,340	8,870,107	45,602,996	104,600,854	44,763,130	12,615,388	129,906,198	382,547,013
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	123,480	-	-	-	-	-	-	1,526,132	1,649,612
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	13,773,594	-	-	-	-	-	-	1,484,531	15,258,125
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	-	-	1,031,725	1,031,725
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	143,510,005	36,188,340	8,870,107	45,602,996	104,600,854	44,763,130	12,615,388	133,948,586	530,099,406
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	72,721,351	26,508,120	8,729,429	27,961,214	78,750,572	41,155,355	12,822,634	115,605,592	384,254,267

35.1.2 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Ըստ ապրանքների, արդյունաբերության ճյուղերի և երկրների վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում են եռամսյակային կտրվածքով Բանկի Խորհրդի կողմից:

Մեկ վարկառուի գծով վարկային ռիսկի չափը, ներառյալ բանկերը և ֆինանսական կազմակերպությունները, ավելի սահմանափակված է Բանկի Խորհրդի կողմից սահմանված լրացուցիչ սահմանաչափերով հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերի համար, ինչպես նաև օրական սահմանաչափերով կապված առևտրային գործարքների հետ, ինչպիսիք են արտարժութային ֆորվարդի պայմանագրերը: Ընթացիկ ռիսկերի ենթարկվելու սահմանաչափերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Վարկային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

Գրավ

Բանկը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված

դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Բանկը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի համար գրավի հիմնական տեսակներն են.

- ✓ Հիպոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը,
- ✓ Կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, պաշարները և դեբիտորական պարտքերը,
- ✓ Ֆինանսական գործիքները՝ պարտքային և բաժնային արժեղթղթերը:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են, ֆիզիկական անձանց գծով վերաձևակերպվող վարկային գծերը հիմնականում չեն ապահովվում: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկերից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անշարժ գույք	118,308,308	80,849,103
Ոսկի	12,044,262	13,663,933
Արժեթղթեր	24,056,087	32,075,100
Կազմակերպությունների երաշխիքներ	80,739,367	55,788,437
Մեքենաներ	176,238	60,918
Դրամական միջոցներ	22,671,881	48,383,619
Պաշարներ	7,093,332	4,895,941
Այլ գրավ	127,487,106	47,737,415
Ընդամենը վարկեր (համախառն)	392,576,581	283,454,466

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

Պարտքային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն պարտքային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և թղթային ակրեդիտիվները՝ Բանկի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս երրորդ անձանց գումարներ ստանալ բանկից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են

դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ և հետևաբար դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը:

Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը:

Այս դեպքում, հնարավոր կորուստների գումարը, որ Բանկը կարող է կրել, հավասար է չօգտագործված վարկային գծերի գումարին:

Սակայն հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Բանկը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

35.1.3 Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Բանկը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման անհատական գնահատում

Բանկը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի կամ փոխատվության համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ կրեդիտ քարտերը, հիպոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ՝ ինչ վարկերինը:

Չարժեզրկված, ոչ ժամկետանց վարկեր

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է չարժեզրկված և ոչ ժամկետանց վարկերի որակը՝ հիմնված կորուստների պատմության վրա:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր		
Արդյունաբերություն	1.0%	3.9%
Գյուղատնտեսություն	1.0%	3.9%
Շինարարություն	4.1%	3.9%
Առևտուր	2.1%	6.6%
Սպառողական	7.2%	6.6%
Հիփոթեքային	1.6%	3.2%
Այլ	1.0%	-

Պարտքային ռիսկ պարունակող այլ ֆինանսական ակտիվների գծով 2017 և 2016թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը կորուստներ չի ունեցել:

ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ: Ժամկետանց վարկերի հիմնական մասն արժեզրկված չէ:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է հետևյալ աղյուսակում.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչէ 30 օր	31 –ից 60 օր	61 –ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր					
Արդյունաբերություն	-	-	-	7,407,299	7,407,299
Գյուղատնտեսություն	14,341	6,974	7,447	18,849	47,611
Շինարարություն	-	34,126	-	1,418,233	1,452,359
Առևտուր	-	2,761	811	163,061	166,633
Սպառողական	747,176	213,831	204,191	2,255,345	3,420,543
Հիփոթեքային	64,157	49,020	49,109	82,218	244,504
Այլ	-	643	97	8,396,677	8,397,417
Ընդամենը	825,674	307,355	261,655	19,741,682	21,136,366

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչէ 30 օր	31 –ից 60 օր	61 –ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր					
Արդյունաբերություն	-	-	-	8,829,724	8,829,724
Գյուղատնտեսություն	-	-	-	351,830	351,830
Շինարարություն	123,448	-	-	1,618,024	1,741,472
Առևտուր	-	94,228	-	3,666,572	3,760,800
Սպառողական	1,432	163,891	-	1,907,149	2,072,472
Հիփոթեքային	-	-	-	314,723	314,723
Այլ	-	-	1,268,650	3,376,174	4,644,824
Ընդամենը	124,880	258,119	1,268,650	20,064,196	21,715,844

35.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Առևտրային պորտֆելի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է VaR մեթոդով, որը արտացոլում է ռիսկի փոփոխականների միջև կախվածությունը: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ:

35.2.1 Շուկայական ռիսկ՝ Առևտրային պորտֆել

Առևտրային նպատակով պահվող արժեթղթերի ռիսկը հաշվարկելու համար Բանկի կողմից կիրառվում են Բազել 2-ի տոկոսադրույքի ռիսկի հաշվարկման մեթոդները և մոտեցումները: Համաձայն դրանց տոկոսադրույքի ռիսկը սահմանվում է որպես տոկոսադրույքի հատուկ և ընդհանուր ռիսկերի հանրագումար:

Տոկոսադրույքի ռիսկի հաշվարկման նպատակով պարտքային արժեթղթերի դիրքերը հաշվարկվում են ներքոհիշյալ սկզբունքներով խմբավորված պարտքային արժեթղթերի նկատմամբ: Միևնույն դիրքերի հաշվարկին մասնակցող պարտքային արժեթղթերը պետք է.

- թողարկված լինեն միևնույն անձի կողմից, և
- արտահայտված լինեն միևնույն արժույթով, և
- ունենան միևնույն եկամտաբերությունը, կամ եկամտաբերությունների միջև տարբերությունը չպետք է գերազանցի 0.2 տոկոսային կետը:

Տոկոսադրույքի հատուկ ռիսկի հաշվարկ

Տոկոսադրույքի հատուկ ռիսկի հաշվարկման նպատակով իրականացվում է պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկ: Դիրքերի հաշվարկից հետո հաշվարկվում է պարտքային արժեթղթերի համախառն դիրքը: Համախառն դիրքի հաշվարկում պարտքային արժեթղթերը տարբերակված կշիռներով ընդգրկելու նպատակով դասակարգվում են հետևյալ դասերի՝

- պետական պարտքային արժեթղթեր
- հուսալի պարտքային արժեթղթեր
- այլ պարտքային արժեթղթեր:

Տոկոսադրույքի ընդհանուր ռիսկի հաշվարկ

Տոկոսադրույքի ընդհանուր ռիսկի հաշվարկման նպատակով նույնպես իրականացվում է պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկ: Ընդ որում, պարտքային արժեթղթերի համախառն զուտ դիրքը հաշվարկվում է որպես պարտքային արժեթղթերի երկար դիրքերի հանրագումարի և կարճ դիրքերի հանրագումարի (բացարձակ մեծությամբ) տարբերություն: Պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկից հետո պարտքային արժեթղթերի երկար կամ կարճ դիրքերը բաշխվում են մինչև մարումը ընկած ժամանակաշրջաններում՝ համապատասխան կշիռներով: Մինչև մարումը ընկած յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար պարտքային արժեթղթերի նվազագույն դիրքը տվյալ ժամանակաշրջանի բոլոր երկար դիրքերի հանրագումարի և կարճ դիրքերի հանրագումարի (բացարձակ մեծությամբ) նվազագույն մեծությունն է: Կախված ժամկետայնությունից բոլոր արժեթղթերը բաժանվում են ըստ համապատասխան գոտիների:

Տվյալ օրվա տոկոսադրույքի ընդհանուր ռիսկը ներքոհիշյալ մեծությունների հանրագումարն է.

- մինչև մարումն ընկած յուրաքանչյուր ժամանակաշրջանի նվազագույն դիրքի 10 տոկոս,
- առաջին գոտու նվազագույն դիրքի 40 տոկոս,
- երկրորդ գոտու նվազագույն դիրքի 30 տոկոս,
- երրորդ գոտու նվազագույն դիրքի 30 տոկոս,
- առաջին և երկրորդ գոտիների միջև նվազագույն դիրքի 40 տոկոս,
- երկրորդ և երրորդ գոտիների միջև նվազագույն դիրքի 40 տոկոս,
- առաջին և երրորդ գոտիների միջև նվազագույն դիրքի 150 տոկոս,
- պարտքային արժեթղթերի համախառն զուտ դիրքի 100 տոկոս:

Այն օրերին, երբ Բանկի հաշվեկշիռը փոփոխություններ չի կրել (ներառյալ՝ ոչ աշխատանքային օրերը), օրական տվյալների հաշվարկում ընդգրկվում են նախորդ օրվա տվյալները:

35.2.2 Շուկայական ռիսկ՝ Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Բանկում տոկոսադրույքի ռիսկի կառավարման խնդիրն է՝ պահպանել ակտիվների ու պարտավորությունների տոկոսադրույքների սպրեդի և զուտ տոկոսային մարժայի նպատակային մակարդակները: Տոկոսադրույքի ռիսկի զսպման նպատակով Բանկում գործում են ակտիվների և պարտավորությունների գնագոյացման (տոկոսադրույքների սահմանման) հատուկ մշակված մեխանիզմներ:

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման հիմքում ընկած է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և տոկոսադրույքի նկատմամբ զգայուն պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքի (GAP) հաշվարկման մոդելը, որը թույլ է տալիս գնահատել տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը Բանկի սպասվող զուտ տոկոսային եկամտի վրա: Բանկում տոկոսադրույքի ռիսկը գնահատվում է նաև դյուրացիայի մոդելով, որը ցույց է տալիս տոկոսադրույքի փոփոխության արդյունքում կապիտալի տնտեսական արժեքի փոփոխությունը՝ հաշվի առնելով ներգրավված պարտավորությունների և տեղաբաշխված ակտիվների ժամկետայնության անհամապատասխանությունը:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքեներում փոփոխությունների հետևանքով: Արտարժութային ռիսկը Բանկը կառավարում է՝ օգտվելով ստանդարտ և ՎաՌ մեթոդաբանություններից: Օրական կտրվածքով կատարվում է արտարժութային կուրսերի մոնիթորինգ, որի հիման վրա ամսվա վերջին գալիք ամսվա համար կատարվում է արտարժութային փոխաժեքների կանխատեսում: Վարչությունը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և

պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ) և կապիտալի վրա (կապված կապիտալի գործիքների իրական արժեքի փոփոխման հետ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա
ԱՄՆ դոլար	+5	(114,650)	(114,650)	+5	(484,077)	(484,077)
ԱՄՆ դոլար	-5	114,650	114,650	-5	484,077	484,077
Եվրո	+8	(11,281)	(11,281)	+8	(365,351)	(365,351)
Եվրո	-8	11,281	11,281	-8	365,351	365,351

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	2017			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	96,833,235	17,211,440	1,531,534	115,576,209
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,070,168	3,084,691	3,881,863	14,036,722
Հաճախորդներին տրված վարկեր	153,893,699	226,877,347	1,775,967	382,547,013
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	1,155,573	494,039	-	1,649,612
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	15,258,125	-	-	15,258,125
Այլ ֆինանսական ակտիվներ	967,995	62,928	802	1,031,725
Ընդամենը	275,178,795	247,730,445	7,190,166	530,099,406

Հազար ՀՀ դրամ	2017			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Պարտավորություններ				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	64,908,247	10,800,521	295,653	76,004,421
Առևտրային ֆինանսական պարտավորություններ	24,556,156	-	-	24,556,156
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	571,114	121,838	-	692,952
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	161,686,772	230,343,524	6,936,852	398,967,148
Թողարկված պարտքային արժեթղթեր	102,784	8,864,510	-	8,967,294
Այլ ֆինանսական պարտավորություններ	675,466	65,192	-	740,658
Ընդամենը	252,500,539	250,195,585	7,232,505	509,928,629
Զուտ դիրք 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,678,256	(2,465,140)	(42,339)	20,170,777
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2017թ. դեկտեմբերի 31-ին	21,390,294	36,203,168	702,870	58,296,332
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	200,540,677	179,999,326	3,691,416	384,231,419
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	175,122,902	187,751,265	3,277,703	366,151,870
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	(19,608)	-	-	(19,608)
Զուտ դիրք 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,398,167	(7,751,939)	413,713	18,059,941
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2016թ. դեկտեմբերի 31-ին	20,985,161	30,988,239	1,170,517	53,143,917

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը և Եվրոն, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

35.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և

վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:
Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 2%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 18%-ի չափով պահուստավորման գումար (տես ծանոթագրություն 14-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում՝ հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:
Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

	Աուդիտ չարված	
	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, %	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, %
Ն21- Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	25.27	17.10
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	132.18	120.47

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տես ծանոթագրություն 34-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական հոսքերը, ինչպես նշված է Բանկի կողմից ավանդների պահպանման պատմության մեջ:

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	43,112,888	8,699,426	15,691,735	30,453,111	97,957,160
Առևտրային ֆինանսական պարտավորություններ	24,556,156	-	-	-	24,556,156
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	89,866	16,208	318,091	328,140	752,305
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	112,052,008	203,184,796	107,309,388	3,714,885	426,261,077
Թողարկված պարտքային արժեթղթեր	598,265	8,480,504	-	-	9,078,769
Այլ ֆինանսական պարտավորություններ	740,658	-	-	-	740,658
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	181,149,841	220,380,934	123,319,214	34,496,136	559,346,125
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	1,333,544	20,713,006	31,861,591	4,388,191	58,296,332

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	44,772,358	14,187,579	18,228,935	22,071,039	99,259,911
Առևտրային ֆինանսական պարտավորություններ	21,489,072	-	-	-	21,489,072
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	374,492	322,818	588,618	775,921	2,061,849
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	85,658,468	297,962,861	91,346,851	7,544,864	482,513,044
Այլ ֆինանսական պարտավորություններ	552,885	-	-	-	552,885
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	152,847,275	312,473,258	110,164,404	30,391,824	605,876,761
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ					
Արտարժույթի սվոպ պայմանագրեր					
Ներհոսք	9,922,697	-	-	-	9,922,697
Արտահոսք	(9,959,875)	-	-	-	(9,959,875)
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	1,371,802	19,146,359	23,294,120	9,331,636	53,143,917

Բանկը ներգրավել է էական գումարներով միջոցներ բաժնետերերից և կապակցված կողմերից: Նշված գումարների ցանկացած էական վերադարձ կարող է բացասաբար անդրադառնալ Բանկի գործունեության վրա: Բանկի ղեկավարությունը վստահ է, որ ֆինանսավորման ներկայիս մակարդակը կպահպանվի տեսանելի ապագայում, և միջոցների վերադարձի դեպքում նա կտեղեկացվի նախապես, ինչը հնարավորություն կտա Բանկին ժամանակին իրացնելու իր իրացվելի միջոցները և վերադարձնելու պարտքը:

35.4 Գործառնական ռիսկ

Բանկում գործառնական ռիսկերի կառավարման նպատակով աշխատանքային գործընթացներում, գործառնություններում և գործառույթներում ներդրված են ներքին հսկողության համապատասխան մեխանիզմներ:

Գործառնական ռիսկերից հնարավորինս խուսափելու համար Բանկում խիստ կարևորվում է առանցքային աշխատատեղերում գործառնու¬թյուն¬ների իրականացումը առնվազն «երկու անձի» սկզբունքով, ընթացակարգերի գրավոր սահմանումը, աշխատակիցների իրավասությունների հստակ տարանջատումն ու աշխատանքային պարտականությունների գրավոր ֆիքսումը:

Վերջինիս պատշաճ ապահովումը հանդիսանում է նաև ISO 9001:2008 որակի կառավարման միջազգային ստանդարտների պահանջ, ուստի, Բանկի բոլոր կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կանոնակարգերում հստակեցված են ստորաբաժանման յուրաքանչյուր աշխատատեղի նկարագիրը, աշխատակցի իրավունքները, պարտականությունները և պարտավորությունները:

Գործառնական ռիսկի առաջացման տեսանկյունից խիստ կարևորվում է նաև տեղեկատվական տեխնոլոգիաների անխափան գործունեության պատշաճ ապահովումը:

Անձնակազմի ռիսկ

Անձնակազմի ռիսկը կառավարվում է Մարդկային ռեսուրսների կառավարման վարչության և Ուսումնական կենտրոնի կողմից: Մարդկային ռեսուրսների կառավարման վարչությունը պարբերաբար իրականացնում է ՀՀ բանկային համակարգում աշխատատեղերի և դրանց պայմանների ուսումնասիրություն, իսկ Ուսումնական կենտրոնը կազմակերպում է աշխատակիցների մասնագիտական գիտելիքների բարձրացմանն ուղված դասընթացներ՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ռեսուրսների հաշվին:

Փողերի լվացման ռիսկ

Փողերի լվացման ռիսկի կառավարումը իրականացվում է Ներքին դիտարկումների բաժնի կողմից, որը գործում է փողերի լվացման դեմ պայքարի օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

36 Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Բանկի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ընդամենը
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	28,814,598	-	28,814,598
Դրամային հոսքերից	*9,829,539*	*8,853,026*	*18,682,565*
Վճարումներ	(18,289,846)	(137,603)	(18,427,449)
Ստացված գումար	28,119,385	8,990,629	37,110,014
Ոչ դրամային հոսքերից	*(59,094)*	*114,268*	*55,174*
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	(59,094)	114,268	55,174
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	38,585,043	8,967,294	47,552,337

37 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները:

2017 և 2016թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

Հազար ՀՀ դրամ	Աուդիտ չարված	
	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական կապիտալ	30,170,167	28,212,125
Լրացուցիչ կապիտալ	2,620,145	1,978,584
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	32,790,312	30,190,709
Ռիսկով կշռված ակտիվներ	242,891,200	249,821,516
Կապիտալի համարժեքության նորմատիվ	13.50%	12.08%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

Նպատակ ունենալով խթանել բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, ինչպես նաև նպաստել բանկային համակարգի կողմից առավել արդյունավետ և մատչելի բանկային ծառայությունների մատուցմանը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը 2014թ. որոշում է կայացրել 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո բանկերի համար ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափը սահմանել 30,000,000 հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

38 Հետհաշվեկշռային իրադարձություններ

Հայաստանի հանրապետությունում քաղաքական իրավիճակը ներկայումս անկայուն է՝ կապված Հայաստանի բնակչության կողմից 2018թ. ապրիլի 13-ից իշխող քաղաքական կուսակցության դեմ իրականացվող մասսայական ցույցերով: Այս ցույցերն ընթանում են հանրային անհնազանդության կոչերով և ուղեկցվում են փողոցներ, կամուրջներ և այլ ենթակառուցվածքներ փակելով: Ղեկավարությունը գտնում է, որ այս գործընթացները որևէ նշանակալի ազդեցություն չունեն Բանկի գործունեության վրա և հետևաբար ղեկավարության գնահատմամբ չկա որևէ անհրաժեշտություն ճշգրտելու 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտվող տարվա Բանկի ֆինանսական հաշվետվությունները՝ կապված քաղաքական այս անկայունության հետ:

ABB
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ

Ելթահավելված 7
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ
Հավելված 7
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի
թիվ 205 Ն որոշման

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ձև թիվ 7)

ֆինանսական վիճակի մասին

«31»ՄԱՐՏԻ 2019թ.

ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ ԵՐԵՎԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 48

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (աուդիտված/չաուդիտված)
1	**Ակտիվներ**			
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	140,803,550	116,481,681
1.2	Թանկարժեք մետաղների բանկային հաշվառվող ձուլակտորներ		1,100,660	154,475
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	33,015,364	24,575,629
1.4	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	15	29,913,193	23,252,698
1.5	Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	16	462,046,678	438,149,015
1.6	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	17	11,345,328	12,605,687
1.7	Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	18	-	-
1.8	Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում	19		
1.9	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ			
1.10	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	15,369,470	14,818,635
1.11	Հետաձգված հարկային ակտիվներ	21, 3		
1.12	Այլ ակտիվներ	22	13,682,942	12,853,335
	Ընդամենը՝ ակտիվներ		707,277,185	642,891,155
2	**Պարտավորություններ**			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	23	92,387,195	88,172,094
2.2	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24	527,012,543	473,907,330
2.3	Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	25	10,924,318	11,462,171
